Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

8654

ԼՏԿՈՄԻ ԿՈՒԼՏ-ՊՐՈՊ ԲԱԺԻՆ

ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՊՐԱԿ Ա.

ՅԿՈՎ
Ժ-84

ՊԵՏՀՐԱՏ 1932 ԵՐԵՎԱՆ

24 SEP 2006

ЗКп4
Д-84

09 DEC 2009

ՀԿ(Բ)Կ. ԿՈՒԼՏ-ՊՐՈՊ ԲԱԺԻՆ

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԳՐՈՊԱԳԱՆԴԻՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊՐԱԿ Ա.

ՀՍՍՌ-Արա ՍՍՀ
36718-62

ԳԵՏՀՐԱՏ 1932 ԵՐԵՎԱՆ

25 APR 2013

8654

Գիտերատի տպարան
Գլավլ. № 7072(բ)
Հրատ. № 2024
Պատվ. № 276
Տիր. 3000

Թարգմ. Հ. ԼԵՎՈՆՅԱՆ Խմբագրեց՝ Հ. ԴԱՍՊԱՐՅԱՆ

Հանձնված է արտադրության 19/I 1932 թ. ՍՍ. Ֆ. Ա.
Ֆոտագրված է 1932 թ.

ԿՈՒՍԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՍԻՍՏԵՄԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԾԱՎԱԼՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Հնգամյակի յերրորդ, վճռական տարվա ծրագիրն ավարտում է ԽՍՀՄ-ի սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը: Նա մեզ համար ապահովում է սոցիալիզմի շենքի կառուցման ուղիով բայլշեվիկյան տեմպերով, ծավալուն ֆրոնտով առաջ շարժելու հնարավորությունները:

Մեր հետագա հաղթանակները սոցիալիստական շինարարության բոլոր ֆրոնտներում հենց մեղանից են կախված:

«Մեր ծրագրի ռեալ լինելը, դա կենդանի մարդիկն են, դա մենք ենք ձեզ հետ միասին, մեր աշխատանքի կոմքը, նոր ձևով աշխատելու մեր պատրաստականությունը, պլանները կատարելու մեր վճռականությունը»:

Ընկ. Ստալինի այս խոսքերը, վոր անմիջապես ուղղված եյին տնտեսավարներին արտադրական պլանի կատարման պայմանների առթիվ, միայն տնտեսավարներին չեն վերաբերում, միայն արտադրական պլանի հարցերին չեն վերաբերում: Նրանք անկասկած ավելի լայն նշանակություն ունեն, նրանք սոցիալիստական արշավի խոշորագույն ֆրոնտի բոլոր ճակատամասերի բոլոր խնդիրների կատարման պայմանները բայլշեվիկորեն ըմբռնելու ընդհանուր սկզբունքն են:

Այն պայմանների կոմպլեքսում, վորոնք ապահովում են մեր կուսակցության ղեկավար դերը սոցիալիստական շինարարության ծրագիրը կատարելու, ամենալայն մասսաներին այդ ծրագրի կատարման համար բայլշեվիկորեն մոբիլիզացիայի յենթարկելու գործում, կուսակցության անդամների մարքս-լենինյան տեսական մակարդակի բարձրացումը և բանվոր դասակարգի վողջ մասսայի քաղաքական դաստիարակությունը հիմնական ու անհրաժեշտ պայմաններից մեկն են հանդիսանում:

Վոչ մի «արգումենտացիայով» չի կարելի քողարկել կուսլուսավորության թերագնահատման ոպորտունիստական եյությունը: Փորձում հասակ առած և փորձով ստուգված ճշմարտություն է հանդիսանում մարքսիզմ-լենինիզմի այն դրությունը, վոր «առանց հեղափոխական թեորիայի չկա հեղափոխական պրակտիկա», վոր «իդեաներն ուժ են դառնում, յերբ նրանց տիրապետում են մասսաները»:

Կուսակցությունն արհամարհելը վոչ այլ ինչ է, յեթե վոչ հեղափոխական թեորիայից ձեռք քաշել, յեթե վոչ միլիոնների ձեռքից խլել· այն ուժը, վոր այդ միլիոններին մոբիլիզացիայի յե յենթարկում հեղափոխական պրակտիկայի համար, յեթե վոչ մարել այն լույսը, վորով լուսավորվում է հեղափոխական պրակտիկայի ճանապարհը: Կուսակցության թերագնահատումը քաղաքական իմաստով աջ ոպորտունիզմի դրսևորում է հանդիսանում, վորովհետև այդ թերագնահատման օբյեկտիվ նշանակությունը կուսակցությանը և բանվոր դասակարգին նրանց դասակարգային թշնամու առաջ զինաթափ անելու մեջ է, դասակարգային թշնամուն ուժեղացնելու մեջ է, վողջ սոցիալիստական շինարարության խնդիրների տեսակետից՝ այդ շինարարության տեմպերը դուլացնելու մեջ է:

ԲԱՅԼՇԵՎԻԿՅԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿՈՒՍՊՐՈՊԱԳԱՆԴԱՅՈՒՄ

Կուսակցության կազմակերպման խնդիրներն ու ձևերը կողմնակի չեն սոցիալիստական շինարարության յուրաքանչյուր տվյալ շրջանի (ետապի) և արտադրության, բանվորների աշխատանքի ու կենցաղի կոնկրետ պայմանների նկատմամբ:

Այդ ի՞նչ է նշանակում:

Այդ նշանակում է, առաջին, այն, վոր կուսակցության բովանդակությունը յենթակա յե արտադրական—քաղաքական խնդիրներին, սկսած ամբողջ յերկրի ու համաշխարհային կոմունիստական շարժման համար ընդհանուր խնդիրներից մինչև տվյալ ձեռնարկության, ցեխի, բրիգադի և անդամ առանձին բանվորի խնդիրները· այդ նշանակում է, յերկրորդ, վոր կուսակցության ցանցի կառուցման ձևերը պետք է համապատասխանեն արտադրության պայմաններին, այդ ձևերը հերթին, բրիգադին, առհասարակ ճշգրիտ վորոշված օբյեկտներին հարմարեցնելու իմաստով:

Կուսակցությունը մի ինչ վոր ինքնանպատակ բան չե, շրջապատում տեղի ունեցող յերևույթներից, տնտեսական—քաղաքական խնդիրների ամբողջությունից կտրված բան չե: Այդպիսի լուսավորությունն ամենվատն սխոլաստիկա յե, այն հայտնի «զավզակապանությունը», վոր իզուր ժամանակ և խլում, վորովհետև նա վերջին հաշվով վոչինչ չի սովորեցնում, գործնականորեն վոչինչ չի ոժանդակում:

Իսկական կուսակցություն կա միայն այնտեղ և այն ժամանակ, յերբ ներգործում է, այսինքն՝ յերբ նա ոժանդակում և իմաստավորելու իրականությունը և այդ հիման վրա ունկընդիրներին զինում է նոր առեղծարար յեռանդով, նրան ցույց է տալիս, թե ի՞նչ ճանապարհով պետք է այդ ստեղծարար յեռանդն անդրադարձնել գործում, պրակտիկայում, ստեղծել (և վերակառուցել) իրականությունն այն ուղղությամբ, վորով լուծվում են բանվոր դասակարգի խնդիրները, այն ուղղությամբ, վորի ամենացայտուն արտահայտությունն է հանդիսանում լենինյան կուսակցության գլխավոր գիծը:

«Թեորիան դառնում է անառարակայական, յեթե նա չի շաղկապվում հեղափոխական պրակտիկայի հետ, ճիշտ այնպես, ինչպես պրակտիկան դառնում է կույր, յեթե նա իր ճանապարհը չի լուսավորում հեղափոխական թեորիայով» (Ստալին):

Այլ խոսքով, այդ նշանակում է· «թեորիան կապել պրակտիկայի հետ»:

Կուսակցության ներգործունության վերոհիշյալ բնութագրություններից հետևում են «թեորիան պրակտիկայի հետ շաղկապելու» հասկացողության յերկու կողմերը: Առաջինը,—դա մեր փորձի սոցիալիստական շինարարության վողջ պրակտիկայի, բանվոր դասակարգի ամբողջ պայքարի տեսական ընդհանրացման (իմաստավորման) կողմն է: Յերկրորդը,—շրջապատի իրականության ընդհանուր որինաչափություններն ըմբռնելու և նրա զարգացման հետագա ուղիները գիտակցելու հիման վրա պրակտիկ գործունեություն կազմակերպելն է:

Սոցիալիստական շինարարության պատմության ժամանակակից շրջանը, դա մի շրջան է, յերբ պետք է կատարել այնպիսի հսկայական խնդիրների ծրագրերը, ինչպիսին են՝ «ամենակարճ ժամանակում տեխնիկական—տնտեսական տեսակետից առաջավոր կապիտալիստական յերկրներին հասնել և անցնել», մեր յերկիրն ագրարային—ինդուստրիալ յերկրից ինդուստրիալ—ագրարային յերկրի վերածել, ավարտել համատարած կոլեկտիվացումը գյուղատնտեսության մեջ և նրա հիման վրա վերացնել կուլակությունը վորպես դասակարգ, լուծել կուլտուրական հեղափոխության խնդիրները և այլն:

Ժամանակակից շրջանը—դա մի շրջան է, յերբ գործնականում իրագործվում է սոցիալիզմի կառուցման մեծագույն ծրագիրը: Դա մի շրջան է, յերբ յերկրի ներսում տեղի յե ունենում իրոք «վերջին ու վճռական կռիվը» հին և նոր աշխարհի միջև, յերկու հասարակական սիստեմների՝ սոցիալիզմի և կապիտալիզմի միջև: Դա դասակարգային սուր պայքարի շրջան է, պայքար, մեկ կողմից ամբողջ ֆրոնտով գրոհող սոցիալիզմի, մյուս կողմից՝ այդ պայքարում վերջնական քայքայման գատապարտված կապիտալիզմի միջև:

Ժամանակակից պատմական պայմաններում, յերբ կուսակցության և բանվոր դասակարգի առաջ դրված է սոցիալիստական շինարարության մեծագույն ծրագիրը,—հարկավոր է առանձնապես սուր տեսողություն, հարկավոր է դիտություն և ընդունակություն, իրագործ-

ծելու համար այն խնդիրները, վոր դրված են դասակարգային թշնամու և նրա գործակալների դեմ մղվող վճռական պայքարում։

Ներկա պայմաններում անհնարին է զեկավարել առանց «հարցի եյության մեջ խորապես թափանցելու»։

Այդ նշանակում է, վոր յուրաքանչյուր կուսանդամ պետք է սիստեմատիկ կերպով գիտելիքներ ձեռք բերի։ Ահա թե ինչու՝ Համկ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեն 1931 թ. մարտի 21-ի իր վորոշման մեջ դրում եր, վոր՝ «արտադրության մեջ կոմունիստի առաջավոր դերը պետք է զուգորդվի նրա մարքս-լենինյան տեսական մակարդակի սիստեմատիկ բարձրացմանը»։

Տեսական գիտելիքների նշանակությունը նրանումն է, վոր «թեորիան պրակտիկներին տալիս է կողմնորոշման ուժ, հեռանկարի հստակություն, աշխատանքի վստահություն, մեր գործի հաղթանակման հավատ» (Ստալին)։ Կուսակցության ներկա ընդհանուր խնդիրների լույսի տակ կուսլուսավորության խնդիրն է՝ դաստիարակել քաղաքականապես գրագետ, կուսակցականորեն կայուն բայլշևիկ-լենինիստի, արտադրության իսկական հարվածայինի։ Բարձրացնելով աշխատավորական լայն մասսաների քաղաքական մակարդակը և նրանց հասարակական ակտիվությունը, անհրաժեշտ է մոբիլիզացիայի յենթարկել նրանց մեր առաջ դրված խնդիրների բայլշևիկյան կատարման համար, նրանց ցույց տալ կոնկրետ ու պրակտիկ գործողության ուղին։

Կուսլուսավորության սիստեմը լրիվ չի կատարի իր խնդիրները, յեթե նա իր ունկընդիրներին չվինի տեղի ունեցող իրադարձությունների տեսական իմաստավորմամբ և հետագա կոնկրետ ու պրակտիկ գործողության ուղիների ճանաչողությամբ, յեթե նա ունկընդիրներին չկազմակերպի այնպիսի ուղղությամբ, վոր նրանք կոնկրետ ոժանդակություն ցույց տան կուսակցական և տնտեսական կազմակերպություններին՝ տվյալ ձեռնարկության առաջ դրված խնդիրների լուծման գործում։

Այսպիսով, ներկա իրադրությունը յերեք պահանջներ է առաջադրում կուսլուսավորության սիստեմին—1) բարձրացնել կուսլուսավորության ցանցի ունկընդիրների մարքս-լենինյան թեորետիկական մակարդակը, 2) նրան կոնկրետ-գործնական գիտելիքներ տալ այն մասին, թե «ինչ» պետք է անել և «ինչպես», 3) ունկընդրին մոբիլիզացիայի յենթարկել և կազմակերպել ձեռք բերված գիտելիքները պրակտիկայի գործողության վերածելու համար։

Կուսլուսավորության ցանցի աշխատանքի թերությունն ընթացիկ տարում կայանում եր, ի միջի այլոց, այն բանում, վոր կա՛մ մենք ունեցինք այնպիսի դպրոցներ և խմբակներ, ուր ամեն ինչ կենտրոնանում եր վերոհիշյալ յերեք մոմենտներից առաջինի վրա և դրա համար ել այստեղ հեշտությամբ եյին սայթաքում «մաքուր», «վերացական», «սխոլաստիկական» գիտության կողմը, կա՛մ ամբողջ գործը դարձնում եյին միայն յերրորդ մոմենտը, և այն ժամանակ ունկընդիրը, վորը պրակտիկ գործողությունների համար եր մոբիլիզացիայի յենթարկված, տեսականորեն չեր բարձրանում։ Կուսլուսավորության սիստեմի այս անցյալի թերության հետ է դալի չափով կապված քաղաքագիտության խմբակների «մշտական ուսանողների» առկայությունը։

Թեորիայի և պրակտիկայի իրական շաղկապումը վերոհիշյալ յերեք մոմենտների զուգորդման մեջ է կայանում, վորովհետև միմիայն այդպիսի զուգորդումն է, վոր կուսլուսավորությունը լիովին համապատասխան կդարձնի վերակառուցման շրջանի խնդիրներին, ամբողջ ֆրոնտով ծավալված սոցիալիստական հարձակողականի շրջանի խնդիրներին։

ՊԱՅՔԱՐԸ ՏԵԽՆԻԿԱՅԻՆ ՏԻՐԱՊԵՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՅԵՎ ԿՈՒՍՈՒՍՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Բայց խորապես սխալ կլիներ, յեթե խոսելով կուսլուսավորության սիստեմի բովանդակության մասին, մենք բավականանայինք միայն վերևում ասածով։

Սոցիալիստական վերակառուցման շրջանը, սոցիալիստական արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման պայմաններն ամբողջ լայնությամբ ու ամբողջ թափով որակարգի մարտական հարցերի շարքն են՝ մղում տեխնիկային տիրապետելու հարցերը։ Այն պայքարում, վոր մղում ենք մենք սոցիալիստական եկոնոմիկայի շեշտակի աճման համար, նրա զարգացման տեմպերի համար և այդ հիման վրա՝ բանվոր դասակարգի ու վողջ աշխատավորության կուլտուրական մակարդակի բարձրացման համար, նոր տեխնիկայի աճումը, գիտությունն ու տեխնիկան միլիոնավոր բանվորների և կոլտնտեսականների սեփականությունը դարձնելը, ստանում են իրոք հսկայական նշանակություն։

Կոմմասսայական աշխատանքի վերակառուցման մասին Համկ(բ)Կ ԿԿ-ի ընդունած վորոշման մեջ տրված է մի սկզբունքային դիրքավորում—կուսլուսավորությունը պետք է շաղկապվի արտադրական հարցերի և տեխնիկայի ուսումնասիրության հետ։ Կուսլուսավորությունն արտադրական հարցերի հետ շաղկապելու մասին մենք վերևում արդեն խոսեցինք։ Այստեղ միքանի խոսքով կանգ առնենք տեխնիկայի հետ շաղկապելու մասին։

Հարկավոր է սկզբից իսկ և ամենաճշտական յեղանակով դեն նետել յերկու բացարձակապես անճիշտ դիրքավորում,—նրանցից մեկը

կուսլուսավորության միջոցով տեխնիկայի համար մղելիք պայքարի թերագնահատումն է, մյուսը՝ դեն է նետում կուսլուսավորության ցանցը վորպես այդպիսին։

Միակ ճիշտ քայլը տվյալ շրջանում տեխնիկայի ուսումնասիրության և քաղաքականության պրոբլեմի միջև այնպիսի փոխհարաբերություն ստեղծելն է, յերբ այս յերու ողակները յերկուստեք լրացնում եր իրար, յերբ նրանք դիտվում են վորպես անբաժանելի։ Այդ նշանակում է, վոր՝

1) տեխնիկայի ուսումնասիրությունը պետք է հանդիսանա իրրև կուսլուսավորության ցանցի յուրաքանչյուր ողակի որդանական, ծրագրային աշխատանքը համապատասխան առումով և համապատասխան սեռանկյան տակ։ 2) «քաղաքականության» ուսումնասիրությունը, այսինքն՝ կուսլուսավորությունը, ծրագրայնորեն պետք է շաղկապվի տեխնիկայի ուսումնասիրության հետ հատուկ արտադրական-տեխնիկական կրթության ցանցում։

Յերկու սիստեմների (կուսուսուցման և տեխուսուցման) փոխհարաբերությունն այսպիսի կազմակերպչական ձևով վորոշելով է միայն, վոր մենք կխուսափենք այնպիսի անհեթեթություններից, յերբ սկսում են կուսլուսավորությանը հոգեհանդիսատ կարդալ, կամ յերբ իրենց յճացածությունը, ժամանակի պահանջները չըմբռնելը դրսևորում են այն բանում, վոր միևնույն մարդկանց համար ստեղծում են յրեկու «զուտ» սիստեմներ—մեկը զուտ տեխնիկական, մյուսը զուտ քաղաքական, ընդ վորում այդպիսի փոխհարաբերությունից կամ տուժում է նրանից մեկը, կամ տուժում են յերկուսն էլ (կանոնավոր հաճախում չկա վոչ մեկում և վոչ էլ մյուսում)։

Մենք այստեղ չենք խոսի տեխնիկական և կուսլուսավորական ցանցի ծրագրերի բովանդակության մասին։ Դա առանձին խոսակցության առարկա պետք է լինի։ Հարկավոր է նշել միայն, վոր տիպային ծրագրեր ստեղծելու գործում, ում վոր վերաբերում է դրա ղեկավարությունը, նրանք անկասկած յետ են մնացել։ Այս տեսակետից մենք մեծ և փոքր փորձերի շրջան ենք ապրում։ Մեր խնդիրն է՝ հաշվի առնել ու ընդհանրացնել փորձը և նրա հիման վրա մշակել կուսակցական ու տեխնիկական լուսավորության ցանցի հիմնական ողակների ծրագրերի զոնե օրինակելի միջին տիպը։

ԿՈՒՍՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՅԵՐԵՍՈՎ ԴԵՊԻ ՅԵԼ, ԴԵՊԻ ՀԵՐԹ, ԴԵՊԻ ԲՐԻԳԱԴ

Կուսլուսավորության ցանցի կազմակերպչական կառուցվածքի բնագավառում ներկայումս հիմնական հարցը ցանցի յուրաքանչյուր ողակն արտադրության պայմաններին հարմարեցնելն է։

Կուսակցական ցանցի հին կառուցվածքը յելնում եր իր ժամանակի պայմաններից։ Այն ժամանակ մեծ մասամբ չկար վո՛չ անընդհատ, վո՛չ բաղմահերթ աշխատանքը, վոչ էլ բանվորների կազմակերպման բրիգադային սիստեմն արտադրության մեջ։ Առաջ մենք ունեցինք այնպիսի ձեռնարկություն, վորը մի ամբողջություն եր և ամբողջ կազմով աշխատում եր այսինչ ժամից մինչև այսինչ ժամը։

Բնական է, վոր այդպիսի պայմաններում խմբակների և դպրոցների կոմպլեկտավորումը համադործարանային մասշտաբով, յերբ միևնույն խմբակում կարող եյին դրվել դործարանի բոլոր ցեխերից, վորոշակի հիմունք ուներ։

Այժմ, յերբ արտադրության կազմակերպման հիմքում դրված են անընդհատ, բաղմահերթ աշխատանքը և բրիգադային սիստեմը, համադործարանային մասշտաբն իր վոտքերի տակ վոչ մի հող չունի։ Այդպիսի պայմաններում չի կարելի խմբակը կազմակերպել այնպիսի ընկերներից, վորոնք աշխատում են տարբեր ցեխերում, հերթերում և բրիգադներում։ Պրակտիկան արդեն բավականաչափ ապացուցել է, վոր ինչքան խոշոր է այն ստորաբաժանումը, վորի մեջ ստեղծված են խմբակը կամ դպրոցը, այնտեղ այնքան ավելի ճիշտ կլինեն այնպիսի բացակայումներ, վորոնց հարկադրում են արտադրական պայմանները։

Ահա թե ինչո՛ւ դպրոցների և խմբակների ցանցը ծավալելիս հիմք պետք է ունենալ տվյալ հերթի, տվյալ բրիգադի համար դպրոց կազմակերպելը։ Միայն այդ է, վոր, այլ հավասար պայմաններ յեղած դեպքում, կապահովի՝

1) հաճախումների բարձր տոկոսը, ակամա բացակայումների վերացումը։

2) ունկընդիրների պահանջների միասնությունը և

3) ընդհատումների վերացումն այն դործնական ազդեցության խնդրում, վորը խմբակի կամ դպրոցի ունկընդիրները ցույց են տալիս տնտեսական և հասարակական կազմակերպություններին հերթական տնտեսական-քաղաքական խնդիրները կիրառելիս։

Այսպիսով, կուսցանցի կազմակերպման յերեք հնարավոր սկզբունքներից այն է՝ չչերտավորված համադործարանային, տերբիտորյալ և արտադրական սկզբունքներից արտադրության ներկա պայմանների առաջադեմ միակ ամենանպատակահարմար սկզբունքը վերջինն է։

ԿՈՒՍԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍԻՍՏԵՄԻ ՄԱՍԻՆ

Իրրև յելակետություն՝ խոսենք կուսլուսավորության ցանցի ողակների բնութագրման և ցանցի սիստեմի մասին վորպես այդպիսին։

Կուսլուսավորության սիստեմը բաժանվում է յերեք հիմնական ողա-

կի—ստորին, միջին և բարձրագույն։ Այս ողակներից յուրաքանչյուրի նպատակային նշանակումը կարելի է, հիմնական գծերով, հետևյալ կերպ վորոշել։—

Առաջին—ստորին—ողակը նպատակ ունի նախնական քաղաքական գիտելիքներ տալ կուսակցականներին և անկուսակցական բանվորներին, վերջիններիս պատրաստել կուսակցության համար։

Ցերկրորդ—միջին—ողակը նպատակ ունի ստորին ակտիվ պատրաստել։

Ցերրորդ—բարձրագույն—ողակը քաղաքական բարձր վորակավորման տեր կուսկադրերի պատրաստման ձևն և հանդիսանում—սկսած համազործարանային մասշտաբով քաղաշխատողից մինչև գիտական աշխատավորը։

Այս ողակներից ամեն մեկին ստորաբաժանվում է միքանի հիմնական ձևերի։ Մոսկվայի քաղաքային կուսկազմակերպության մեջ ստորջիկա 1931/32 տարվա համար կուսլուսավորության սիստեմը նախագծվում է հետևյալ կերպ։

(Տես տախտակ եջ 11 և 12)

III. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՂԱԿ

1. Շրջանային կոմ. ԲՈՒՀ-եր (և կոմ. ԲՈՒՀ-եր ձեռնարկություններում)։
2. Սվերդլովյան իրիկնային համալսարան։
3. Գոկրովսկու իրիկնային համալսարան։
4. Մարքսիզմի իրիկնային դասընթացներ։
5. Կարմիր պրոֆեսուրայի ինստիտուտի իրիկնային սեկտորներ։
6. Հեռակա կոմ. ԲՈՒՀ, հեռակա իրիկնային կուսխորհրդային գպրոցներ և Համկ(բ)կ ԿԿ-ի մասսայական հեռակա ուսուցման ինստիտուտի սիստեմում գտնվող հեռակա ռադիո-դասընթացներ։
7. Ինքնակրթություն՝ ստացիոնար ցանցի ծրագրերով։

(Հենվում են թե շրջկոմներին և թե ձեռնարկություններին կից կոնսուլտացիոն կետերի վրա)։

Իբրև ուսման լրացուցիչ ձևեր՝ ստորին ողակի համար կարելի է մատնանշել լենինյան հավաքի խմբակները, վորպես մի ձև, վոր հատկապես նախատեսված է կուսակցության մեջ նոր ընդունվածների նկատմամբ, իսկ միջին ողակի համար՝ կարճատև դասընթացների, ստորին ակտիվի գործնական պատրաստության ձևը (յերեքօրյա, հնգօրյա դասընթացներ)։

Բարձրագույն ողակի համար լրացուցիչ ձևեր են գիտական-թեորետիկական զեկուցումները, վոր Մոսկվայի քաղկոմի կուլտպրոպաբաժինը և Կոմակադեմիան կազմակերպում են սոցիալիստական չինարարության թեորիայի ու պրակտիկայի հարցերի շուրջը։

1. Ստորին ցանցը

Ցանցի ողակի տիպը և նպատակադրումը	Սովորողների կազմը	Ուսման ժամկետը
I Դպրոցական կուսդպրոց Նպատակադրում— 1. Կուսակցության ծրագրի հիմունքների յուրացումը։ 2 Ընթացիք քաղաքականության հիմնական հարցերի մշակումը։ 3. Տեխնիկում։	1. Գործարանի և յուրաքանչյուր կուսթեկնածուի համար։ 2. Համկ(բ)կ քաղաքականությունը կիսագրագետ անդամները։ 3 Անկուսակցական ակտիվը։	5 ամիս 5 որը 1 անգամ, 2½—3 ժամ։
II. Իրիկնային կուսխորհրդային դպրոց (ցածր տիպի) Նպատակադրում— 1. Նախնական կուսդպրոցի ծրագրի մշակումը։ 2. Հանրակրթական պատրաստություն ուսուցչերից և մաթեմատիկայից (շինարարության ուսումնասիրությունը՝ լրացուցիչ կերպով կոլանագրագիտություն և ազրոգրագիտություն)։ 3. Տեխնիկում։	1. Նախնական գպրոց չանցած թեկնածուները։ 2 Գուսանդամները և դարգացման համապատասխան մակարդակի տեր անկուսակցականները։	Տարեկան—5 որում 2 անգամ Այն ավարտելուց հետո՝ իրիկնային կուսխորհրդային դպրոցները կամ ընթացիք քաղաքականության խմբակները (միջին ողակի)։
III Ընթացիկ քաղաքականության խմբակներ (ցածր տիպի) Նպատակադրում— 1 Մանրթացում կուսակցության քաղաքականության հետ ընթացիք որվա թեմաների շուրջը՝ արտադրության հերթական խնդիրների առնչությամբ։ 2. Տեխնիկայի հարցեր, նույնը, ինչ նախն. կուսդպրոցում։	1. Նախնական պատրաստություն ստացած կուսանդամները և թեկնածուները։ 2. Անկուսակցական բանվորները։	Գարագում են 5 որը 1 անգամ մի ամբողջ տարի։ Վերջացնելուց հետո՝ իրիկնային կուսխորհրդային դպրոցները կամ ընթացիք քաղաքականության խմբակները (միջին ողակի)։
IV. Մասսայական ուսուցման որեր Նպատակադրում— Մանրթացում կուսակցության քաղաքականության հետ ընթացիք որվա թեմաների շուրջը արտադրության խնդիրների առնչությամբ։	Համկ(բ)կ անդամներն ու թեկնածուները և անկուսակցական բանվորները	
V. Ինքնակրթություն Դպրոցների ու խմբակների ստացիոնար ցանցի ծրագրով։		

II. Միջին ողակ

Ցանցի ողակի տիպը և նպատակադրումը	Ուսման տարիները	Ուսման ժամկետը
I. Իրիկնային կուսխորհրդային դպրոցներ		
Նպատակադրում—		
1. Ստորին կուսակցական, կոմյերիտական ու պրոֆեսիոնալ ակտիվի պատրաստություն քաղդիտելիքների գծով, հանրակրթական պատրաստություն և տեխմինիմում։ Կուսխորհրդային դպրոցն կից կազմակերպվում են ակտիվի խմբեր հատուկ ծրագրով (պրոպագանդիստներ, ագիտատոր, կազմակերպիչներ, կոմյերիտական աշխատողներ և այլն) Նաև կոնսուլտացիոն կետ՝ հեռակա ուսուցման և ինքնակրթության համար։	1 կուսանդամներ, թեկնածուներ և անկուսակցականներ, որոնք ավարտել են իրիկնային կուսխորհրդային ցածր տիպի դպրոցները և ունեն մարքսլենինյան խմբակի պատրաստություն։	1 տարվա կուս. ուսումնարանում 4 անդամ 3-ական ժամ 8 ամսվա ընթացքում։ Ավարտելուց հետո՝ շրջանային կոմունիստական ԲՈՒՀ։
II. Մարքս-Լենինյան խմբակներ		
Նպատակադրում—		
1. Ունկընդիրներին գիտելիքներ տալ մարքս-լենինյան թեորիայի ընդհանուր ուսումնական առարկաների ծրագրերով (Համկամսաի պատմություն, լենինիզմ, տնտեսական քաղաքականություն, քաղաքատնտեսություն, պատմական մատերիալիզմ և այլն) 2. Տեխմինիմում։	1. Համկ(բ)կ անդամներ և թեկնածուներ, որոնք նախնական ուսուցման ոլորտներից մեկն ու մեկը ծավալով գիտելիքներ ունեն։ 2. Զարգացման մակարդակով համապատասխան անկուսակցականներ։	1 տարի. ուսումնարկում 3 անդամ։ Ավարտելուց հետո՝ իրիկնային կուսխորհրդային դպրոց կամ շրջանային կամ. ԲՈՒՀ։
III. Ցեխ-լեն-համալսարաններ		
Նպատակադրում—		
1. Լենինիզմի հարցերի մշակում Լենինի ցերկերով 2. Տեխնիկական հարցեր։	1. Համկ(բ)կ անդամներ, թեկնածուներ և անկուսակցականներ, որոնք կարող են գրքի վրա ինքնուրույն աշխատանք կատարել և նախնական կուսդպրոցի ծավալով քաղաքական մակարդակի տեր են։	Նույնը
IV. Ինքնակրթություն (Ստացիոնար ցանցի ծրագրով)։		

Անհրաժեշտ է մի քանի դիտողություններ անել մասսայական կուսուսուցման որերի, միջին ողակի իրիկնային կուսխորհրդային ողակի և կուսակտիվի հեռակա ուսուցման սիստեմի մասին։

Մասսայական կուսուսուցման որերն առաջացան 1930/31 ուսումնական տարվա փորձում։ Նրանց նպատակադրումն է՝ տվյալ ձեռնարկության բանվոր-բանվորուհիների ըստ ամենայնի լայն խավերին ծանոթացնել կուսակցության քաղաքականության՝ ընթացիկ որվա մարտական թեմաների շուրջը։ Կազմակերպչական տեսակետից խնդիրը հիմնականում այն է, որ մասսայական կուսուսուցման համար հատկացված որերին բոլոր ցեխերում (հերթերում և բրիգադներում) կամ նրանց մի մասում տվյալ որվա համար խմբակների—խմբերի լրացուցիչ ցանց և կազմակերպվում։

Այս ձևը, որ անցած տարվա փորձով ապացուցեց իր ճկունությունն ու մասսայականությունը, պետք է հետագայում ամեն տեղ և սիստեմատիկ կերպով գործադրել։ Մասսայական կուսուսուցման որերի հաջողությունը, ի միջի այլոց, պահանջում է լավ կազմակերպված նախապատրաստական աշխատանք։ Նախապատրաստության հիմնական մոմենտներն են—լայնորեն մասսայականացնել որը, բացատրել նրա նպատակը, խմբակների հավաքագրում կատարել և պրոպագանդիստների կադրեր պատրաստել։

Անցյալ տարվա սիստեմում բարձր տիպի իրիկնային կուսխորհրդային դպրոցը (միջին ողակի) ուսման յերկամյա ժամկետ ունեցավ։ Մոսկվայի քաղաքային կուսկազմակերպության պրակտիկան ցույց է տալիս, որ բացարձակ մեծամասնությամբ առաջին կուրսի ունկընդիրների կազմը չեր պահպանվում իբրև կուսխորհրդային դպրոցի յերկրորդ տարվա ունկընդիրներ։ Ցերկամյա համարվելով, փաստորեն կուսխորհրդային դպրոցը միամյա յեր։

Ցեկող ուսումնական տարվա սիստեմում այս փաստն իրավարանորեն ամրացվում է. բարձր տիպի կուսխորհրդային դպրոցը միամյա չի լինելու, ընդ որում նոր սիստեմի համաձայն նրա նախորդն և հանդիսանալու ցածր տիպի կուսխորհրդային դպրոցը (ստորին ողակի)։

Հեռակա ուսուցումը Մոսկվայի քաղաքային կուսկազմակերպության մեջ անցյալ տարի գրեթե բոլորովին ծավալում չունեցավ։ Այնինչ կուսկրթության այդ ձևը ամենալայն գործադրություն պետք է ունենա կուսակտիվի շրջաններում։

Հեռակա ուսուցումը մի ամբողջական ինքնուրույն սիստեմի յե վերածվում։ Նրանում հիմնական են հանդիսանում հետևյալ չորս ողակները—հեռակա կոմունիստական համալսարան, հեռակա կուսխորհրդային դպրոց, հեռակա կոմյերիտական համալսարան և կուսակտիվի հեռակա ռադիո-դասընթացներ։

Այս բոլոր ողակների աշխատանքը կառուցված է դիրքավորման ու յեղրափակման կոնֆերանսների, ուսումնական նյութերի վրա կատարվող ինքնուրույն աշխատանքի և ռադիո-հաղորդումների զուգորդման սկզբունքով:

Անհրաժեշտ է լայն ծավալել իրիկնային կոմունիստական ԲՈՒՀ-եր ստեղծելու պրակտիկան անմիջապես ձեռնարկություններում, ուր դրա համար կան թե՛ հարմար կադրեր և թե՛ նյութական պայմաններ:

Կուսակտիվի գործարանային կադրերի պրոբլեմի լուծման համար մղվող պայքարում ձեռնարկություններում կոմունիստական ԲՈՒՀ-եր կազմակերպելը չափազանց մեծ նշանակություն ունի: Անմիջապես ձեռնարկություններում իրիկնային կոմունիստական ԲՈՒՀ-եր կազմակերպելու դրական կողմերը նրանումն են կայանում, վոր շրջանային կամ համաքաղաքային կոմունիստական ԲՈՒՀ-երի համեմատությամբ— 1) ձեռնարկության կոմունիստական ԲՈՒՀ-ի ունկընդիրը ճանապարհ դնալու համար 2—3 ժամ չի կորցնի, 2) ձեռնարկության կոմունիստական ԲՈՒՀ-ը անհամեմատ ավելի մեծ հնարավորություններ ունի հարմարվելու բաղմահերթ աշխատանքի պայմաններին, 3) շրջանային կամ քաղաքային կոմունիստական ԲՈՒՀ-ն ուղարկվող 2—3 հոգու փոխարեն ձեռնարկության կուսակազմակերպությունը կարող է տասնյակ ընկերների պատրաստել և 4) առավել ևս արագ տեմպերով լուծել կուսակտիվի կադրերի այնքան սուր պրոբլեմը:

Ցեվ վերջապես մի վերջին դիտողություն Կարմիր Պրոֆեսուրայի Ինստիտուտի իրիկնային սեկտորների մասին: Անցյալ տարիների կուսլուսավորության սիստեմում այս ձևը գոյություն չուներ: Այժմ, յերբ բարձր վորակավորման տեր կադրերի պահանջն առանձնապես հրամայական է, այնպիսի ուսումնական միավորները, վորտեղ կուսաշխատողը, առանց աշխատանքից կտրվելու, կարողանա գործնականորեն լրացնել իր դիտական-թեորետիկական բաղաժը, այդպիսի միավորներ ստեղծելը դառնում է մի խնդիր, վոր ամենաարագ լուծումն է պահանջում: Կարմիր Պրոֆեսուրայի Ինստիտուտի իրիկնային սեկտորներն առաջադրվում են իբրև բարձր վորակավորման տեր ակտիվի պատրաստման հիմնական ձևեր:

Կարմիր Պրոֆեսուրայի Ինստիտուտի իրիկնային սեկտորների աշխատանքը նախադծվում է յերեք հիմնական ձևերով.—

1) Կարմիր Պրոֆեսուրայի Ինստիտուտի ցերեկնային ստացիոնար սեկտորների կրճատված ծրագիրն անցնող խմբեր:

2) Կարմիր Պրոֆեսուրայի Ինստիտուտի ցերեկնային սեկտորներում բանվորական կադրեր պատրաստելու խմբեր:

3) Կուսակտիվի դիտական-թեորետիկական վերապատրաստման նպիրազիկ դասընթացներ:

Կուսպրոպագանդայի վիթխարագույն նշանակությունը պահանջում է, վոր բոլոր կուսկազմակերպությունները մեծագույն ուշադրություն ցույց տան նրան: Առանց դրան, առանց սիստեմատիկ ու կոնկրետ դեկավարություն ունենալու յուրաքանչյուր դպրոցի, յուրաքանչյուր խմբակի, յուրաքանչյուր պրոպագանդիստի նկատմամբ,—կուսպրոպագանդան և նրա կարևորագույն ճակատամասը—կուսլուսավորության ցանցը—չեն կարողանա լիովին, բայլշևիկորեն, մարտականորեն, ներկա շրջանի խնդիրներին համապատասխան չափով լուծել իրենց խնդիրները:

Գ. ԲԱՐԱՆԴՈՎ, Վ. ՊԱՆՈՎ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԼԵՆԻՆՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ՄԱՍԻՆ

Կուսլուսավորությունը կուսակցության անդամներին և անկուսակցականներին պետք է դնի լենինիստորեն, բայլշևիկորեն աշխատելու ընդունակությամբ: Հենց դրանումն է կուսլուսավորության աշխատանքի դաստիարակչական նշանակությունը: Այս տեսակետից, մեզ թվում է, խոշոր նշանակություն է ստանում աշխատանքի լենինյան մեթոդների պրոպագանդը կուսլուսավորության ցանցում: Այդպիսի պրոպագանդը կարող է դդալիորեն ոգնել ուսուցումը պրակտիկայի հետ շաղկապելու դործին, քանի վոր աշխատանքի լենինյան մեթոդների ուսումնասիրության առնչությամբ միանդամայն տեղին կլինի քննադատական ստուդման յենթարկել տվյալ ձեռնարկության աշխատանքը:

***

Բոլորին հայտնի յե, վոր բայլշևիզմն ամեն ու ամրացել է ոպորտունիզմի դեմ մղած անընդհատ պայքարում: Կուսակցության պատմության հենց սկզբի իսկ որվանից բայլշևիկների և մենշևիկների միջև ընկած եր «մի ամբողջ անդունդ, վորովհետև նրանց աշխատանքի մեթոդները տրամագծորեն հակադիր են» (Ստալին): Այսպես, մենշևիկների համար սկզբից իսկ բնորոշ եր «մարքսիզմն արտաքուստ ընդունելը», «մարքսիզմի ելության մեջ թափանցել չկամենալը», «մարքսիզմի կենդանի ու հեղափոխական դրությունները մեռած, վոչինչ չասող ֆորմուլաների վերածելը», «խոսքի և դործի անջատումը» (Ստալին): Ընդհակառակը, բայլշևիկները շարունակ «հարցի ծանրության կենտրոնը մարքսիզմն արտաքուստ ընդունելուց փոխադրում եյին նրա կիրառման, նրա կենսադործման վրա» (Ստալին): Աշխատանքի այս յերկու հակադիր մեթոդները մեր պայքարի որինակով և յերկու ֆրոնտով պայքարի պրակտիկայում հստակորեն ցուցադրելու խնդիրը, այսոր առանձնապես պետք է դնել յուրաքանչյուր պրոպագանդիստի առաջ: Հարկավոր է «դրանով իդեական-քաղաքական վիթխարի բարձրության վրա դնել» մեր ամենօրյա աշխատանքի վողջ պրակտիկան: Մենշևիկյան կուսակցության մնացորդները ԽՍՀՄ-ի ներսում աճեցին մինչև իրենց տրամա-

բանական վախճանը—մինչև «Տորդպլոմի» կողմից վարձատրվող ինտերվենտ-վնասարարների ատրճանը: Յուրաքանչյուր բանվորի հայտնի չէ «մարքսիստների տարող հաղած» (Լենին) այս թշնամիների դեմքը: Նմանապես բանվոր բայլշևիկը պետք է ըմբռնի աշխատանքի բայլշևիկյան հատուկ մեթոդների էությունը, մեթոդներ, որոնք սկզբից իսկ բայլշևիկների և մենշևիկների միջև «մի ամբողջ անդունդ» են ստեղծել: Եթե այդ նույն անդունդը կա մեկ կողմից՝ մեր կուսակցության գլխավոր գծի, իսկ մյուս կողմից՝ աջ ոպորտունիստների, «ձախերի», յերկերեսանիների և հաշտվողականների գծի միջև, որովհետև այդ յերկու կողմերի աշխատանքի մեթոդների միջև կա նույնպիսի հորատագծային հակադրություն», որովհետև ոպորտունիստական և հաշտվողական տարրերն ըստ էության մեր շինարարության պրակտիկայի մեջ են փոխադրում մենշևիզմի ժանգոտած զենքերը»:

«Բայլշևիզմը տակտիկայի տիպար է բոլորի համար»,—ասում էր Լենինը: Բոլորի համար—դա չի նշանակում միայն այն, որ բայլշևիզմի ամենահարուստ փորձը սնունդ է տալիս մեր յեղբայրական կոմկուսակցությունների տակտիկային: Բոլորի համար—այդ նշանակում է նաև այն, որ մեր կուսակցության պատմական փորձը, «ներա ընդհանուր տեսքով վերցրած» (Ստալին), մեզնից յուրաքանչյուրին սովորեցնում է նույնպես, թե ի՛նչ մեթոդներով պետք է աշխատել, ի՛նչպես պետք է գործենք մեր ստորին աշխատանքի պրակտիկայում: Բայլշևիզմի ամենաարժեքավոր տակտիկական փորձը կարելի չէ և պետք է թարգմանել աշխատանքի կոնկրետ պրակտիկայի լեզվով՝ ձեռնարկությունում, ցեխում, հարվածային բրիգադում, խորհրդատեսությունում և կոլոնտեսությունում, «սոցիալիզմի համար մղվող պայքարում մեր պրակտիկներին պինելով» աշխատանքի բայլշևիկյան մեթոդներով: Չե՞ որ գործնականորեն հենց այդպես էլ լինում է: Մեզնից յուրաքանչյուրի գործնական աշխատանքը «ցածում, այնտեղ, ուր կատարվում է սոցիալիստական շինարարության իսկական գործը» (Կագանովիչ), անընդհատ մատն է կազմում այն ընդհանուր աշխատանքի, որին ուղղություն է տալիս վողջ կուսակցությունը պայքարի իր ստրատեգիական և գործնական հակայական փորձի հիմունքներով:

Բայց խոհականորեն աշխատելու, հեռանողական պրակտիկ բայլշևիկ-լենինիստի տիպ մշակելու համար հարկավոր է ամենից առաջ սովորել, իմաստավորել, ըմբռնել աշխատանքի այս հատուկ լենինյան մեթոդները: Իսկ դա պահանջում է ծավալուն պրոպագանդիստական աշխատանք հենց այդ ուղղությամբ: Այդպիսի պրոպագանդը պետք է գործնականորեն դինի մեր ստորին կուսակտիվին, ոժանդակի նրա գործնական մարտունակությանը:

Մեկ մինչև իսկ թվում է, որ այդ պրոպագանդը կարելի չէ և պետք է կատարել վոչ միայն կուսցանցում ավանդվող ընդհանուր թեմաների մշակման ընթացքում, այլ և նշանակել միքանի հատուկ պարապմունք, որոնք նվիրված լինեն լենինյան կազմ-աշխատանքի ամենագլխավոր պրոբլեմների քննությանը՝ ձեռնարկության, ցեխի և բրիգադի արտադրական պայքարի հարուստ պրակտիկայի կապակցությամբ:

ԼԵՆԻՆՅԱՆ ՈՂԱԿԻ ՊՐՈԲԼԵՄԸ

Այժմ մի շարք որինակներով ցույց տանք, թե ինչպես կարելի չէ և պետք է դնել աշխատանքի լենինյան մեթոդների պրոպագանդը մեր շինարարության կոնկրետ վատերի հիման վրա: Եթե ամենից առաջ մենք այստեղ վերցնում ենք լենինյան ոդակի պրոբլեմը:

«Քաղաքականության ամբողջ արվեստը հենց նրանումն է կայանում, վոր պետք է գտնել և պինդ ու պինդ բռնել հենց այնպիսի մի ոդակ, վոր ամենից ավելի քիչ կարող է ձեռքից դուրս պրծնել, վորն ամենից ավելի կարևոր է ավյալ մոմենտում, վորն ամենից ավելի չէ յերաշխիք տալիս ոդակն իր ձեռքն ունեցողի համար ձեռք բերելու նաև ամբողջ շղթան» (Լենին, IV հատ., էջ՝ 187): Այդպես էր Լենինը դեռևս 1902 թ. ձևակերպում ոդակի պրոբլեմը:

«Բավական չէ հեղափոխական և ռացիոնալիզմի կամ ընդհանրապես հարկավոր է կարողանալ յուրաքանչյուր պահին գտնել շղթայի այն հատուկ ոդակը, վորից պետք է բռնել բոլոր ուժերով՝ ամբողջ շղթան բռնել կարողանալու և հաջորդ ոդակին հաստատուն անցում նախապատրաստելու համար»: Այդպիսի ավելի խիստ տոնով ասում էր Լենինը քաղաքաշխատանքի կոմիտեներից տնտեսական շինարարությանն անցնելու շրջանում:

«Բանն այն է, վոր մի շարք խնդիրներից պետք է առանձնացնել... հենց այն հերթական խնդիրը, վորի լուծումը կենսաբանական կետ է հանդիսանում և վորի կիրառումն ապահովում է մնացած հերթական խնդիրների հաջող լուծումը»: Այդպես է այս հարցը պարզաբանում ընկ. Ստալինը:

Ահա՛ ոդակի ընդհանուր բնութագրությունը: Հայտնի չէ, վոր կուսակցության ստեղծման շրջանում այդպիսի ոդակ էր հանդիսանում համատարական սոցիալ-դեմոկրատական թերթի կազմակերպումը: «Ներկա մոմենտում,—դրում էր Լենինը նեպ-ին անցնելու շրջանում,—այդպիսի ոդակ է հանդիսանում ներքին առևտրի աշխուժացումը»:

Սոցիալիստական վերակառուցման դարաշրջանն ունի իր հատուկ ոդակը: «Այստեղ դլխավորն այն է, վոր պետք է ունենալ տեխնիկական տիրապետելու, արտադրության դիտությանը տիրապետելու բայլշևիկյան բուռն ցանկություն» (Ստալին): «Մի՛այն դրանումն է այն բանի յերաշխիքը, վոր մեր պլանները կկատարվեն» վոր մենք 10 տարում

ՀՍՍՌ-Արմ ССР
Գ. Մ. Մ. Մրշիկյան
ՍՍՍՌ-ի ԳԱ

կկորենք կանցնենք այն ստրածությունը, վորով յետ ենք մնացել առաջավոր յերկրներից:

Վորևե մի ձեռնարկության աշխատանքի որինակով այդ ընդհանուր ողակը ցուցադրելը խիստ կարևոր է: «Ահա սարքավորման վոչ-բավարար ոգտագործումը, նյութական վատ մատակարարումն ու ներգործարանային վատ պլանավորումը, տեխնիկական-արտադրական պահպանողականությունը, վոր միլիոնավոր ռուբլիներ է խլում և իմպորտային սարքավորումն անգործության է մատնում—մի՞թե մեր ձեռնարկության տնտեսական աշխատանքի այս բոլոր թերությունները, վոր մենք այստեղ թվում ենք պատահարար վերցնելով, դեմ չեն առնում հիմնականին, գլխավորին—արտադրության գիտությանը տիրապետելուն»:

Լենինյան ողակը պետք է և կարելի յե ցուցադրել նաև մեր աշխատանքի առանձին բնագավառներում: Ահա ստորին աշխատանքի պրակտիկայից վերցրած միքանի որինակներ:

Մոսկվայի «Ելեկտրոզավոդ»-ը ելեկտրո-տեխնիկական արդյունաբերության մի գիգանտ է, վոր հնգամյակի 3-րդ տարում 150 միլ. ռուբլու արտադրանք է տալիս: Գործարանի արդիֆինպլանի կատարումը մեծ դժվարությամբ և տեղի ունենում: Զափազանց անհամաչափ կերպով է տրվում տասնորյակային և որական արտադրանքը: Ցուրաքանչյուր ամսի 24-ին կամ 25-ին արտադրանքի 40—50% ունենալը սովորական յերևույթ է: Դրա դիմաց ամսի վերջին, մնացած 5 որվա ընթացքում, սկսվում է տենդոտ աշխատանք. աշխատում են արտաժամյա, մոբիլիզացիայի յեն յենթարկվում բառիս բուն նշանակությամբ բոլորը և ամեն ինչը, և գործարանը սովորաբար պապավով է դուրս գալիս լարված պայքարից: Պատճառը ներգործարանային վատ պլանավորման մեջ է: Հունվար ամսին գործարանում ճեղքվածք կար: Տրանսֆորմատորների բաժնի պլանային-արտադրական բյուրոն փականագործական ցեխին մի տեսակ ղեկադրումներ է տալիս, իսկ զոդիչների ցեխին՝ մի այլ տեսակ: Արդյունքը լինում է այն, վոր մեծ քանակությամբ անավարտ արտադրանք է մնում: Այդպիսի խառնիճաղանճ դրություն է տիրում նաև պրոժեկտորների բաժնի արտադրական-պլանային բյուրոյում: «Լավ» պլանավորման համար իբրև վարձատրություն՝ նվագախմբով և մեդալներով այս յերկու բյուրոները բերվեցին գործարանային փղերը—«դանդաղաշարժության և բայլչևիկորեն աշխատելու անկարողության» այդ խորհրդանշանները: Վոլֆրամային բաժնում մի անգամ գործը այնպես պլանավորեցին», վոր ցեխը մի ամբողջ տասնորյակը խոտան տվեց (հաշվի չեյին առել ջերմության բարձրությունն ու խոնավությունը): Ուստի միանգամայն իրավացի եյին «Ելեկտրոզավոդի» բայլչևիկները, յերբ կուսկոմի պլենումում տեխնիկական պլանավորումը ձևակերպեցին իբրև այն ներգործարանային ողակը, վորից պետք

ն բռնել: Նշվեցին մի ամբողջ շարք միջոցառումներ՝ տեխնիկական պլանավորման նոր մեթոդներ մտցնելու, տեխնիկական-պլանային աշխատողների վարակը լավացնելու, պլանային բրիգադների աշխատանքը փոխելու և այլ ուղղությամբ:

Ելեկտրոզավոդի կուսկազմակերպությունը, վորը, ընկ. Կագանովիչի արտահայտությամբ, «վճռական շրջադարձ է կատարել յերեսով դեպի արտադրություն», վերակառուցում է իր պրոֆեսիոնալ աշխատանքը: Բայց վո՛րն է այդտեղ այն հիմնական ողակը, վորից պետք է բռնել: Հիմնական ողակը պրոֆ-կազմակերպչական բրիգադներն են,—վորոշում է համագործարանային բանվորական կոնֆերանսը 1930 թ. սեպտեմբերին: Պետք է ձեռք զարկել նրա աշխատանքին: «Ելեկտրոզավոդ»-ում անց են կացնում մի ամբողջ միամսյակ—ստորին պրոֆաշխատանքի գլխավոր ստուգատես: Արդյունքը յեղավ այն, վոր փաստորեն աշխատող միքանի տասնյակ պրոֆկազմակերպիչների փոխարեն, կան մոտ 600 գործող ստորին պրոֆկազմակերպիչներ: Գործարկոմի կազմսեկտորը և ցեխային կոմիտեները սիստեմատիկ դաստիարակչական ու հրահանգչական աշխատանք են կատարում պրոֆկազմակերպիչների մեջ:

1930 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսները մարտական հարվածային յեռամսյակ յեղան: Լենինգրադի բանվորների նախաձեռնությամբ՝ լավագույն ձեռնարկության համամիութենական կոնկուրս կազմակերպվց: «Ելեկտրոզավոդ»-ում անմիջապես վորոշեցին կոնկուրսը դարձնել սոցմրցման և արդիֆինպլանի կատարման պայքարի հիմնական ձև ամբողջ յեռամսյակի ընթացքում: Կոնկուրսը պետք եր ծավալել իբրև մի մեծ մասսայական գործ, այն դարձնել «Ելեկտրոզավոդ»-ի 14·000 բանվորների սեփականությունը: Ի՞նչպես պետք եր գտնել այն ողակը, վոր «ապահովում է մնացած հերթական խնդիրների հաջող լուծումը» (Ստալին): Այդ ողակը հատուկ կոնկուրսային ակտիվ ստեղծելու մեջ եր, ակտիվ, վոր կոնկուրսը շարունակ մղեր դեպի գործարանի բոլոր բնագավառները, վերացնելով ինքնահոսի ոպորտունիստական վնասակար տրամադրությունները,—այդպես վճռեցին գործարանի կուսակցական և հասարակական կազմակերպությունները: Ստեղծվեցին 18 համագործարանային և 50 ցեխային մարշրուտային բրիգադներ: Այդ բրիգադների աշխատանքի փորձն իր ժամանակին լավ նկարագրվեց «Պրավդա»-յում՝ մնացած ձեռնարկություններին փոխանցելու նպատակով:

Լյուբերեցկի գյուղատնտեսական մեքենաների գործարան: Հատուկ յեռամսյակի ծրագիրը կատարված է 47%-ով, հունվարինը 48%-ով, փետրվարինը՝ 47 %-ով: Իսկ առջևում՝ յերկրորդ բայլչևիկյան գարուն, մեքենաների սպասող հարյուրավոր ու հազարավոր կոլտնտեսություններ: Թերակատարման պատճառը պլանայնության, տեխնիկական

պարզորոշ ղեկավարության բացակայության մեջ է, դիշերային հերթերի անապատան լինելու, աշխատանքի նորմավորում գոյություն չունենալու մեջ։ «Գործարանը հիվանդ է։ Բայց վոչ մի ցեխում չկա չարիքի կոնկրետ մեղավորներին խփող վոչ մի պլակատ, վոչ մի լոզունգ... Չկան ճեղքված-քների վերացման համար բանվորներին պայքարի կոչող լոզունգներ։ Անվրդով հանգստություն է տիրում» («Раб. Москва» 1931 թ. մարտի 7)։ Այն հերթական ողակը, վորից վազուց պետք է բռնեին գործարանի հասարակական կազմակերպությունները, պարզ տեսանելի յեր։ Լյուբերեցկի գործարանի համար հիմնական ողակն անմիջապես մոբիլիզացիոն աշխատանք կազմակերպելն եր։ Հարկավոր եր, վոր ձայն բարձրացնեին ընկերական դատարանները, ճչային պատերը, գործի ձեռնարկեին վոչ թե հարյուրները, այլ հազարները։ Հենց այդպես եր ողակի պրոբլեմը գործարանի առաջ դնում ԱՄՈ գործարանի հասարակական բուքսիրը։

Մոսկվայի «Մոստրիկոտաժ»կոմբինատ։—Զորս տեքստիլ ձեռնարկություն, վոր ընդգրկում են 3 ½ հազար մարդ։ Մի ամբողջ շարք անհարթություններ կան նաև այստեղ։ Սակայն ամենից վատն այն է, վոր նորմաների վերանայման ամպանիայի նախորյակին հակախորհրդային տարրերը յելույթ ունեցան գործարանի և կոմբինատի հասարակական կազմակերպությունների դեմ, իրենց թակարդում վորսալով նորեկ բանվորների մեծ մասին։ Հիմնականը, վոր արտահայտվում է և արտահայտվեց այդտեղ, ստորին ողակի, բրիգադի, կոմպլեկտի, բաժնի «յեռանկյունու» վատ աշխատանքն է։ Կոմբինատի կուսակցական և հասարակական կազմակերպություններն ստորին «յեռանկյունու» աշխատանքի կազմակերպումը ձևակերպեցին վորպես իրենց հիմնական ողակը։ Ահա թե վորտեղից պետք եր բռնել այստեղ։ Ահա ստորին աշխատանքի լենինյան ողակի մեկ որինակ։

Ստալինգրադի տրակտորի գործարան։—Տրակտորային արդյունաբերության յերիտասարդ դիղանտ։ Այստեղ լենինյան ողակը լավ ցույց տրված ընկ. Կագանովիչի այն ճառում, վոր նա արտասանեց ՀԱՄԼԿՅԵՄ IX համագումարում։

«Ցես բերում եմ դրական փաստեր,—ասում է ընկ. Կագանովիչը,—բայց կան նաև բացասական կարգի փաստեր։ Իբրև որինակ վերցնենք Ստալինդրադի գործարանը։ Մենք չենեցինք Ստալինդրադի գործարանը, այնտեղ դրինք լավագույն մեքենաները, բայց այս գործարանի մեքենաները դեռևս լիովին չեն տալիս այն արտադրանքը, վոր հարկավոր է մեզ։ Ինչո՞ւ։

Իհարկե, վորևե աջ ոպորտունիստ կամ Սիրցով-Լոմինաձեյի աջ-«ձախ» բլոկի վորևե մի ներկայացուցիչը մեր շինարարության տարտությունը տեսնելու հակում ունի։ Իսկ գործնականում մենք դիպքեր ենք նկատում, յերբ պակասել է կազմակերպելու կարողությունը, և այս գործարանի կոմյերիտականները, վորոնք բանվորության մեծագույն մասն են կազմում, չկարողացան գտնել այն ողակը, վորից պետք եր կառչել, չկարողացան կոնկրետ կերպով մոտենալ թերություններին՝ գործարանը արագ քաշելու և լայն ճանապարհ դուրս բերելու համար»։

Այսպիսի որինակների հիման վրա պրոպագանդիստը պետք է կարողանա ցույց տալ, թե ինչպես են բայլշևիկները կիրառում վճռական ողակի պրոբլեմը, ինչպես այդ որինակ, տվյալ մոմենտում վճռական ողակ վորոնելու և նրանից բռնելու անկարողությունն անխնա հարվածում է վատ ղեկավարներին, ինչպես պետք է լենինյան ողակի սկզբունքը հետևողականորեն կիրառել սեփական աշխատանքի պրակտիկայում։

ՅՈՒՅՑ ՏԱԼ ՎՃՌԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ

Ինքնքննության հասկանալի յե, վոր այն լենինյան տակտիկական հիմունքները, վորն ստորին աշխատանքի պրակտիկայում ցույց տալու մասին մենք խոսեցինք, միմիայն լենինյան ողակի պրոբլեմով չեն սպառվում։ Այս ողակից դուրս կան մի շարք ուրիշ պրոբլեմներ, վորոնց գործնական կիրառումը բավես բուն նշանակությամբ վճռական է մեր սոցիալիստական շինարարության հաջողությունների համար։ Դրանք ևս պետք է կարողանալ ցույց տալ։ Այստեղ մենք այդ պրոբլեմների յերկար շարանից կվերցնենք միայն յերկու հարց։

Խոսքն ամենից առաջ աշխատանքի մեջ ճկունություն ունենալու մասին է, «այն չտեսնված ճկունության մասին, վորի շնորհիվ կուսակցությունն ի վիճակի յե վերադասավորել իր շարքերը և հարյուր հազարավոր անդամներին կենտրոնացնել ցանկացած մեծ աշխատանքի շուրջը, առանց իր ներսում չմոթություն մտցնելու» (Ստալին)։

Ի՞նչ բան'և աշխատանքի մեջ ճկունություն ունենալը։ Դա «պայքարի ամենաբազմազան և արագ փոփոխվող պայմաններին անմիջապես արձագանքվելու ընդունակություն» է (Լենին, IV հատ. եջ՝ 496)։

Մեր կուսակցության ամբողջ պատմությունն այդպիսի ճկունության դեղեցիկ որինակներ է տալիս։ 1917 թվականը պայմանների արագ հաջորդականությամբ, քաղաքացիական կռիվների դարաշրջանը, նեպին անցնելը և «սովորեցեք առևտուր անել» լոզունգը, կուլակությանը դուրս մղելու քաղաքականությունից նրան համաչափ կոլեկտիվացման հիման վրա՝ իբրև դասակարգի՝ վերացնելու քաղաքականության անցնելը, կուսմոբիլիզացիաները հացամթերման ու զարնանացանի համար, Դոնբասի բայլշևիկյան վերակառուցումը—դրանք այլ որինակների շարանից վերցրած այնպիսի որինակներ են, վորոնք այստեղ շատ լավ ասում են իրենց «խոսքը տվյալ հարցի մասին»։

Իսկ այժմ՝ ստորին աշխատանքի պրակտիկայում ճկունություն ունենալու մասին։

«Արդիֆինալանը հարվածի տակ է...կուսակցության բոլոր ուժերը, բանվոր դասակարգի բոլոր ուժերը դեպի արդիֆինալանի կատարումը»... Այսպես եր վերջանում ԿԿ-ի 1930 թ. սեպտեմբերի 3-ի դիմումը:

Մոսկվայի «Ելեկտրոզավոդ»-ում հասկացան, վոր պայմանները պահանջում են մոբիլիզացիայի յենթարկել «բոլորին և ամեն ինչ», բոլոր կազմակերպությունների աշխատանքն արագորեն փոխադրել ԿԿ-ի դիմումի իրացման համար պայքարելու ռելսերի վրա, ճկունություն և հարվածային աշխատանք ցուցաբերել: Նույն որումն իսկ ԿԿ-ի դիմումը հաչցվեց յուրաքանչյուր բանվորի, ճաչի ընդմիջումների ժամանակ դրույցներ անցկացվեցին: Հարվածայինների արտակարգ հավաք, կուսկոմի և գործարկոմի չտապ պլենում, բանվորական կոնֆերանս, ամենորյա ստուգում՝ թե ինչ է արվում ցեխերում մոբիլիզացիայի ուղղությամբ, բոլորի լարված աշխատանք... Հնգամյակի յերկրորդ տարվա ծրագիրն ավարտվեց սեպտեմբերի 23-ին: Խոստացել եյին 25-ին: Այդպիսին եր բայլշևիկյան ճկունության արտադրական-տնտեսական էֆեկտը: Իզուր չեր, վոր «Պրավդա»-ն դեռևս սեպտեմբերի 5-ին հետևյալ վերնագրով առաջնորդող եր տալիս—«գործի անցեք անմիջապես, բայշևիկորեն, այնպես, ինչպես այդ անում է Ելեկտրոզավոդը»:

1931 թ. հունվար ամիս. խորհուրդների վերընտրություն եր:

Մոսկվայում առաջինը պետք է սկսեր «Ելեկտրոզավոդը»: Նորից մոբիլիզացիայի յե յենթարկվում ամբողջ գործարանային ակտիվը: Բակում հսկայական ծաղրանկարները, վորոնք գիշերները լուսավորում եյին լուսարձակների միջոցով, մտրակում են առանձին ցեխերի թափթփվածությունը կամպանիայում և արտադրական անհարթությունները: Բոլոր ցեխերում ամեն որ ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանք է տարվում: Կուսկոմում հերթապահում են գիշեր ու ցերեկ: Շատ է ստեղծված: Կոմունիստները գլխավորեցին իրենց հանդստյան որերը նվիրում են վերընտրական աշխատանքին: 23-ին վերընտրություններն են: 22-ին հավաքվում են բոլոր ցեխային «յեռանկյունիները», ամբողջ գեկավար կուսակտիվը: Աշխատանքի վերջնական ստուգում: Հաչվի յե առնվում ամեն ինչ—հանդստացողները, բուֆետների աշխատանքը, պիոներական խուփերը, նստարանների քանակը, չենքը և այլն: Արդյունքը լինում է ա՛յն, վոր «Ելեկտրոզավոդը» որինակելի կերպով է անցկացնում վերընտրությունները, ընտրողների 100 %-ի մասնակցությամբ: Արտադրության լավագույն հարվածային հերոսներին են «Ելեկտրոզավոդից» ուղարկում խորհուրդները:

Ճկունության այդպիսի բազմաթիվ որինակներ կարելի յե ցույց տալ ստորին ողակի աշխատանքից:

Ահա Ջրմուղի կայանի հարվածային բրիգադը: Կայանում տվարիա յե: Հարկավոր է ստարեկրացի մասնագետների հրավիրել: Ժամանակը անցնում է: Գործարանը չի սպասում: «Հարմարվել» է հարկավոր «անմիջապես», այդ բառի բուն նշանակությամբ: Բանվորական կոլեկտիվը վորոշում է—աշխատանքից չհեռանալ, սեփական ուժերով լիկվիդացիայի յենթարկել ավարիան: Ցենթադրված 20 որվա փոխարեն ավարիան լիկվիդացիայի յե յենթարկվում 7 որում:

Ահա վոլֆրամային բաժնի քիմիական-տերմիկական ցեխի փոխհսկողության բրիգադը: Ածխի սղոցիկների ցեխի բանվորները դիմում են ներկայացնում գաղային վառարանի սարքավորման գործում տիրող քաչքչուկների մասին, վորն ամբողջ ցեխի յերկարատև պարապուրդի պատճառ եր դարձել: Բրիգադն անմիջապես հետազոտում է գործը և վերացնում է ճեղքվածքը:

Ահա լամպերի բաժնի վակուումների ցեխի գրոհող բրիգադը: Ցեխում ապակու պատճառով ծանր դրություն եր ստեղծվել: Բրիգադը պատճառների հայտնաբերումից անցնում է անմիջապես պայքարելու թերակատարման դեմ և կանոնավորում է գործը:

Մեկ խոսքով, ամեն տեղ, ուր ճկուն են աշխատել, ամեն տեղ, ուր կարողացել են փոխադրվել պայքարի վճռական ճակատամասերը, հաղթանակ են տարել:

Ռեզերվների ոգտագործման պրոբլեմը մեր որերի հաջորդ, նույնքան վճռական հարցն է հանդիսանում: Բոլոր հնարավորությունները մինչև վերջն ոգտագործելու բայլշևիկյան մեթոդը պետք է առանձին ցայտունությամբ ցույց տրվի մեր պրոպագանդում:

Հնարավորությունը դեռևս իրականություն չե: Այն իրականություն դարձնելու համար հարկավոր է բոլոր բացահայտ և թաղուն ռեզերվներն առավելագույն չափով ոգտագործելու լարված ու համառ աշխատանք:

«Մեզ հարկավոր չեն վոչ պարասավոդներ, վոչ էլ գովերգողներ... Մեզ հարկավոր են զգաստ քաղաքաղետներ, վորոնք կարողանան վերցնել մաքսիմումն այն ամենից, ինչ կարելի յե վերցնել»,—գրում եր ընկ. Ստալինը 1923 թ.:

Գոյություն ունեցող սարքավորման լիակատար ոգտագործում, բանուժի նիշտ ոգտագործում, ռացիոնալիզատորական աշխատանք, վառելանյութի, եներգիայի, մետաղի և հումքի խիստ խնայողություն—ահա թե ինչպիսին է այդ պրոբլեմը՝ արտադրական պայքարի լեզվով թարգմանված:

Բերենք մի չարք որինակներ:

«Ելեկտրոզավոդի» լավագույն ցեխը, զոդիչների ցեխը, հարվածային յեռամսյակի արտադրական ծրագիրը ժամկետից առաջ կատարեց առաջինը ԽՍՀՄ-ում, 1930 թ. դեկտեմբերի 4-ին (ժամկետից 27 որ առաջ): Ցեխն այդ նվաճումն ունեցավ բացառապես չնորհիվ բոլոր ներ-

քին հնարավորությունների ճիշտ ոգտագործման: Հարվածային յուրաքանչյուր բանվորական առաջարկներից ստացվուծ տնտեսական նշեկան արտահայտվում է 176·000 ռուբլու դումարով: Ցեխում կան 12 հարվածային բրիգադ, 9 արտադրական կոմունա, 2 ռացբրիգադ, 1 փոխհսկողության բրիգադ, 1 որինակելի արտադրանքի բրիգադ, 100 %-ով հարվածայիններ:

Վերանորոգման-մոնտաժային ցեխի հարվածայինները ճիշտ հաշվի առան ցեխի ներքին հնարավորությունները: Առաջ յենթածրակային գծերը չինում էին 5 ամսում, իսկ հիմա՝ 2½ ամսում: Առաջ անվայր կալիչներ բոլորովին չէին պատրաստում, իսկ հիմա սովորել են:

Վակուումների ցեխի 6-Ա ռացբրիգադը մեծ աշխատանք կատարեց միակուռ ելեկտրոդների վրա: Նպատակն էր թանդարժեք նյութին ավելի եժանագին նյութով փոխարինել: Բրիգադը ելեկտրոդների միացման համար մի կատարելագործում մացրեց, որը պակասեցրեց ավելորդ շարժումները: Բրիգադը խոտանված ծուռումուռ պնակների վրա աշխատանք կատարեց, որով ապակին ոնտեսվում է և պարապուրդները քչանում են: Լամպերը տուփերի մեջ փաթաթելու նոր յեղանակ կիրառվեց:

Ահա խարիսխների ցեխի հարվածայինները: Բոլոր հնարավորություններն առավելագույն չափով ոգտագործելու, աշխատանքի բայշևիկյան մեթոդ կիրառելու մշտական հոգսը հանգեց այն բանին, որ հարվածային Պանովան վարչության առաջադրությունը կատարեց 137 տոկոսով, իսկ ինքնապարտավորությունը 129 %-ով: Հարվածային Գոլուբևան վարչության առաջադրությունը կատարեց 119%-ով, իսկ ինքնապարտականությունը՝ 109 տոկոսով և այլն:

Հաղթանակներ շահեցին նաև այնտեղ, որտեղ ոգտագործում էին բոլոր հնարավորությունները, «ներանցից վերցնում էին այն ամենն, ինչ կարելի էր վերցնել»:

***

Մենք չենք կամենում այս հոդվածի սահմաններում կանգ առնել մյուս պրոբլեմների վրա և ստորին պայքարի պրակտիկայում աշխատանքի լենինյան մեթոդների կիրառման նոր որինակներ բերել: Մի բան պարզ է—պրոպագանդիստը, ընդհանուր բացատրական աշխատանքը տեղական պայմանների հետ համատեղ դուգորդելով, կուսցանցն արդ-Ֆինլանդիայի համար պայքարելու մարտական զենք դարձնելով, պետք է ցույց տա և յերևան բերի այն յուրահատուկ կողմը, որ տարբերում է բայշևիզմը, այն, որ սկզբից իսկ «անանցանելի անդունդ» է բացում բայշևիզմի և մենշևիզմի—ոպորտունիզմի միջև: Ցեթե մենք բայշևիկ հարվածայինին ցույց տանք՝ կոլեկտիվի հետ միասին ամբ-

ողջ ինքնակիզացիայի յենթարկող ջրմուղի կայանը, ցույց տանք, թե այստեղ ինչպես է անդրադառնում ճկունության լենինյան մեթոդը նրա աշխատանքում, մի՞թե բայշևիկին դա չի ասի, որ, բայշևիկորեն պայքարելով արտադրության համար, նա իրոք լենինիստորեն է պայքարում: Մի՞թե վատ կլիներ, յեթե Լյուբերեցկի գործարանում, Ստալինգրադի տրակտորի գործարանում աշխատող պրոպագանդիստը միանգամայն հիմնական ձևով քարոզեր լենինյան ոդակի սկզբունքը և դրանով զիներ ամեն մի բանվորական կոլեկտիվի՝ պայքարելու սոցիալիստական արտադրության բարելավման համար:

Գործնականորեն մենք առաջարկում ենք—աշխատանքի լենինյան մեթոդների ծավալուն պրոպագանդը մացնել կուսուսուցման ամբողջ ցանցում: Այդ պետք է անցկենա յերկու հիմնական ուղղություններով: Առաջին՝ այս հարցերն արմատացնել ամեն մի թեմայի մշակման մեջ: Յերկրորդ՝ աշխատանքի լենինյան մեթոդների 3-4 հատուկ պարապմունք անցկացնել:

Համ Կ(բ)Կ ԿԿ-ի կուլտպրոպ բաժինը պետք է հոդ տանի աշխատանքի լենինյան մեթոդների որինակելի ծրագիր կազմելու կուսուսուցման ցանցի համար, տալու տեղերին և դրանով մեր այստեղ արտահայտած ընդհանուր նկատառումները փոխադրելու պրոպագանդի հասարակական-գործնական լեզվին:

Պրոպագանդիստի կողմից այստեղ մի բան է հարկավոր—ուսումնասիրել լենինիզմի ամենահարուստ զանձարանը, նրա դրությունները զուգորդել ակտիվ հեղափոխական պայքարի հետ, Համ Կ(բ)Կ զլխավոր գծի կենսագործման համար մղվելիք անհաշտ պայքարի հետ, այդ դրությունները գործարանային յեռուն օրերի լեզվին փոխադրել:

Վ. ԿԼԻՄՈՒՇԵՎ

ԹԵՈՐԻԱՅԻ ՅԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՒՍԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կուսլուսավորության հիմնական սկզբունքը, որն իմացողության մարքս-լենինյան դիալեկտիկայի սկզբունքն է հանդիսանում—թեորիայի և պրակտիկայի միասնությունը—դնալով ավելի ու ավելի յե առաջում կուսուսուցիչների աշխատանքը:

Կուսակցական ցանցը յուրացնում է Լենինի այն նախադրությունը, թե՝ «առանց աշխատանքի, առանց պայքարի, ոչ մի կոմունիզմ իմանալը վոչինչ չարժե, վորովհետև այդպիսին չարունակելիս կլինի այն հին բաժանումը, որ կա թեորիայի ու պրակտիկայի միջև, այն հին բաժանումը, որը հին բուրժուական հասարակարգի ամենազզվելի գիծն էր կազմում»[1]):

[1]) Ленин, т. XXV, изд. 2-е. Речь на III с'езде РКСМ.

ԿԿ-ի սեպտեմբերի 3-ի վորոշման մեջ տրված այն պարզ ու հստակ դիրքավորումը, թե՝ «կուսուսուցումը դպրոցներում և խմբակներում պետք է սերտորեն շաղկապվի կուսակցական գործունեությունների կոնկրետ խնդիրների հետ ձեռնարկություններում ու գյուղում»[1]), ինչպես նաև սոցիալիստական շինարարության տվյալ շրջանում կուսցանցին առաջադրվող ամող պահանջները հանդեցին այն բանին, վոր կուսլուսավորության աշխատողների դիտակցության մեջ ավելի մեծ չափով թափանցեցին Լենինի այն իդեաները, թե թեորիայի ուսումնասիրության յուրաքանչյուր քայլը պետք է շաղկապվի պրոլետարիատի անընդհատ պայքարի հետ:

Սակայն խորապես թխալ ու վնասակար կլիներ կարծել, թե բոլորը հասկացել են այս խնդիրը, թե սկզբունքորեն վոչ վոք չի առարկում, թե վոչ վոք չի խանգարում այս կարևորագույն սկզբունքի կիրառմանը, թե դպրոցների աշխատանքի այդ ուղղության համար պայքարելու հարցը հանված է:

Չխոսելով արդեն այն մասին, վոր շատ աշխատողներ այս դիրքավորումը դեռևս չեն յուրացրել և վոր շատերը դեռևս չեն հասկանում կուսլուսավորության առաջ դրված խնդիրները, հարկավոր է նկատի ունենալ, վոր «թեորիայի ու պրակտիկայի դիալեկտիկական հարաբերություն»[2]) կազմակերպելուց հրաժարվելը լենինիզմին խորթ աղեցությունների դրսևորումներից մեկն է:

Անհրաժեշտ է շարունակել համառ պայքարը կոմունիստական լուսավորության լենինյան ուղիի համար, պայքարը միակողմանիության դեմ կուսլուսավորության մեջ, ինչպես ընդդեմ բոլոր նրանց, ովքեր թեորիան կտրում են պրակտիկայից, այնպես էլ ընդդեմ նեղ պրակտիցիզմի, գործամոլության, ընդդեմ թեորիան պրակտիկայից բաժանելուն:

Կուսլուսավորության առաջ չեն դրված այնպիսի խնդիրներ, վորոնք տարբեր լինեն ամբողջ կուսակցության խնդիրներից. ընդհակառակը, կուսակցության ծրագրային ու տակտիկական դիրքավորումները վորոշում են նաև կուսլուսավորության խնդիրները:

Մարքսը գրում էր.—«Փիլիսոփաները լոկ տարբեր ձևերով բացատրում էին աշխարհը, բայց խնդիրն այդ աշխարհը փոխելն է[3]):

Այս հանճարեղ մտքի մեջ արտահայտված է այն ընդհանուր նպատակը, վոր ծառացած է պրոլետարիատի առաջ, վորը կոմունիզմի հիմքը, մարքսիզմ-լենինիզմի հիմքն և հանդիսանում: Ցեվ համաշխարհային պրոլետարական հեղափոխության դարաշրջանի լենինիզմ-մարքսիզմն այդ նպատակը տեսականորեն ու գործնականորեն անդրադարձրեց կոնկրետ պատմական պայմաններում, յուրաքանչյուր անգամ առաջադրելով հերթական ողակներ, պայքարելով հերթական խնդիրների համար: Այսպես, իշխանությունը գրավելուց հետո, այն բանից հետո, յերբ պրոլետարիատը բայլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ հնարավորություն ստացավ սոցիալիզմ կառուցելու, Վլադիմիր Իլյիչը հետևյալ կերպ ձևակերպեց այն խնդիրը, վոր ծառացած եր կուսակցության և բանվոր դասակարգի առաջ.—«Մեր դաստիարակությունը պետք է միացնել աշխատավորների կողմից շահագործողների դեմ մղվող պայքարին, առաջիններին ոգնելու համար լուծելու այն խնդիրները, վորոնք բղխում են կոմունիզմի ուսմունքից»[1]):

Անհրաժեշտ է, վորպեսզի կուսլուսավորության ֆրոնտի յուրաքանչյուր աշխատող, կուսդպրոցի յուրաքանչյուր ունկընդիր հասկանա Մարքսի և Լենինի այս հայացքները, վորոնք բղխում են դիալեկտիկական աշխարհայեցողությունից, մասնավորապես իմացողության և գործողության դիալեկտիկորեն լուծվող պրոբլեմից:

Ի հակադրություն բուրժուական փիլիսոփաների և ռեֆորմիստների, մարքսիզմ-լենինիզմն ընդունում է թեորիայի և պրակտիկայի միասնությունը: «Ճնշված դասակարգը՝ աշխարհիս մեծագույն ազատագրական շարժումն անհնարին է առանց հեղափոխական թեորիայի: Այն չի կարելի հնարել, նա աճում է աշխարհի բոլոր յերկրների հեղափոխական փորձի և հեղափոխական մտքի ամբողջությունից...»[2]):

Թեորիայի և պրակտիկայի այդպիսի միասնության փայլուն օրինակ և հանդիսանում մեր կուսակցության պատմությունը, Վլադիմիր Իլյիչի և լենինիզմի հետևողական կիրառողների վողջ գործունեությունը: «Ղեկավարել...նշանակում է կարողանալ համոզել կուսակցության քաղաքականության ճշտությանը, առաջադրել և կիրառել այնպիսի լոզունգներ, վորոնք մասսաներին մոտ են բերում կուսակցության դիրքերին և նրանց համար հեշտացնում են սեփական փորձի հիման վրա ճանաչելու կուսակցության քաղաքականության ճշտությունը, մասսային բարձրացնելու մինչև կուսակցության դիտակցության մակարդակը»[3]):

Դիալեկտիկան ճշմարտության չափանիշ է ընդունում պրակտիկան: Ֆեյերբախի մասին գրած թեզիսներում Մարքսը քննադատում է այն, վոր Ֆեյերբախը չի հասկանում «հեղափոխական» գործնականորեն-

[1]) ԿԿ-ի սեպտեմբերի 3-ի վորոշումը:

[2]) Ленинский сборник XI, замечания на книгу Бухарина «Экономика переходного периода».

[3]) Մարքս, Թեզիսներ Ֆեյերբախի մասին:

[1]) Ленин, т. XXV, изд. 2-е, Реч на III с'езде РКСМ

[2]) Ленин, т. XVIII, изд. 2-е, стр. 286—287, Честный голос французского социалиста, 1915 г.

[3]) Сталин, К вопросу ленинизма.

քննադատական գործունեության նշանակությունը», և Մարքսի հետևիմաստին համաձայն՝ Լենինը գրում էր.—«Վողջ մարդկային պրակտիկան պետք է մտնի առարկայի լիակատար «սահմանման» մեջ թե՛ իբրև ճշմարտության չափանիշ և թե՛ իբրև գործնական վորոշիչ այն կապի, վոր ունի առարկան այն ամենի հետ, ինչ հարկավոր է մարդուն»[1]: Վլադիմիր Իլյիչը մարքսիստական թեորիայի ճշտությունն ապացուցում է XIX դարի պատմության փորձով և հատկապես Ռուսաստանի հեղափոխական մտքի փորձով[2]:

Հայտնի է, թե ինչպիսի նշանակություն էին տալիս Լենինը և մեր ամբողջ կուսակցությունը թեորիային վերաբերող հարցին: Կուսակցությունը միշտ պայքարել է ընդդեմ նեղ պրակտիցիզմի, ընդդեմ յուրաքանչյուր քայլ սկզբունքորեն լուսաբանելու, ուսումնասիրելու և հիմնավորելու անկարողության, ընդդեմ թեորիան պրակտիկայից կտրելուն, վորը հանգում է կոպիտ գործամոլության, հեռանկարների կորստյան:

Ընկ. Ստալինը բացառիկ հստակությամբ և բնութագրում թեորիայի նշանակությունը, ասելով.—«Թեորիան, եթե նա իրական թեորիա է հանդիսանում, պրակտիկներին տալիս է կողմնորոշման ուժ, հեռանկարի հստակություն, աշխատանքի վստահություն, մեր գործի հաղթանակի հավատ»[3]:

Անհրաժեշտ է պայքարել այս հարցի լիակատար հստակության համար. թեորիայի և պրակտիկայի դիալեկտիկական միասնության լենինյան ուսմունքը յելակետ պետք է լինի դպրոցների աշխատանքներում:

Թեորիայի և պրակտիկայի հակադրումն ըստ եությունի հանդիսանում է մտածողության և գործողության բուրժուական մեթոդ, իսկ քաղաքականապես նա չափազանց վնասակար է, վորովհետև դիմաթափում և թուլացնում է պրոլետարիատին այն պայքարում, վոր մղում է նա ընդդեմ դասակարգային թշնամիների և ընդդեմ իր սեփական շարքերում յեղած՝ դասակարգային թշնամու գործակալների:

ԹԵՈՐԻԱՅԻ ՇԱՂԿԱՊՈՒՄԸ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՀԵՏ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ

Կուսակցության դլխավոր դիծը և կուսակցության դծի կիրառումից բխող լոզունգները վորոշում են կուսդպրոցների աշխատանքի բովանդակությունն ու մեթոդները տվյալ շրջանում, ծավալուն սոցիալիստական արշավի շրջանում:

[1]) Ленин, т. XXVI, изд. 2-е, стр. 135.—Еще раз о профсоюзах.
[2]) Ленин,—Детская болезнь «левизны».
[3]) Сталин,—К вопросам аграрной политики СССР.

Կուսդպրոցների աշխատանքը պետք է բաղկացած լինի յերկու տարրերից—1) մասսաների զինումը կուսակցության դլխավոր դծի համար մղվող պայքարում, 2) կուսակամակերպությունների ղեկավարությամբ կուսակցության լոզունգները դործնականում կիրառելուն մասնակցելը:

Ի՞նչպես են կուսդպրոցներն իրադործում կոմունիստական դաստիարակությունը:

Ուսումնասիրելով դպրոցների աշխատանքը, մենք տեսնում ենք մի շարք անցումներ, վոր կատարվում են թեորիայի և պրակտիկայի որդանական շաղկապման անկատար փորձերից մինչև այդ շաղկապման հաստատուն սիստեմը: Հարկավոր է մատնանշել, վոր Մոսկվայի մարզի դպրոցներում այս կամ այն ձևով, այս կամ այն լիակատարությամբ տեղի յե ունենում այդ շաղկապումը: Թեորիայի և պրակտիկայի միասնության ճանապարհին դպրոցի աշխատանքում սովորաբար առաջին աստիճան են հանդիսանում այն հետաղոտությունները, վոր դպրոցը հանձնարարում է ունկընդիրներին այս կամ այն հարցը մշակելիս: Այսպես, որինակ, Կրասնոխոլմսկի դործարանում ունկընդիրները ղեկավարների առաջադրություններով հետաղոտություն կատարեցին արդիֆինալանի կատարման մասին: Այդպիսի սկզբնական ձև և հանդիսանում է այն որինակը, վոր տալիս են ունկընդիրները ֆոխատության բաժանորդագրվելով (Վոսկրեսենսկու քիմկոմբինատ), իրենց հարվածային հայտարարելով (Մոսկվա–Նիժեգորոդսկայա), լավագույն ձեռնարկության կոնկուրսի մտնելով («Կրասնի Բոգատիր»): Դպրոցները կուսակցության լոզունգների կիրառման խնդրում հանդես են գալիս վորպես նախահարձակներ: Հաճախ դործն այսքանով սահմանափակվում է, և դպրոցը, վորպես կազմակերպված միավոր, այլևս դրան չի վերադառնում:

Մի քայլ առաջ դնալ և հանդիսանում դպրոցի պարապմունքների ժամանակ հետաղոտության նյութերն ունկընդիրների միջոցով քննարկելը և հատկապես այդ քննարկման հիման վրա մի շարք դործնական առաջարկներ ընդունելը: ՄՈԴԵՍ-ի բաղայում, ԿԿ-ի դլխումն ուսումնասիրելով, մտցվեցին դործնական առաջարկներ, վորոնք փոխադրվեցին դործարկում իրացման համար:

Մի քանի դպրոցներ ավելի հեռու յեն դնում: Նրանք բայլշևիկյան հաստատակամությամբ առաջ են մղում իրենց առաջարկները, հետևում են նրանց կատարմանը: Բրյանսկի յկրկաթգծի կուսդպրոցների միջոցով ղեկերում ստղանչող պոստեր են կազմակերպված, առանձնացված են խմբակային թղթակիցներ (ինֆորմատորներ), վորոնք պարտավոր են լուսաբանել խմբի առաջարկների իրացման արտադրական արդյունքները, նշանակված են ցեխային ներկայացուցիչներ, վորոնք պատասխանատու յեն խմբակների առաջարկների կենսագործման համար:

Մի շարք դպրոցներն իրենց առաջադրում են վորոշ, կոնկրետ խնդիրներ և ձգտում են նրանց իրագործմանը:

Սոկոլնիկյան ռայոնի դիզերային կուսխորհրդային № 2 դպրոցի ունկընդիրները գյուղատնտեսության վերակառուցման հարցը մշակելիս հայրենակցական բրիգադ կազմակերպեցին իրենց վայրում կոլեկտիվացում անցկացնելու համար: Ռուսակովյան տրամվայի պարկի մարքսիստական խմբակի ունկընդիրները չենք ճարեցին, յերևան հարնեցին թափուկները և խողարուծարան կազմակերպեցին. ներկայումս աշխատում են բանջարանոց կազմակերպելու վրա:

Սորհտնտեսությունների Զարայսկի խմբում ունկընդիրները գործարկոմի հետ միասին բանվորական առաջարկների հավաքման արկղ կազմակերպեցին, հարց ու պատասխանի տախտակ կախեցին և այլն:

Մորդվա կայանի իրիկնային կուսխորհրդային դպրոցները 2 կարմիր արող կազմակերպեցին, 9 կարմիր արողի կազմակերպված դիմադրություն ցույց տվին, թեյարանում և գնման կայանում գրույցներ անցկացրեցին: Սեմենկովո գյուղում կուսդպրոցը կարմիր արող կազմակերպեց և գյուղացիների մեջ լրացուցիչ բաժանորդագրություն անցկացրեց: Ռուզնեվո գյուղում դպրոցը, բջջի ղեկավարությամբ, կոլտնտեսություն կազմակերպեց, վորտեղ մտան նաև խմբակի ունկընդիրները: Լիվերս գործարանի դպրոցներից մեկը մի բրիգադ կազմեց՝ ցեխում արտադրական աշխատանքի դրված՝ բարելավման գծով աշխատելու համար: Բրիգադն աշխատում է գործարկոմի ղեկավարությամբ:

Բոլոր բերված օրինակները, (իսկ նրանց թիվը կարելի յե զգալիորեն ավելացնել) ասում են այն մասին, թե ինչ ուղղությամբ և աշխատում, պրոպագանդիստների և ունկնդիրների միտքը, ինչպես են իրացվում կուսակցության դիրեկտիվները. նրանք նաև նյութ են տալիս միքանի ընդհանրացումներ և յեզրակացություններ անելու համար:

ԴՊՐՈՑԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆ Է

Թեորիայի և պրակտիկայի միասնության նշանակությունը նրանումն է կայանում, վոր միայն այդ ճանապարհով կարելի յե սոցիալիստական հասարակարգի գիտակից կառուցողներ դաստիարակել և կուսակցական կերպությունները ոգնել կենսագործելու կուսակցության գլխավոր գիծը:

Ամեն կերպ բարձրացնելով ու զարգացնելով մասսաների այն նախաձեռնությունը, վորը ցուցաբերում են նրանք շաղկապման նոր ձևեր վորոնելու գործում, հարկավոր է ապահովել այդ աշխատանքի ղեկավարությունը (այդ թվում նաև մեթոդական ղեկավարությունը):

Առայժմ դեռ քիչ են այնպիսի օրինակներ, ինչպես Կլինյան Վ.Հ-ի

փորձը, յերբ Վ.Հ-ը կուսդպրոցներին ամրացրեց վորոշ գյուղերի, տընտեսական-քաղաքական կամպանիաներն անցկացնելու համար: Դեռևս թերահավատություն կա այն բանի նկատմամբ, վոր դպրոցի միջոցով կարելի յե մի շարք կամպանիաներ անցկացնել, վոր կուսկազմակերպությունները կարող են կոնկրետ առաջադրություններ հանձնարարել դպրոցին՝ ղեկավարի գլխավորությամբ կատարելու համար: Իհարկե, մեծ սխալ կլիներ, յեթե դպրոցներն իրենց աշխատանքը հակադրեին մյուս հասարակական կազմակերպությունների աշխատանքին, փոխարինեին նրանց: Ընդհակառակը, դպրոցների աշխատանքը պետք է ընթանա բջջի ղեկավարության ներքո, բջջի հանձնարարությամբ:

Հարկավոր է վերակազմել մեթոդական ձեռնարկներն ու առաջադրությունները: Մինչև այժմ նրանք կազմվում են առանց հաշվի առնելու այն նորը, վոր կա ցանցում. իսկ յեթե առաջադրության վերջում տրվում եվ են ունկընդիրների գործնական աշխատանքի օրինակներ, ապա նրանք մեծ մասամբ հնարված են, և վոր գլխավորն է, սերտորեն չեն շաղկապված տեսական մասի հետ: Նույնը նաև մեթոդական մշակումների նկատմամբ. հարկավոր է իրոք հնարավորություն տալ պրոպագանդիստին դրանք իր արտադրության սպեցիֆիկ պայմաններում անդրադարձնելու և պրակտիկայի հետ շաղկապելու համար:

Հարկավոր է պայքարել թեորիան պրակտիկայի հետ մեխանիկորեն շաղկապելու, պրակտիկական թեորիային շուլալելու դեմ: Անհրաժեշտ է գործնական հարցերն սկզբունքային բարձրության վրա հանել, իսկ նրանց ուսումնասիրությունից պետք է բղխեն գործնական առաջադրությունները: Հարկավոր է շարունակ հիշել, վոր միայն այն գործնական աշխատանքն է ոգտակար, վորը կոգնի ունկընդրին ավելի լավ յուրացնելու կուսակցության գիծը: «Թեորիան դառնում է անառարկելի, յեթե նա չի կապվում հեղափոխական պրակտիկայի հետ, ճիշտ այնպես, ինչպես պրակտիկան դառնում է կույր, յեթե նա իր ճանապարհը չի լուսավորում հեղափոխական թեորիայով»:

Հարկավոր չե ուժերը ցրիվ տալ, վորովհետև միայն այն ժամանակ թե՛ գործի և թե՛ ուսուցման համար եֆեկտ կստացվի, յերբ ամեն սկսված բանը մինչև վերջը կհասցվի: Կես ճանապարհին կանգնելը, առանց մեկը վերջացնելու թողնել և մյուսին ձեռնարկելը, միայն վնաս է բերում: Մենք ունենք այնպիսի փաստեր, յերբ մի պարապմունքում գրամական ռեսուրսների մոբիլիզացիայի համար բրիգադ են կազմում, մյուս պարապմունքում, առանց ստուգելու, առանց քննարկելու առաջին բրիգադի աշխատանքի կատարումը, ելի մի բրիգադ են կազմում կոլպայմանագրի ստուգման համար և այլն, և այլն: Այդպիսի «աշխատանքի» արդյունքները շատ հաճախ միմիայն բացասական են:

Դպրոցի աշխատանքը պետք է կառուցել մոտավորապես հետևյալ

կերպ։ Դպրոցը, ասենք թե, մշակում է 1931 թ. արդիականության հարցը։

1-ին պարապմունք։ ԿԿ-ի դիրեկտիվների քննարկում։ Առաջադրություն ունկընդիրներին—ստուգել բանվորական առաջարկների իրացումը ցեխում։

2-րդ պարապմունք։ Բանվորական առաջարկների կատարումն արգելակող հայտարերված մոմենտների քննարկում (բյուրոկրատիզմ, միանձնյա ղեկավարության սկզբունք չկատարելը, ցեխպրոֆբյուրոյի ղեկավարության բացակայությունը և այլն)։ Բյուրոկրատիզմի դեմ պայքարելու, միանձնյա ղեկավարության և այլն հարցերում կուսակցության վարած քաղաքականության սկզբունքային հիմնավորումը։ Բանվորական առաջարկների կենսագործման կոնկրետ միջոցների մշակումը։

Դրանից բացի, այս նյութերը ցեխպրոֆբյուրո ու բջիջ փոխադրել և մասնակցել այս հարցի քննարկմանը։ Հսկել աշխատանքի հետագա ընթացքին, բանվորների հետ դրույցներ կազմակերպել բանվորական դյուտերի նշանակության մասին, անձամբ մասնակցել դյուտարարության, պատի թերթի և կենտրոնական մամուլի համար թղթակցություններ կազմել։ Այդ թղթակցությունները կազմելիս՝ զրույց ունենալ մամուլի և բայլևիկյան ինքնաքննադատության նշանակության մասին, ցուցադրական դատ կազմակերպել բանվորական առաջարկների կատարումն արգելակող բյուրոկրատի հանդեպ և այլն, և այլն։

Կամ, որինակի համար, գյուղական վայրի դպրոցն իրեն խնդիր է առաջադրում վորոշ գյուղ կոլեկտիվացման յենթարկել։ Ինդուստրացման, գյուղատնտեսության վերակառուցման, խորհուրդների վերընտրության և այլ հարցերը շարունակ շաղկապվում են կոլեկտիվացման անմիջական աշխատանքի հետ։ Դպրոցը գյուղացիների համար զրույցներ և կազմակերպում դպրոցում ուսումնասիրված նյութերով և կոլեկտիվ կերպով կազմված կոնսպեկտներով, չքավորության ժողովներ և անցկացնում կուսակցամակերպիչների ղեկավարությամբ, զրույց և թերթում, յերևան է հանում գյուղխորհրդի աշխատանքը, քննում է այն պատճառները, վորոնք խանգարում են գյուղացուն կոլտնտեսություն մտնելու, բջիջին և Վ.Հ-ին իրազեկ է դարձնում խեղաթյուրումների մասին, այդպիսով գործնականում պայքարելով կուսակցության գծի համար։

Դպրոցների աշխատանքի այդպիսի կազմակերպումը, ընդհանրացնելով մի շարք դպրոցների ցիրուցան փորձը, կկարողանա ապահովել նրանց բեղմնավոր աշխատանքը, կավելացնի ուսման շահագրգռությունը, վորովհետև այստեղ յուրաքանչյուր ունկընդիր առարկայական դաս կստանա թեորիայի նշանակության մասին գործնական աշխատանքի ընթացքում և կտեսնի իր աշխատանքի արդյունքները։ Ցերբեք վատ չի լինի, ընդհակառակը, խիստ ողտակար կլինի, յեթե դպրոցն իր ուսման ժամանակ նվիրի մեկ-երկու կոնկրետ ու գործնական հարցերի, այդ աշխատանքի հետ շաղկապելով ուսումնասիրվող տեսական հարցերը։ Այդպիսի մասնագիտացումը լիովին համապատասխանում է ԿԿ-ի այն դիրեկտիվին, վոր կուսլուսավորության ցանցը պետք է կուսակտիվի կադրերի պատրաստման ավելի պարզորոշ դիրքավորում ստանա։

Ձգտեք և տարվել համապարփակ ու մեծ գործնական աշխատանքներով։ Պետք է հիշել Լենինի հետևյալ ցուցմունքը.—«Սեփական ուսմունքի բոլոր խնդիրներն այնպես դնել, վորպեսզի ամեն որ ամեն մի գյուղում, ամեն մի քաղաքում յերիտասարդությունը լուծի գործնական աշխատանքի այս կամ այն խնդիրը, թող լինի ամենափոքրիկը, թող լինի ամենահասարակը»[1]։

Հարկավոր է համակերպվել ունկընդիրների մակարդակին. այլ բան են մարքս-լենինյան խմբակների ու դիշերային կուսխորհրդային դպրոցների ունկընդիրները, այլ բան՝ նախնական դպրոցի ունկընդիրները։ Առաջինները կարող են վերցնել ավելի ընդհանուր խնդիրներ, որինակ արդիականության կատարման հետադիմությունը բոլոր ճեռնարկություններում, յերկրորդները՝ ավելի նեղ խնդիրներ, որինակ՝ ներքին ռեսուրսների մոբիլիզացիան տվյալ ցեխում։

Հարցն այս կերպ դնելիս, մի շարք ընկերներ իրավամբ առաջադրում են յերկու տիպի բեռնավորումների հարցը—մեկը ցեխային բջիջի գծով, մյուսը դպրոցի գծով։ Այս դրությունից դուրս գալու համար ցեխային բջիջները պետք է հաշվի առնեն նաև այն հանգամանքը, վորը տալիս է դպրոցը, այն պարտադիր պայմանով, վոր ունկընդիրների վրա գործնական աշխատանքը դանվի բջիջի հսկողության ներքո։

Դպրոցների աշխատանքում թեորիայի և պրակտիկայի միասնության ուղիով ընթանալով, հարկավոր է նախազգուշացնել հնարավոր խոտորումներից։ Միակողմանիությունը, ի վնաս հեղափոխական թեորիայի ուսումնասիրության՝ գործնական առաջադրություններով տարվելը խեղաթյուրում է կուսակցության տված դիրքավորումը։

ԳՐՈՊԱԳԱՆԴԻՍՏԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴԵՐԸ

Գրոպագանդիստի նշանակությունն ու դերն այն խնդիրների լույսի տակ, վոր դրված են կուսլուսավորության առաջ, անչափ մեծում են։ Մենք մոտենում ենք այնպիսի մի դրության, յերբ՝ «Ցուրաքանչյուր ղեկատար պետք է դառնա պետական ղեկավար, բոլոր գյուղացիները և բանվորների ղեկավարը անտեսական շինարարության գործում»[2]։

[1]) **Ленин**, 2-е изд., т. XXV, стр. 397.

[2]) **Ленин**, Речь на совещании политпросветов. 2-е изд., т. XXV, стр. 445.

Ներկա պայմաններում պրոպագանդիստը չի կարող միմիայն ուսուցիչ լինել, նա պետք է կուսաշխատող լինի: Նա պետք է ղեկավարի, քաղաքականապես դաստիարակի ունկընդիրներին վոչ միայն գրքերով, այլ և աշխատանքի փորձով, նա պետք է աշխատել սովորեցնի: «Հին տիպի պրոպագանդան պատմում է, որինակներ է տալիս, թե ինչ բան է կոմունիզմը: Բայց այս հին պրոպագանդան վոչ մի բանի պետք չէ, վորովհետև հարկավոր է գործնականորեն ցույց տալ, վոր հարկավոր է սոցիալիզմ կառուցել: Ամբողջ պրոպագանդան պետք է կառուցվի սոնոնական շինարարության քաղաքական փորձի հիման վրա»[1]:

Ավելանում է բանվոր պրոպագանդիստի նշանակությունը, վորովհետև նա ուրիշներից ավելի կարող է ապահովել թեորիայի և պրակտիկայի շաղկապումը: Ցեվ շատ են կարճատև այն կազմակերպությունները, վորոնք պրոպագանդիստին ծանրաբեռնում են զանազան բեռնավորումներով, փոխանակ համաձայն ԿԿ-ի վորոշման՝ դպրոցի ղեկավարությունը հիմնական բեռնավորում համարելու և ամբողջ դպրոցին՝ ղեկավարի պատասխանատվությամբ, վորոշակի առաջադրություններ հանձնարարելու:

Կուսակցական ցանցը, վորն այսոր ևս աչքի զարկող տեղ է գրավում կուսակազմակերպության աշխատանքում, մասսաներին կուսակցության ղլխավոր գծի համար մոբիլիզացիայի յենթարկելու դրծում, առաջիկայում ևս ընթանալով թեորիայի ու պրակտիկայի միասնության ուղիով, կդառնա կուսակցության կարևորագույն գործիքը սոցիալիստական շինարարության ասպարիզում:

Վ. ՉԵԳՐԱՅՈՎ

ԹԵՈՐԻԱՅԻ ՑԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՇԱՂԿԱՊՈՒՄԸ ՂԵԿԱՎԱՐԵԼՈՒ ՁԵՎԵՐԻ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սկսնակ պրոպագանդիստը փորձի պակասության պատճառով հաճախ մեծ դժվարության մեջ է ընկնում, յերբ ձեռնարկում է ունկընդիրների պրակտիկայի կազմակերպման ու ղեկավարման պրոցեսին:

Կանխելու համար այս ասպարիզում հնարավոր սխալները, վիժեցումները և ազավաղումները, աշխատանք—յեղած փորձերից յելնելով—նշել հիմնական դիրքավորումները և հնարավորության չափով մատնանշել ունկընդիրների հասարակական-քաղաքական աշխատանքը կազմակերպելու ու այդ աշխատանքն ուսուցման հետ շաղկապելու կոնկրետ ուղիները:

Ամեն մի պրոպագանդիստ առաջ ամենից ավելի հաճախ ծագում են հետևյալ յերեք խմբի հարցերը—1) ունկընդիրների համար առաջադրությունների տիպեր ընտրելը, այդ առաջադրությունների բնույթը, նրանց կատարման կոնտրոլի ու ստուգման ձևերը, դպրոցների ուսումնական և հասարակական-գործնական աշխատանքում սոցմրցման ու հարվածայնության մեթոդներն ոգտագործելը. 2) մշտական հրահանգավորումը, ունկընդիրներին աշխատանքի ընթացքում, գործնական առաջադրությունների կատարման պրոցեսում ոգնելը, հատկապես հասարակական-կուսակցական բեռնավորման աշխատանքի կատարման խնդրում յուրաքանչյուր ունկընդրին ոգնելը. 3) կուսդպրոցների և խմբակների հասարակական-գործնական աշխատանքը բջիջների ամենոքյա կուսղեկավարությամբ ապահովելու մեթոդներն ու ձևերը:

Համառոտակի քննենք հարցերի այս շրջանակներն առանձին-առանձին: Յուրաքանչյուր առաջադրություն-հանձնարարություն—լինի դա ամբողջ դպրոցին, թե առանձին ունկընդիրներին կամ մի խումբ ունկընդիրներին տրված—պետք է լինի առավելագույն չափով կոնկրետ, ճիշտ և ռեալ: Այդպիսի առաջադրությունը, դրանից բացի, պետք է խստիվ նախատեսված ունենա կատարման վորոշակի ժամկետ: Յեթե առաջադրություն-հանձնարարությունը տրվում է մի խումբ ընկերների, պետք է անհատապես ցույց տալ այն անձանց, վորոնք պատասխանատու յեն նրա կատարման համար: Վոչ մի դիմադրություն թույլ տալ չի կարելի:

Յեթե ունկնդիրներին տրվող առաջադրություններն անհասկանալի յեն ու վոչ-կոնկրետ, ապա դա հաճախ ուղղակի ապացույց է այն բանի, վոր պրոպագանդիստը ձևական-բյուրոկրատական մոտեցում ունի իր պարտականությունների հանդեպ, չի կարողանում կամ, ավելի շատ, չի կամենում թափանցել գործի եյության մեջ. մյուս կողմից՝ այդ վկայում է այն մասին, վոր ունկնդիրները թույլ են մասնակցում այդ առաջադրությունների կազմությանը: Այդպիսի առաջադրությունները կատարման կոնտրոլի ու ստուգման հնարավորությունից զրկում են, դիմադրկում են կատարման պատասխանատվությունը,—հետևարար խզուբ ու ապարդյուն են անցկենում:

Ունկնդիրների համար պրակտիկայի այս կամ այն որյեկտն ընտրելիս, պրոպագանդիստը պետք է ղեկավարվի «ավելի լավ է քիչ, բայց լավ» լենինյան սկզբունքով: Չի կարելի «ընդգրկել անընդգրկելին», հարկավոր չէ ուժերը ցրիվ տալ, չի կարելի մեկ անգամից ընդգրկել ձեռնարկության գործնական աշխատանքների բոլոր տեսակները: Հարկավոր է ընդգրկել ամենաթույլ ողակը, ավյալ ցեխի, ավյալ ճյուղի մարտական հակատամասերը և նրանց վրա կենտրոնացնել ունկընդիրների ուշադրությունը:

Ահա մեկն այն որինակներից, թե ինչպես չպետք է ունկընդիրների

[1]) Ленин, Речь на совещании политпросветов. 2-е изд. т. XXV, стр. 445.

համար գործնական առաջադրություններ ընտրել: Դարձնանացանի կոմսոմոլական նախապատրաստության ամենայեռուն շրջանում Մոսկվայի շրջաններից մեկը սերմֆոնդերի հավաքման գծով ու տախտակի բաշխությամբ, և ահա պրոպագանդիստը, փոխանակ այդ ձեղքվածքի վերացման համար ունկնդիրներին մոբիլիզացիայի յենթարկելու, նրանց հանձնարարում է...«ստուգել շրջանի մանկամսուրների դրությունը», վորովհետև, պատճառաբանում եր այդ պրոպագանդիստը, «մսուրների աշխատանքի անկանոնությունը բանուժին կորում է դարձնանացանի կոմպանիայի պլանները կատարելուց»: Այստեղ ցայտուն կերպով յերևան է գալիս պրոպագանդիստի կազմոնի-բյուրոկրատական վերաբերմունքն իր պարտականությունների հանդեպ, թեորիան պրակտիկային շաղկապելու գործում հիմնական ողակից կառչելու անկարողությունը:

Սակայն դեռ քիչ է ճիշտ, հարկավոր, կոնկրետ և ռեալ առաջադրություններ նշել, հարկավոր է ապահովել նրանց կատարման կոնտրոլը և աշխատանքի վորակը: Յերբ առաջադրությունների որյեկտն ընտրված է, անհրաժեշտ է ունկնդիրների հետ միասին մշակել նրա կատարման պլանը, այսինքն՝ աշխատանքի առանձին ողակների ղեկավարումը, ուժերի բաժանումը, ժամկետները և այլն, ինչ վորում հարկավոր է խուսափել այնպիսի դրությունից, յերբ միևնույն բրիգադի դլխին թափում են անսահման քանակությամբ պարտականություններ:

Այդպիսին է ունկնդիրների պրակտիկայի կազմակերպման առաջին նախապատրաստական շրջանը: Դաստիարակչական խոշոր նշանակություն ունեցող նախապատրաստական աշխատանքն ավարտելուց հետո, ունկընդիրները ձեռնարկում են առաջադրությունների անմիջական կատարմանը:

Ցուրաքանչյուր ունկընդիր, դպրոցի գործնական առաջադրության կատարման ընթացքում, պետք է անմիջապես իր շուրջն ակտիվ ստեղծի, հատկապես անկուսակցական բանվորներից: Պրոպագանդիստի դերն առանձնապես մեծ է ունկընդիրներին հանձնարարված առաջադրությունների կատարման ընթացքում: Նրա պարտականությունների մեջ է մտնում յուրաքանչյուր ունկընդրի՝ հենց աշխատանքի ընթացքում՝ ոգևոր խորհրդով, մեթոդական ցուցմունքով, տեղեկանքով, բացատրությամբ, գործնական առաջարկով: Վատ է այն պրոպագանդիստը, վորը չի թափանցում գործի տեխնիկայի և եյության մեջ, վորը չի իմանում ավյալ արտադրության առանձնահատկությունները, հաշվի չի առնում բանվորների պահանջները և այլն: Պրոպագանդիստի ուշադրությունն ու ղեկավարությունը պետք է նպատակ ունենա վոչ միայն ունկընդիրների ուժերով յերևան հանել ու ստուգել գործի դրությունը, այլ և գործնականում ողնել վերացնելու թերությունները, վորպիսովի ստուգման հետևանքով անպայման գործնական միջոցառումների ձեռնարկվի վերացնելու հայտնաբերված թերությունները, դրական փորձը փոխադրելու այլ բնագավառները: Ունկընդիրների պրակտիկան պետք է կրի վոչ թե հետաղոտական բնույթ, այլ հասարակական կազմակերպությանն ողնություն ցույց տարու բնույթ, վորովհետև դպրոցը հենց հանդիսանում է հասարակական մի միավոր, վոր կոչված է ողնելու կուսակցությանը՝ նրա տնտեսական-քաղաքական խնդիրների կատարման գործում:

Քիչ է գործնական միջոցառումներ նշել, հարկավոր է նրանց գործադրության մեջ դնել, ունկընդիրների գործնական առաջարկների կատարման ստուգումն ապահովել: Ի՞նչպես այդ անել: Դպրոցը պատասխանում է հնդոբյակում մեկ անդամ, և յեթե նա ունկնդիրներին գործնական հանձնարարություններ է տվել, ասենք թե, դարձնանացանի շուրջը, ապա հաջորդ պարապմունքին պետք է ամփոփել հնդոբյակում կատարված աշխատանքը, վորի համար լսել բրիգադների, խմբերի ու առանձին ունկընդիրների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հաշվետվությունները և տեղն ու տեղը, փորձի հաշվառման հիման վրա, նշել գործնական միջոցառումներ հաջորդ հնդոբյակի համար, գործելով ոպերատիվ ձևով, ճիշտ հաշվի առնելով ժամանակը,—այլապես կարելի յե բաց թողնել ամբողջ կամպանիան:

Ունկընդիրների համար առաջադրությունների կատարման այս կամ այն ձևերի ընտրություն կատարելիս, պրոպագանդիստը հաճախ վորոշ չափով ի չարն և գործադրում հարվածային բրիգադներ կազմակերպելու ձևը: Այստեղ բրիգադ, այնտեղ բրիգադ, մի գլուխ մեկին հարվածային բրիգադների յեն ուղարկում: Ճի՞շտ է այդ արդյոք: Վոչ, ճիշտ չե: Անշուշտ, հարկավոր է ամեն կերպ խրախուսել հարվածային աշխատանքի մեթոդները, բայց մի՞թե այդ մեթոդները լոկ հարվածային բրիգադներ ստեղծելու մեջ են կայանում: Ինչո՞ւ նրանց հետ միասին չոգտագործել նաև մրցության բարձրագույն ձևերը և հարվածային աշխատանքի այլ ձևերն ու մեթոդները, որինակ՝ յետ մնացող ցեխերի, մասերի, բրիգադների, հերթերի, կոլտնտեսությունների և ունկընդիրների խմբերի նկատմամբ հասարակական բուքսիր կազմակերպելու ձևը: Ինչո՞ւ չոգտագործել հանձնարարված գործնական առաջադրությունների կատարման գործում ունկընդիրներին ներդրավելու այնպիսի ձևեր, ինչպիսին են «կոնտրոլ պոստերը», վորաշ մարդաուտներում, «հսկիչ պոստեր» հացամթերումների, հանգույցների ու ենթվածքների դեմ մղվելիք պայքարի, փոխադրումների գործի ստուգման մասին ազդանշան տալու և այլ գծերով: Ինչո՞ւ չոգտագործել

այնպիսի ձևեր, ինչպիսին են անհատական որինակը, նախաձեռնող խմբեր, ոժանդակող խմբեր՝, «թեթև հեծելազորի» մեթոդով աշխատող աշխավի ու ստուգման խմբեր ստեղծելը, անհատական ու խմբական հանձնարարությունները, ունկընդիրների կոնֆերանսները, ֆոխադարձ արտադրական եքսկուրսիաները վորակյալ բանվորների ու մասնագետների մասնակցությամբ, արտադրական-տեխնիկական տրիբունալները, քնկերական դատերը, չվողների, գործալքողների, ծուլերի, կորզողների հանդեպ, յետ մնացող ագրեգատի, յետ մնացող կուսխմբակի չեֆությունը վերցնելու սիստեմը, արտադրական նվաճումների այսպես կոչված «կարմիր մատյան» մտցնելը, դպրոցների գործնական աշխատանքում այսպես կոչված հանդիպական պլաններ կազմակերպելը և այլն, և այլն: Նշված ձևերն ամենևին լիակատար ու պարտադիր լինելու հավակնություն չունեն: Ցնցնելով տեղական պայմանները հաշվի առնելուց, յուրաքանչյուր խմբակ կգտնի իր ձևերը, իմ մեթոդները, իր ցուցանիշները: Ինչքան ավելի բազմազան են ունկնդիրների նախաձեռնության դրսևորման ձևերը, այնքան ավելի հարուստ, ավելի կենդանի կարևոր է ուժերը ցրվի չտալ, վոչ թե զուգահեռաբար, այլ հետևողականորեն կիրառելով և ծավալելով սոցմրցման ու հարվածայնության ձևերը կուդպրոցների աշխատանքում:

Մրցությունը դպրոցներում և խմբակներում պետք է յերկմիտանական բնույթ ունենա[1]): Մեկ կողմից՝ բոլոր դպրոցները, խմբակները և դասընթացները դուրս են գալիս ձեռնարկությունների, հիմնարկությունների, կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների և ՄՏԿ-ների ընդհանուր սոցիալիստական մրցության այն միջոցառումների շուրջը, վորոնց նպատակն է բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, կատարման ապարատի ռացիոնալացումը և դյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը: Կուսլուսավորության ցանցի կողմից սոցիալիստական մրցությանը մասնակցելու յերկրորդ ուղղությունը պետք է լինի այն մրցությունը, վոր կազմակերպվում է կուսուսուցման ցանցի ներսում՝ կուսակցության կողմից նրան առաջադրված խնդիրների լավագույն կատարման համար, ընդհանուր արտադրական մրցությանն ամենաակտիվ մասնակցություն բերելու, նոր ուսումնական տարուն ժամանակին ու խնամքով նախապատրաստվելու, ուսուցումն ունկընդիրների գործնական աշխատանքի հետ լավագույն ձևով շաղկապելու և բանվոր պրոպագանդիստներին պատրաստելու ու առաջ քաշելու համար:

[1]) Այն ընկերներին, վորոնք հետաքրքրվում են այն հարցով, թե կուդպրոցներն ինչպես պետք է մասնակցեն սոցմրցմանը, հանձնարարվում է կարդալ ընկ. Զաֆ. Բուրասի և Վիկտ. Գոլոնկոյի բրոշյուրն այդ հարցի մասին (հրատ. «Московский Рабочий», 1930 թ.):

Ունկընդիրների հասարակական պրակտիկայի պրոցեսի կազմակերպման պլանում ավելի մեծ ուշադրության է արժանի այսպես կոչված «հիրկնակի» բեռնավորումների հարցը: Այս հարցին դեմառդեմ է դալիս գրեթե ամեն մի պրոպագանդիստը: Մեզ մոտ դպրոցներում, խբրև կանոն, սովորում է թե՛ կուսակցական և թե՛ անկուսակցական ակտիվը: Մեր ակտիվը չափազանց ծանրաբեռնված է ինչպես ամենորյա արտադրական, այնպես և հասարակական-կուսակցական աշխատանքով: Հարց է ծագում—ի՞նչպես կազմակերպել այդ ունկընդիրների պրակտիկան դպրոցի միջոցով, առանց դրանց հիմնական աշխատանքից կտրելու: Այդ իսկապես մեծ դժվարություն է ներկայացնում կուսլուսավորության սիստեմում թեորիան պրակտիկայի հետ շաղկապելու գործում: Մեզ մոտ հաճախ անճիշտ վերաբերմունք են ցույց տալիս այդ գործի հանդեպ, յերբ դպրոցն իր խնդիրն է համարում անպայման մի վորևե նոր բեռնավորում «հնարել» իր ակտիվիստ-ունկընդիրների համար, ամենևին հաշվի չառնելով այն փաստական հասարակական աշխատանքը, վորը տվյալ ընկերն իրականում արդեն կատարում է: Այս մոտեցումը ճիշտ չէ: Դա միայն դժվարացնում է դպրոցների աշխատանքը և սահմանափակում է այն դերը, վոր ունեն նրանք իրբև կուսկազմակերպությունների ողնաշարները տեղերում: Հիմնական դիրքավորում պետք է վերցնել այնպիսի ուղղությամբ, վորպեսզի յուրաքանչյուր ունկընդրի համար ապահովվի նրա հիմնական հասարակական և կուսակցական բեռնավորման կատարումը:

Բերենք մի որինակ: Դպրոցի կազմում կան՝ տեխնորմավորման բյուրոյի նախագահը, ցեխարտադրությունների քարտուղարը, ակումբի վարչության անդամը, կոոպերատիվի լիազորը, դյուղխորհրդի նախագահը, կոլտնտեսության նախագահը և այլն: Կարիք չկա նրանց համար նոր բեռնավորումներ հնարել, հարկավոր է ապահովել նրանց այն բեռնավորումների ամենից ավելի արագ, ամենից ավելի հաջող, ամենից ավելի ռացիոնալ կատարումը, վոր ունեն նրանք իրենց հիմնական աշխատանքի, իրենց հասարակական ու կուսակցական աշխատանքի գծով, այլապես դուք կտապալեք ամբողջ գործը: Այդ, իհարկե, չի վերացնում այն հանգամանքը, վոր դպրոցներն ընդհանուր առմամբ պետք է իրենց ուժերի ներածին չափով գործնական առաջադրություններ կատարեն: Այդ իր հերթին յենթադրում է, վոր դպրոցը պետք է ամենից առաջ հետևի, վորպեսզի յուրաքանչյուր ունկընդիր մշտական հասարակական ու կուսակցական բեռնավորում ստանա և իր ուժերի ու հնարավորությունների ներածի չափով կատարի դպրոցի հավելյալ հանձնարարությունները բջիջների ղեկավարությամբ:

Բջիջների կողմից կուսլուսավորության ցանցին ամենորյա կուսակցական ղեկավարություն ցույց տալու հարցը կուսլուսավորության սիս-

տեմում թեորիան պրակտիկայի հետ շաղկապելու վճռական հարցերից մեկն է։ Սիրելում են այն պրոպագանդիստները, որոնք ունկընդիրների հասարակական-գործնական աշխատանքի թույլ կազմակերպումը փորձում են արդարացնել պատճառ բերելով կուսակցական ղեկավարության բացակայությունը, ինչպես նաև սիրելում են այն բջիջները, որոնք ցանցի նկատմամբ իրենց թույլ ղեկավարությունը փորձում են արդարացնել դպրոցների ունկընդիրների և պրոպագանդիստների ուսուցման բացակայությամբ։

Մեր շինարարության բուռն տեմպերի, մեր աշխատանքի վիթխարի մասշտաբների պայմաններում միանգամայն անհեթեթ և դառնում այն դրությունը, երբ կուսակազմակերպությունը յետ է մնում կուսդպրոցի աշակցությունից։ Այդպիսի կազմակերպությունը կամ ստորաբաժանումներն թերագնահատում և կուսլուսավորության դերը, կամ անընդունակ է ղեկավարելու հասարակական-գործնական աշխատանքը տեղերում (ակտիվ ստեղծել և այլն)։ Նույն չափով անթույլատրելի ու անհեթեթ է դառնում այն դրությունը, երբ պրոպագանդիստը, բջիջի ղեկավարությանն ապավինելով, ինքը նրան վոչ մի իրական աշակցություն ցույց չի տալիս նրա առաջ դրված խնդիրների կատարման գործում, վոչ մի նախաձեռնություն չի հայտնաբերում, սպասում է վերևի ցուցմունքներին և այլն։ Այդպիսի պրոպագանդիստն իրավունք չունի կուսղեկավարության թույլության մասին դանդատվելու, նա դարի չի տալիս, չի ժամանակում ամրացնելու ուսուցման գործի կուսղեկավարությունը, նա գործնականում չի ապացուցել՝ կուսլուսավորությունը ձեռնարկություն և գյուղում աշխատանքի ճիշտ կազմակերպման գործում, վորպես ակտիվ ոգնական ոգտագործելու հնարավորությունն ու անհրաժեշտությունը։

Կուսլուսավորության գործի կուսակցական ղեկավարության առաջ խնդիր է դրված ուղղություն տալու, կազմակերպելու, ոգտագործելու և գործողության վերածելու կուսդպրոցների հասարակական-գործնական աշխատանքը, իսկ կուսդպրոցների ունկընդիրներն ու պրոպագանդիստները պետք է գործնականում ոգնեն կուսակցական կազմակերպություններին նրանց առաջ դրված խնդիրների կատարման գործում։ Այդպես է դրված հարցը։

«Կուսլուսավորության ցանցի հասարակական-գործնական աշխատանքի կազմակերպման փորձը,—ասված է այդ առթիվ «Կուսուսուցումը սոցիալիստական շինարարության պրակտիկայի հետ շաղկապելու մասին» Համկ (բ)Կ Մոսկվայի Կոմիտեի կողմից տրված մեթոդական նամակում,—յերեվան հանեց կուսակցական ղեկավարության նկատմամբ անթույլատրելի մեկուսացման առանձին դեպքեր, բջիջների քաղաքական պերի և ներկուսակցական աշխատանքի կոպիտ փոխարինման անթույլատրելի փորձեր (որինակ՝ չքավորության կազմակերպման ինքնուրույն ղեկավարությունը դպրոցների կողմից)։ Միքանի վայրերում կան փորձի միջոցով հայտնաբերված այնպիսի ծայրահեղություններ, յերբ պրոպագանդիստն ինքն է անում ամեն ինչ, իսկ տասնյակ խմբակցիները մեկ կողմ են քաշված։ Թեորիան պրակտիկայի հետ շաղկապելու նպատակով դպրոցների հասարակական-գործնական աշխատանքի այսպիսի «կազմակերպումը» այդ հարցի առթիվ ԿԿ-ի և Մոսկվայի Կոմիտեի տված դիրեկտիվների բացահայտ աղավաղումն է հանդիսանում։ Միաժամանակ պետք է ամբողջ ուժով հարվածել այն տենդենցները, որ յերբեմն հայտնաբերում են միքանի բջիջների բյուրոները, այն է՝ ունկընդիրների հասարակական-գործնական աշխատանքի կազմակերպման ուղղությամբ դպրոցի կատարած կոնկրետ-գործնական քայլերը նրանք դնահատում են իբրև կուսակազմակերպությունը դպրոցով փոխարինելու քայլեր։ Այսպիսի փաստերը վկայում են, մեկ կողմից՝ կուսլուսավորության դերի բյուրոկրատական խեղաթյուրման մասին, իսկ մյուս կողմից՝ այդպիսի կուսբջիջների աշխատանքի թուլության մասին։ Այդպիսի դեպքերում հարցը դեմ է առնում՝ կուսլուսավորության ցանցը ձեռնարկություններում և գյուղում մասսայական կուսաշխատանքի ճիշտ կազմակերպման գործում վորպես ակտիվ ոգնական ոգտագործելու անկարողություն։ Ուսուցումը կյանքից կտրելու ստորաբաժանումային տենդենցների (խոսքի և գործի բաժանումը ստորաբաժանումի բնորոշ գիծն է) այս անդրադարձումն սրինականացնում է պրակտիկայի նկատմամբ թեորիայի հետամնացությունը»[1])։

Այս քաղվածքում ստանում դիրեկտիվ է տրված կուսլուսավորության ցանցի ամենորյա կուսակցական ղեկավարության և պրոպագանդիստների խնդիրների մասին։ Մնում է միայն միքանի որինակներով յուրացնել այդ հարցի առթիվ կուսակցության տված դիրեկտիվների խեղաթյուրման «պրակտիկան» և դրա հետ մեկտեղ նշել Մոսկվայի Կոմիտեի ցուցմունքի իրագործման կոնկրետ ուղիները, մեթոդները և ձևերը։

Ահա մեկն այն որինակներից, թե ինչպես է պրոպագանդիստը կոպիտ կերպով փոխարինում բջիջի քաղաքական դերն ու ներկուսակցական աշխատանքը։ Դպրոցներից մեկն ամբողջ յերկու պարապմունք նվիրեց այն հարցին՝ ճի՞շտ է թե՞ սխալ, վոր այս ինչ ընկերը վտարված է կուսակցությունից, նպատակահարմա՞ր է, թե՞ անհարմար տվյալ շրջանն այս տարի համատարած կոլեկտիվացման շրջան հայտարարել, իրեն խնդիր առաջադրելով վորևե մի անհատական-քաղաքական կամպանիայի համար վոչ միայն քաղաքական դիրքավորումներ տալ, այլև պատասխանատու լինել նրանց համար։

Պարզ է, վոր ամենից առաջ կուսակցական կազմակերպությունն

[1]) «Պրոպագանդիստ», № 2, 1930 թ., հոկտեմբեր։

է, որ պետք է «գլխավորի, ղեկավարի ու պատասխանատու լինի որևէ մի կամպանիայի բաղաքական դիրքավորումների խնդրում»: Նա յե, որ կուսցանցն ոգտագործում է հենց իր իսկ նշած ոպերատիվ առաջադրությունների և պլանների իրականացման գործում: Վերոհիշյալ դրությունը չի հասկացել կուսկազմակերպությունների ղեկավար դերը և փորձ էր անում վարչական ճանապարհով փոխարինել կուսղեկավարությունը: Մենք պետք է հարվածենք այդպիսի վոստյունները:

Հակառակ ծայրահեղության մեջ են ընկնում այն ընկերները, որոնք, ինչպես այդ հաճախ է լինում, դպրոցի առաջ չեն դնում վոչ մի տեղական ցավոտ հարց, ունկընդիրների ուժերը և ուշադրությունը մոբիլիզացիայի չեն յենթարկում այդ հարցի բացատրության համար, վախենալով, որ դպրոցներն իրենց պրակտիկայով չլինի թե փոխարինեն կուսկազմակերպության աշխատանքը: Այդ վախը վոչնչով չի հիմնավորված: Նա ունկընդիրներին միայն կտրում է հասարակական-գործնական աշխատանքից և չի նպաստում ընդհանրապես կուսկազմակերպության ամրանը:

Վերջապես հարկավոր է վերջ դնել կուսցանցի ունկրնդիրների ուսումնական-տեսական և գործնական աշխատանքներն իրար հակադրելու, միմյանցից անջատելու «պրակտիկային», ինչպիսի պատրվակով էլ որ նա կատարվելիս լինի: Հաճախ մենք լսում ենք, թե «կամպանիաներն ուսուցմանը խանգարում են, ուսուցումը գործնական աշխատանքի համար արգելք և հանդիսանում»,—այդպես են «պատճառաբանում» միքանի աշխատողներ: Այդպիսի ֆորմուլա հրապարակելով, մարդիկ, թերևս առանց ինքներն այդ գիտակցելու, բացահայտորեն արտացոլում են ուսուցումը կյանքից կտրելու ոպորտունիստական տենդենցը: Այս մարդկանց մոտ շարունակ ստացվում է կա՛մ այդպիսի մի թեորիա, որ ցամաք է ու կյանքի նշաններից զուրկ, կա՛մ գործամոլություն, աշխատանք՝ առանց հեռանկարի, առանց վորոշակի գծի: Լենինը գրում էր.—«Նեղ պրակտիցիզմը, որ կտրված է շարժման տեսական լուսաբանությունից ամբողջությամբ վերցրած, շարժումը սխալ ճանապարհի վրա հանելու վտանգն է ստեղծում»: Այդ առանձնապես պետք է հիշեցնել այն ընկերներին, որոնք կարծում են, որ ինչպես հոմոր, որ զարմանացանքի և բերքահավաքի կամպանիաների չրջանում վարեն ուսուցում անիմաստ է:

Շատ հաճախ, վերջապես, թեորիան պրակտիկայի հետ չաղկապելու խնդրում հանդիպում ենք այնպիսի վերաբերմունքի, երբ փորձում են տեսական ուսուցումը «հետաձգել» մինչև հրնթացիկ կամպանիաների վերջանալը», կամ հակառակն են վարվում, այն է՝ գործնական աշխատանքը հետաձգում են մինչև ուսուցման վերջանալը:

Հարկ չկա ապացուցելու, որ թե՛ մեկից և թե՛ մյուսից անցյալի

հոտ է փչում. առաջինը մատնում է մեր ժամանակների բուռն տեմպերի պայմաններում միքանի կազմակերպությունների աշխատելու լիակատար անզորությունը և գործնականում նսեմացնում է հեղափոխական թեորիան, բացատրում է այն հանգամանքը, որ իսկական թեորիան պրակտիկներին տալիս է «կողմնորոշման ուժ, հեռանկարի հստակություն, աշխատանքի վստահություն, մեր գործի հաղթանակման հավատ» (Ստալին), իսկ յերկրորդը կրկնում է «բուրժուական հասարակարգի ամենազզվելի գիծը»—թեորիայի անջատումը պրակտիկայից: Մենք պետք է թեորիայի ու պրակտիկայի որգանական միաձուլություն ստեղծենք մասսայական կուսլուսավորության սիստեմում:

Կուսցանցի ուսումնական աշխատանքը պետք է կառուցվի գործնական աշխատանքի հետ ամենասերտ կոնտակտ ստեղծելով, և ընդհակառակը՝ գործնական աշխատանքը հանձին ուսումնական-դաստիարակչական աշխատանքի՝ պետք է ունենա իր անհրաժեշտ ու ըստ ամենայնի ամբիծական թեորետիկական զորավիզը:

Վ. ՊՈԼՈՆՍԿԻ

«ՏԵԽՆԻԿԱՅԻՆ ՏԻՐԱՊԵՏԵԼՈՒ» ԼՈԶՈՒՆԳԸ ՅԵՎ ԿՈՒՍԴՊՐՈՑՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հնգամյակի յերրորդ տարվա ժողտնտեսական պլանի կատարումը պահանջում է արմատապես բարելավել ձեռնարկության ղեկավարությունը: Արտադրության լավագույն կազմակերպման և լավագույն տեխնիկական մեթոդների համար պայքարելը պահանջում է լուծել կարևորագույն քաղաքական մի խնդիր—տեխնիկային տիրապետելու խնդիրը:

Սոցիալիստական արդյունաբերության աշխատավորների կոնֆերանսում ընկ. Ստալինի արտասանած ճառը բայլչևիկյան բացառիկ հրատակությամբ և սրությամբ և առաջադրում այդ խնդիրը.—

«Ժամանակն է, վաղուց ժամանակն է յերեսներս դարձնել դեպի տեխնիկան: Ժամանակն է դեռ չարտել տեխնիկային չխառնվելու հին, մեռած լոզունգը և ինքներս դառնալ մասնագետներ, մեր գործն իմացողներ, մեր գործի լիակատար տերեր»:

«Տեխնիկական-տնտեսական տեսակետից առաջավոր կապիտալիստական յերկրներին հասնելու և անցնելու» լենինյան լոզունգը կոնկրետ մարմնացում է ստանում կուսակցության վարած քաղաքականության մեջ, և այդ աշխատանքում հերթական ոգակ է հանդիսանում տեխնիկայի տիրապետման համար պայքարելը:

Այս մարատական առաջադրության իրագործման համար պետք է մոբիլիզացիայի յենթարկել բոլոր կուսակցական և հասարակական կազմակերպություններին:

Անհրաժեշտ է յուրաքանչյուր դարձնել դեպի տեխնիկան, վոր նշանակում է պայքարել սոցմրցման և հարվածայնության միջոցով աշխատանքի տեխնիկական կատարելագործված մեթոդների կիրառման համար, արտադրության ռացիոնալացման, բանվորական դյուտարարության բազմակողմանի զարգացման, տեխնիկական ուսուցման ծավալման համար։

Ինչո՞ւմն է կուսակցության խնդիրը։

Կուսակցության ամբողջ ցանցը պետք է դառնա կոլեկտիվ աշխատող ու պրոպագանդիստ, կոլեկտիվ կազմակերպիչ՝ տեխնիկական պրոլետարական լայն մասսաների սեփականությունը դարձնելու գործում։ Հարկավոր է յուրաքանչյուր բանվորի, կոլտնտեսականի և առաջին հերթին կուսակցության յուրաքանչյուր անդամի ու թեկնածուի գիտակցության մեջ բևեռել հանձնարարված աշխատանքն ուսումնասիրելու, նրան տիրապետելու, սեփական գործի մասնագետ լինելու անհրաժեշտությունը։

Ընկ. Ստալինը մատնանշում է.—«Գլխավորն այստեղ նրանումն է կայանում, վոր պետք է ունենալ տեխնիկային տիրապետելու, արտադրության դիտությանը տիրապետելու բայլշևիկյան բուռն ցանկություն։ Բուռն ցանկություն ունենալով՝ կարելի է ձեռք բերել ամեն ինչ, կարելի է հաղթահարել ամեն ինչ»։

Բոլոր կուսակցության և խմբակների աշխատանքում կարևորագույն տեղ պետք է գրավի ընկ. Ստալինի ճառի խորացրած մշակումը։ Իրագործելով թեորիայի և պրակտիկայի շաղկապումը, կուսակցությունը պետք է նշեն այն կոնկրետ միջոցառումներն ու ձևերը, վորոնցով նրանք պետք է մասնակցեն տեխնիկայի տիրապետման համար մասսաներին մոբիլիզացիայի յենթարկելու գործին։

Այդպիսի գործնական առաջադրություններ կարող են լինել հետևյալները—բրիգադներ կազմել մասսայական աշխատանքի համար, բանվորների հետ դրույցներ ունենալ այն մասին, թե ինչո՞ւ անհրաժեշտ է, վոր նրանք ուսումնասիրեն իրենց դաղդյահը, իրենց ցեխի աշխատանքը, իրենց ձեռնարկության արդիականությունը, ինչո՞ւ անհրաժեշտ է բարձրացնել իրենց տեխնիկական գիտելիքները, իրենց արտադրական վարպետությունը։ Կուսակցությունը պետք է առաջավորները լինեն տեխնիկայի տիրապետման գործում, իրենց բոլոր ունկընդիրներին ներգրավեն ռացիոնալիզատորական միջոցառումների կիրառման գործում, նրանց խորապես շահագրգռեն բանվորական դյուտարարության զարգացման և տեխնիկական ուսուցման ծավալման խնդրով։ Տեխնիկայի համար արագավ անցկացնելու ընթացքում ազդանշող պոստեր կազմակերպել, լավ մեացած ցեխերի համար հասարակական բուբ-խրթներ կազմակերպել և այլն,—այս ամենը պետք է լայնորեն կիրառել դպրոցների գործնական աշխատանքում։

Ի՞նչ տեղ է պետք է գրավի տեխնիկայի ուսումնասիրությունը կուսլուսավորության սիստեմի ներսում։ Հարյուր հազարավոր կուսանդամ և կուսթեկնածու ընդգրկող կուսդպրոցներն ու խմբակներն ի՞նչպես պետք է քաղաքական ուսուցումը շաղկապեն մասնագիտական գիտելիքների զարգացման հետ։ Ներկայումս այս պրոբլեմի վրա չի՛ հարշարվում պրոպագանդիստների և ունկընդիրների միտքը, փնտրվում և գործնականում ստուգվում են այդպիսի շաղկապման նոր ձևերը, դեկավարության կոնկրետ հարցերը և այլն։

«Տեխնիկային տիրապետելու» լոզունգը նշանակո՞ւմ է արդյոք վերացնել կուսլուսավորության ցանցը, ավելորդ համարել հեղափոխական թեորիայի ուսումնասիրությունը, կարելի՞ է արդյոք միմյանց հակադրել այս երկու խնդիրները։ Վո՛չ. վոչ մի դեպքում և վոչ մի չափով։ Մխիթարյան քաղաքականապես դիտակից և դասակարգայնորեն դաստիարակված բանվորն է, վոր, տիրապետելով տեխնիկային, հանդիսանում է սոցիալիստական հասարակարգի ակտիվ կառուցողը, համաշխարհային հեղափոխության համար մարտնչողը։

Հենց ներկայումս, երբ մենք ավարտում ենք սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը, տեխնիկային տիրապետելը դարձել է ամենաակտուալ մի խնդիր։ «Տեխնիկան վերակառուցման շրջանում վճռում է ամեն ինչ» (ՍՏԱԼԻՆ)։

Նույնքան ակտուալ խնդիր է հանդիսանում նաև մասսաների քաղաքական դաստիարակությունը։ Ցերկրի արմատական սոցիալիստական վերակառուցումը պահանջում է բարձրացնել բանվորական մասսաների կուլտուր-քաղաքական մակարդակը։ Մեր կուսակցությունը միշտ այդպես է դրել խնդիրը և պայքարել է հեղափոխական թեորիայի դերի ամեն մի նվաստացման դեմ։

«Թեորիան, եթե նա իրական թեորիա է, պրակտիկներին տալիս է կողմնորոշման ուժ, հեռանկարի հստակություն, աշխատանքի վստահություն, մեր գործի հաղթանակման հավատ» (ՍՏԱԼԻՆ)։

Ահա թե ինչո՞ւ անհրաժեշտ է վճռական հակահարված տալ ոպորտունիստական այն տենդենցներին, վորոնց նպատակն է նսեմացնել կուսլուսավորության ցանցի դերը, յուրացնել վրա մղել մարքս-լենինյան թեորիայի ուսումնասիրությունը։

Մենք դտնվում ենք այնպիսի մի շրջանում, երբ հսկայական չափով աճում են մասնագիտական ուսուցման ամեն հնարավոր ձևերն ու տեսակները, սեփական դաղդյահի ուսումնասիրությունից մինչև գիտական-հետազոտական ինստիտուտների աշխատանքը։ Սովորող մասսային մարքս-լենինյան մեթոդոլոգիայով զինելն այսորվա ամենաակտուալ խնդիրն է։ Բոլոր տեխնիկական խմբակների, դպրոցների, վորակավորման բարձրացման դասընթացների և այլ ուսումնարկների ուսումնա-

կան պլաններում անհրաժեշտ է մտցնել սոցիալ-քաղաքական դիսցիպլինաներ, մարքս-լենինյան թեորիայի ուսումնասիրությունը:

Կուսակցական կազմակերպությունների առաջ խնդիր է դրված ուժեղացնել իրենց ղեկավարությունը սոցիալ-քաղաքական դիսցիպլինաների ցիկլի դասավանդման և բոլոր մասնագիտական ուսմունքների, դպրոցների ու խմբակների ունկընդիրների իդեական-քաղաքական դաստիարակման նկատմամբ:

Տեխնիկայի ուսումնասիրության տարբեր պլաններ և արդյոք մտցնել կուսդպրոցների աշխատանքի մեջ:

Ինչո՞ւմն է կայանում տեխնիկային տիրապետելու լոզունգը:

Այս հարցին ընկ. Ստալինը սպառիչ պատասխան է տալիս.—«Մենք կկարողանայինք ե՛լ ավելի շատ բան անել, եթե աշխատեինք այս ժամանակամիջոցում հարկ չեղածին պես տիրապետել արտադրությանը, նրա տեխնիկային, նրա ֆինանսական-տնտեսական կողմին»: Այսպիսով, այս ամենաբարդ խնդիրը—արտադրությանը տիրապետելու խնդիրը—կազմված է մի շարք իրար հետ կապված մասերից, այն է՝ տիրապետել արտադրության տեխնիկային, տիրապետել արտադրության ֆինանսական-տնտեսական ղեկավարությանը և այլն:

Տեխնիկայի ուսումնասիրության տարբերը կուսդպրոցների աշխատանքի մեջ մտցնելու խնդիրը պետք է լուծել ընկ. Ստալինի առաջադրած խնդիրների լույսի տակ: Այդ աշխատանքը գործնականորեն կատարելիս անհրաժեշտ և շերտավորված մոտեցում ունենալ մեր կուսակցական ցանցի առանձին ոլորտների նկատմամբ, անհրաժեշտ է միանգամայն հստակ դարձնել այն նպատակը, որին մենք պետք է հասնենք այս խնդիրները դպրոցների ուսումնական պլանում մտցնելիս: Ահա թե ինչո՞ւ տարբեր ձևերով պետք է ընթանա տեխնիկայի ուսումնասիրությունը մեր տնտեսության տարբեր հյուղերում, բարբեր արտադրություններում, ցեխերում և բրիգադներում: Տարբեր ձևերով է դրվում հարցը նաև տարբեր տիպի կուսդպրոցների համար:

Նախնական կուսդպրոցները, որոնց պարապմունքները կարճ ժամանակ, ընդամենը չորս ամիս են տևելու, որտեղ նախնական քաղաքական կրթություն են ստանում թե՛ կուսանդամները և թե՛ անկուսակցական ակտիվը, իրենց ծրագրի մեջ պետք է մտցնեն վերակառուցման շրջանում տեխնիկայի ունեցած նշանակության վերաբերյալ հարցը, ինչպես նաև սեփական ցեխի ու գործարանի աշխատանքի ֆինանսական-տնտեսական կողմերի, պլանավորման և այլ հարցերի ուսումնասիրությունը տեսական աշխատանքի ու գործնական առաջադրությունների միջոցով:

Քանի որ նախնական կուսդպրոցների ունկընդիրների խոշոր մեծամասնությունը հանրակրթական առարկաներից բավարար չափով պատրաստված չէ, որի հետևանքով նրանք դժվարանում են յուրացնելու մասնագիտական-տեխնիկական հարցերը, հարկավոր է հանձնարարել ուսուցման յերկրորդ տարի՝ հանրակրթական դիսցիպլինաներ անցնելու համար:

Ձեռնարկությունների դիշերային կուսխորհրդային դպրոցները, որտեղ քաղաքական առարկաներին զուգընթաց անցնում են նաև հանրակրթական առարկաներ, պետք է զբաղվեն իրենց ձեռնարկության ֆինանսական-տնտեսական կողմերի և մասնագիտական դիսցիպլինաների ուսումնասիրությամբ:

Նայած թե ինչ տեսակի յե այն արտադրությունը, որին կից գործում է կուսդպրոցը, լուծվում է այն հարցը, թե ինչպիսի դիսցիպլինաներ են մտցվում (տեխնոլոգիա, գծագրում, մեքենաների ուսումնասիրություն և այլն): Կարող է լինել, որ մի շարք դեպքերում մասնագիտական առարկաներ անցնելու համար հարկավոր լինի ունկընդիրների վերապատրաստումը կատարել, միևնույն խմբում միացնելով միևնույն արտադրական վարպետությունը, տեխնիկայի հարցերին միևնույն չափով ծանոթ ընկերներին:

Մասնագիտական դիսցիպլինաներ անցնելիս նպատակ պետք է դնել բարձրացնել բանվորի արտադրական վարպետությունը: Ինժեներների և տեխնիկների մասնակցությունը կուսակցության կոչին՝ հնարավորություն կտա մասնագիտական առարկաների դասավանդման համար ղեկավարներ առանձնացնելու:

Կուսլուսավորության բարձր տիպի ոլորտներում, որոնք նպատակ ունեն կուսաշխատողներ պատրաստել, հարկավոր է մտցնել և լրջորեն դնել կոնկրետ եկոնոմիկայի հարցերի ուսումնասիրությունը, դարձյալ յերնելով ունկընդիրների պրոֆեսիոնալ կազմից (տրանսպորտի եկոնոմիկա, գյուղատնտեսության եկոնոմիկա, արդյունաբերության եկոնոմիկա և այլն)

Այս մասնագիտացումը համապատասխանում է ԿԿ-ի 1930 թ. սեպտեմբերի 13-ի այն դիրեկտիվներին, թե կուսլուսավորության ցանցը, հատկապես բարձր տիպի ոլորտներում, պետք է կադրերի պատրաստման ավելի պարզորոշ դիրքավորում ստանա:

Կուսուսուցման մյուս բոլոր տեսակներում հարկավոր է, տվյալ ձեռնարկության եկոնոմիկայի ուսումնասիրության զուգընթաց, ունկընդիրների ցանկությամբ մտցնել նաև զուտ տեխնիկական հարցեր:

Կուսլուսավորության գյուղական ցանցում անհրաժեշտ է նուրբակի դիրքավորում վերցնել:

Տվյալ շրջանի գյուղատնտեսական մասնագիտացման ուսումնասիրության զուգընթաց, հարկավոր է նույնպես ագրոնոմիայի հարցերի ուսումնասիրությունը (ագրո-գրագիտություն), ընդ որում ծրագրերը

չնաք է կազմել գյուղատնտեսական մասնագիտացման հոմանպատասխան (օրինակ՝ վուշագործական շրջանների համար վուշի մշակությունը)։

Պարապմունքներն անցկացնելու համար գործի պետք է լծել ագրոնոմներին, ծայրահեղ դեպքում, դեկավարներ չլինելու դեպքում, հարկավոր է կազմակերպել գյուղատնտեսական պոպուլյար դրականության բարձրաձայն ընթերցանություններ։

Նոր ձևով են դրվում ներկայումս կուլուսավորության ցանցի կոմպլեկտավորման, ունկընդիրների ընտրության հարցերը, մասնագիտական առարկաների դասավանդման նկատմամբ ոպերատիվ դեկավարման հարցերը և այլն։

Աշխատանքի պրակտիկան առայժմ չափազանց քիչ նյութ է տալիս այս բոլոր հարցերին սպառիչ կերպով պատասխանելու համար։ Նրանց լուծման համար դեռ ստեղծարար մեծ աշխատանք ունեն կատարելու ունկընդիրներն ու պրոպագանդիստները։

Մասսաներին մոբիլիզացիայի յենթարկելով հանուն տեխնիկայի արշավի դուրս գալու համար, Մարքս–Լենինյան մեթոդոլոգիայով հագեցնելով մասնագիտական դիսցիպլինաների դասավանդումը, քաղաքականապես դաստիարակելով ունկընդիրներին տեխնիկական ուսուցման բոլոր ձևերի սիստեմում, շարունակելով կուլուսավորության ցանցի հետագա ծավալումը, այնտեղ մտցնելով նաև այն հարցերի ուսումնասիրությունը, որոնք կապված են արտադրության դեկավարմանը տիրապետելու անհրաժեշտության հետ, մենք կկատարենք կուսակցության առաջադրած խնդիրը—կապիտալիստական տերերներին հասնելու և նրանցից առաջ անցնելու խնդիրը։

«Մեզ քիչ բան և մնացել—ուսումնասիրել տեխնիկան, տիրապետել գիտությանը։ Եթե տերը մենք այդ կանենք, մենք այնպիսի տեմպեր կունենանք, որոնց մասին այժմ տերազել անգամ չենք համարձակվում։ Եթե մենք այդ կանենք, յեթե հարկ յեղածին պես կանենք» (Ստալին)։

ՎՈԿԱՐՈՎ

ԳՐՈՊԱԳԱՆԴԻՍՏՆԵՐԻՆ ԴԵԿԱՎԱՐԵԼՈՒ ՁԵՎԵՐԻ ՄԱՍԻՆ

Համ Կ(բ)Կ ԿԿ–ի 1930 թ. հոկտեմբերի 13–ի վորոշման մեջ առանձնապես ընդգծվում է, վոր առաջիկա տարում կուլուսավորության բոլոր տեսակների հիմքում պետք է դրվեն կուսակցության XVI համագումարի վորոշումները, վոր կուսուսուցումը պետք է սերտորեն շաղկապվի ձեռնարկության և գյուղի կուսակցական կազմակերպության կոնկրետ խնդիրների հետ, վոր դպրոցներն ու խմբակները, բարձրացնելով ունկընդիրների թեորետիկական և իդեական–քաղաքական մակարդակը, միաժամանակ պետք է իրական ոժանդակություն ցուցց տան

կուսակազմակերպությունը տնտեսական և քաղաքական կամպանիաներն անցկացնելու, սոցիալիստական մրցությանը զարկ տալու, աշխատանքի կազմակերպումը բարելավելու, հարվածային բրիգադներ կազմակերպելու և ամրացնելու գործում։ Թեորետիկական ուսուցման շաղկապումը սոցիալիստական շինարարության գործնական հարցերի հետ պետք է կուսլուսավորության ամբողջ ցանցի աշխատանքի կարևորագույն խնդիրներից մեկը հանդիսանա։

Սակայն այս հարցի կոնկրետ մշակումը կուսլուսավորության ցանցի յուրաքանչյուր ողակին համապատասխան, կոնկրետ ցուցմունքներն այն մասին, թե ձեռնարկության և գյուղի կուսակցական կազմակերպությունների ի՞նչպիսի հերթական խնդիրների հետ պետք է շաղկապել ուսուցումը, ի՞նչպիսի կոնկրետ մեթոդական ձևերով պետք է տեղի ունենա այդ շաղկապումը,—այս ամենը մինչև այժմ պրոպագանդիստին հայտնի չի յեղել։ Այս հարցը վիճադրել գործնական նոր ասոցիանի, տալ թեորիայի և պրակտիկայի շաղկապման սկզբունքի կիրառման մի ամբողջ շարք կոնկրետ նմուշներ—այդպիսին է պրոպագանդիստների աշխատանքի դեկավարման կարևորագույն հերթական խնդիրներից մեկը։

Պրոպագանդիստն իր աշխատանքի պրակտիկայում հանդիպում է այդ հարցի առթիվ մի ամբողջ շարք մեթոդական դժվարությունների։ Հարկավոր է այս հարցերի առթիվ տեղերում՝ շրջկոմների, կուսկոմների և բջիջների կուսակաբինետներում մեթոդական կոնսուլտացիա կազմակերպել։

Թեորիայի և պրակտիկայի շաղկապման խնդրի գործնական լուծումը պահանջում է, վորպեսզի պրոպագանդիստները դիտենան տվյալ ձեռնարկության կյանքի կոնկրետ հարցերը, դիտենան սոցիալիստական շինարարության հերթական խնդիրները։ Այս տեսակետից պրոպագանդիստին դեկավարելու ամենից ավելի ռեալ ձևերից մեկն է հանդիսանում կուսկաբինետը. ձեռնարկության կուսկաբինետում պրոպագանդիստը պետք է գտնի աշխատանքի համար իրեն անհրաժեշտ բոլոր տեղեկությունները—արդիենալանի մասին, նրա կատարման մասին, սոցմրցման ու հարվածայնության մասին, տվյալ ձեռնարկությունում կամ հիմնարկությունում աշխատողների քանակական ու վորակական կազմի մասին և այլն։

Դրա համար կուսաշխատանքների կաբինետներին կից պետք է կազմակերպվեն շաղկապման մեթոդիկայի կոնսուլտացիաներ, այնտեղ կենտրոնացնելով այդ հարցին վերաբերող բոլոր կոնկրետ նյութերը։

Կուսակցության և բանվոր դասակարգի ամենալայն մասսաների թեորետիկական մակարդակի և իդեական–քաղաքական կայունության բարձրացման խնդիրները, աջ և «ձախ» թեքումների դեմ, հաշտվողա-

կոնուրության դեմ պայքարելու և յերկերեսանիությունը մերկացնելու խնդիրները պրոպագանդիստից պահանջում են յերկու չափազանց պատասխանատու բան: Առաջին. նա ինքը պետք է հասատատպես տիրապետի այն թեորիային, որը նա պետք է փոխանցի մասսաներին. յերբ պրոպագանդիստը չունի ավյալ թեորետիկական և կուսակցական-քաղաքական հարցի առթիվ վոչ մի տատանում, վոչ մի անպարզություն: սակայն նա կարող է այդ թեորիան հատիկ-հատիկ, պարզ ու հասկանալի ձևով բացատրել իր ունկնդիրներին: Յերկրորդ. յուրաքանչյուր պրոպագանդիստ, տեսական պատրաստականությունից բացի, պետք է ունենա նաև մեթոդական գիտելիքների վորոշ մինիմում, առանց վորի անհնարին է ռացիոնալ ձևով ոգտագործել ունեցած տեսական գիտելիքները: Բավական չէ տեսականորեն իմանալ այս կամ այն հարցը. հարկավոր է նաև իմանալ, թե ինչպես այդ հարցը փոխանցել ունկնդիրներին, վորպեսզի նրանք կարողանան այդ յուրացնել վորոշ մեթոդոլոգիական կապակցությամբ, վորոշ իդեական ու քաղաքական սրվածությամբ: Գիտեցածն ուրիշին փոխանցել, այնպես, վոր այդ խնդիրը հասնի վորոշակի առաջադրված նպատակներին,—այդ անկասկած վարպետություն է: Քիչ են այնպիսի մարդիկ, վորոնք մանկավարժական ու մեթոդական բնական ընդունակություններ ունենան և վորոնք կարողանան արագությամբ գտնել մեթոդական ճիշտ ուղիներ. այդպիսիք քիչ են նաև պրոպագանդիստների մեջ: Մնացած մասսան ռացիոնալ պրոպագանդիստական աշխատանքի համար կարիք ունի կա՛մ նույնական մեթոդական պատրաստության, կա՛մ մեթոդական ղեկավարության՝ պրոպագանդիստական աշխատանքի ընթացքում: Պրոպագանդիստների տեսական և մեթոդական պատրաստման տեսանկյան տակ ել անհրաժեշտ է քննել նրանց աշխատանքը ղեկավարելու ձևերը:

Տեսական և մեթոդական պատրաստության տեսակետից պրոպագանդիստներին կարելի է բաժանել հետևյալ խմբերի.—

Պրոպագանդիստների նեղ (համեմատաբար) շրջանակ, վորոնք ունեն թե՛ տեսական և թե՛ մեթոդական միանգամայն բավարար պատրաստություն, հետևաբար կարող են բավարար չափով գլուխ տանել այդ խնդիրը: Նրանք սոսկ կարիք ունեն ավյալ ձեռնարկության կամ կազմակերպության գործնական խնդիրների վերաբերյալ տեղեկատու նյութերի:

Պրոպագանդիստների յերկրորդ, ավելի լայն շրջանակ. ունի միանգամայն բավարար տեսական պատրաստություն, բայց վոչ բավարար մեթոդական պատրաստություն (Կարմիր Պրոֆեսուրայի Ինստիտուտի ուսանողներ, կոմունիստական ԲՈՒՀ-երի շրջանավարտներ և այլն): Այս շրջանակի պրոպագանդիստները տեսական ղեկավարության կարիք չեն զգում և լուրջ աշխատանքներն պահանջում միայն մեթոդիկայի խնդրում:

Պրոպագանդիստների յերրորդ, նույնպես նեղ շրջանակ. սրանք բավականաչափ մեթոդական պատրաստություն ունեն, բայց կարիք են զգում լրացուցիչ տեսական հարստացման, մեթոդոլոգիական հարցերի խորացման:

Յեվ, վերջապես, պրոպագանդիստների չորրորդ, անընդհատ ընդարձակվող շրջանակ (առավելապես բանվոր պրոպագանդիստներ), վորոնք կարիք ունեն ինչպես տեսական, այնպես ել մեթոդական պատրաստության:

Միանգամայն բնական և անխուսափելի յե պրոպագանդիստների ղեկավարելու գործը շերտավորել համաձայն այս չորս կատեգորիաների: Յեվ յեթե անդամ ընդունելու լինենք ղեկավարման այնպիսի ձևեր, վորոնք կարիք ունեն ինչպես տեսական, այնպես ել մեթոդական պատրաստ ձևերի մեջ պետք է լինի տարբեր բովանդակություն և տարբեր մեթոդներ: Ամենից առաջ բոլորի համար հարկավոր են ղեկավար ու կոնկրետ գործնական ցուցմունքներ ուսուցումը սոցիալիստական շինարարության գործնական խնդիրների հետ շաղկապելու մեթոդիկայի մասին: Այս ցուցմունքները պետք է ընթանան ինչպես «Պրոպագանդիստ» ժուրնալում յեղած մեթոդական մշակումների գծով, այնպես ել տեղերում կուսկաբինետներին կից կոնսուլտացիաների գծով: Դրա համար կուսկաբինետները պետք է ապահովված լինեն այդ հարցին վերաբերող գրականությամբ ու ձեռնարկներով, ինչպես նաև կոնսուլտանտներով: Դրանից բացի, կոմսկաբինետները պետք է սիստեմատիկ կոնսուլտացիա կազմակերպեն մեթոդիկայի և բանվոր պրոպագանդիստների դպրոցական կամ խմբակային տեսական նախապատրաստման հարցերի շուրջը:

Պրոպկոլեկտիվների մասին: Մինչև այժմ պրոպկոլեկտիվները յեղել են կա՛մ քաղգրագիտության բարձր տիպի դպրոցներ, կա՛մ բարձր տիպի առարկայական խմբակներ, վորոնք աշխատելիս են յեղել նույն ծրագրերով, ինչ քաղգրագիտության դպրոցներն ու խմբակները: Նրանք նպատակ ունեցին պրոպագանդիստներին տեսականորեն պատրաստել այն դրույցների շուրջը, վորոնք հետագայում պետք է մշակվեին դպրոցներում և խմբակներում: Ընդ վորում նկատի յեր առնվում այն, վոր հարցերը պրոպկոլեկտիվում մշակելիս ղեկավարները պետք է նաև վորոշ մեթոդական ցուցմունքներ տային:

Ինչպես թեմաների տեսական մշակման, այնպես ել մեթոդական ցուցմունքների խնդրում մինչև սրա ձեռք բերված հաջողություններից ե՛լ ավելի ուժեղ հաջողությունների հասնելու ճանապարհին լուրջ արգելք է հանդիսանում այն հանգամանքը, վոր պրոպկոլեկտիվները զգալիորեն ավելի սակավ եղին հավաքվում, քան դպրոցը և խմբակը: Նրանք

չեյին հասցնում բոլոր գրույցները մշակել: Մեթոդական ցուցմունքների համար, վորպես կանոն, քիչ ժամանակ եր մնում, և, դրանից բացի, պրոպկոլեկտիվների ղեկավարների համար այս խնդիրն այնքան էլ պարզ չեր ձևակերպված:

Մի կարևոր հանգամանք ևս հարկավոր է նկատի ունենալ պրոպկոլեկտիվների աշխատանքը գնահատելիս: Պրոպագանդիստների մի մասը անփույթ վերաբերմունք եր ցույց տալիս տեսական ինքնապատրաստման հարցերին, հույսը դնելով պրոպկոլեկտիվի ղեկավարի ազատ ցուցմունքների վրա: Ի վերջո պրոպկոլեկտիվի աշխատանքը հանգում եր այն բանին, վոր կա՛մ պրոպագանդիստը «ծամծմում եր» ունկնդիրների համար անհասկանալի վերացական տեսական հարցեր, վորոնք կապված չեյին սոցիալիստական շինարարության կոնկրետ խնդիրների հետ, կա՛մ բացառապես գործնական քննարկման եր յենթարկում գործնական հարցերը, վորպիսին վոչ միայն ճիշտ վերլուծություն չեր տալիս, այլ, ընդհակառակը, այդ հարցերը նսեմացնելով հասցնում եր ցեխային սահմանափակվածության և քաղքենության աստիճանի: Նման ուսուցումը չեր կարող ունկնդիրներին հետաքրքրել, և նրանք իրավամբ սրտանց դեմ եյին «քվեարկում» նրան (մաղում): Այդպիսի դրության մեջ ընկավ պրոպագանդիստների ամենաբազմամարդ (չորրորդ) խումբը: Ուղիղ յեզրակացությունն այն է, վոր անհրաժեշտ է վերակազմել պրոպկոլեկտիվները և արմատապես փոխել նրանց աշխատանքի բովանդակությունը: Հարկավոր է վճռականորեն հրաժարվել գլխոցների և խմբակների ծրագրով աշխատելուց, վորպիսին պրոպկոլեկտիվը դարձնում է այդ գլխոցների ու խմբակների վատթար հրատարակությունը:

Պրոպկոլեկտիվները պետք է հիմնականում զբաղվեն մեթոդոլոգիայի հարցերով, կուսլուսավորության մեթոդիկայի կոնկրետ հարցերով, ուշադրության կենտրոնակետ դարձնելով վերջինս: Մեթոդոլոգիական հարցերը պետք է դրվեն ուսումնասիրելիք ծրագրի ամենից ավելի կարևոր, առանցքային պրոբլեմների շուրջը: Եթե պրոպագանդիստները վաղորոք պատրաստվեն յուրաքանչյուր հարցի առթիվ, այնուհետև, պրոպկոլեկտիվի պարապմունքից հետո ստղծեին լրացուցիչ մշակման յենթարկվի, այդ դեպքում կապահովվի գլխոցում և խմբակում մշակվող թեմաների անհրաժեշտ տեսական մակարդակը, կապահովվի նրանց իդեական և քաղաքական կայունությունը: Մնացած ժամանակը պրոպկոլեկտիվները պետք է նվիրեն մեթոդիկայի հարցերին:

Պրոպկոլեկտիվները պետք է բաժանել յերեք տիպի—առաջին տիպը պետք է նախատեսվի պրոպագանդիստների ամենից ավելի քիչ պատրաստված խմբի համար (հատկապես բանվոր պրոպագանդիստների

համար), յերկրորդ տիպը՝ ամենից ավելի մեթոդական պատրաստության կարիք ունեցողների համար, իսկ յերրորդ տիպը՝ տեսական գիտելիքները խորացնելու պահանջ ունեցողների համար: Յուրաքանչյուր տիպերի համար հարկավոր է մշակել պարապմունքների տարբեր ծրագրեր: Քանզի պրոպագանդիստների պրոպկոլեկտիվի համար ծրագիրը պետք է բաղկացած լինի տեսական և մեթոդական մասերից՝ վերջինս դասախոսությամբ՝ յերկրորդ տիպի համար պետք է խորացնել ծրագիրը մեթոդական հարցերի ուղղությամբ (իսկապես ասած, այս տիպի պրոպկոլեկտիվը պետք է ավելի շուտ պրոպամենար լինի)։ Յերրորդ տիպը հիմնականում մեթոդոլոգիական ծրագիր պետք է ունենա:

«Պրոպագանդիստ» և «Կոմունիստիչեսկայա Ռեվոլյուցիա» ժուրնալների մասին: Այս յերկու ժուրնալները նախատեսված են լայն պրոպագանդիստական կադրերի համար: Նրանցից ամեն մեկն ունի իր առանձնահատկությունները: «Կոմունիստիչեսկայա Ռեվոլյուցիան», իսկապես ասած, լիովին հարմարեցված է յերրորդ, առաջին և մասամբ էլ յերկրորդ խմբի պրոպագանդիստների սպասարկմանը: Յերրորդ տիպի պրոպկոլեկտիվի ծրագիրը հենց պետք է կազմված լինի «Կոմունիստիչեսկայա Ռեվոլյուցիա»-ի հիման վրա: «Պրոպագանդիստ»-ը ավելի մասսայական որդան է: Հենց այդ ժուրնալն է, վոր պետք է ղեկավար մեթոդական որդան լինի ամենամեծ խմբի պրոպագանդիստների (այդ թվում նաև բանվորների) համար, վորոնք մեթոդական և տեսական ղեկավարության սուր կարիք են զգում: Այդ խմբի ղեկավարման պահանջներին լիովին համապատասխանելու համար, «Պրոպագանդիստ» ժուրնալը պետք է կառուցել այն ծրագրի հիման վրա, վոր մշակվելու յե բանվոր պրոպագանդիստների պրոպկոլեկտիվի համար: Ժուրնալը պետք է դիտական-պրոպուլյար մշակման յենթարկի կուսլուսավորության քաղաքային ու գյուղական ցանցի նախնական դպրոցի հիմնական մեթոդոլոգիական հարցերը և ծանրության կենտրոնը փոխադրի կուսլուսավորության մեթոդիկայի հարցերի կոնկրետ մշակման ուղղությամբ: Ուստի մեթոդական մշակումների տիպը «Կոմունիստիչեսկայա Ռեվոլյուցիայում» և «Պրոպագանդիստում» տարբեր պետք է լինի: Բայց մշակման թե՛ մեկ և թե՛ մյուս տիպը պետք է համաձայնեցնել համապատասխան մեթոդական մշակումների և այն՝ ուսումնական նյութերի հետ, վորոնք տպագրվում են «В помощь партучебе» ժուրնալում կուսլուսավորության ցանցի սովորողների համար:

Քաղաքական ինֆորմացիա: Անհրաժեշտ է վճռականորեն կենսագործել Համ Կ(բ)Կ ԿԿ-ի՝ և Մոսկվայի Կոմիտեյի դիրեկտիվները պրոպագանդիստներին ժամանակին քաղաքական ինֆորմացիա տալու կարևորության մասին: Միանգամայն անթույլատրելի յե, վոր տեղերում պրոպագանդիստները կուտակիվի մեջ չեն հաշվվում և մասնակից չեն

դարձնում վերջինս ժողովներին, մանավանդ յուրք քաղաքական բնույթի հարցեր են քննվում: Այդ պատճառով պրոպագանդիստը շատ հաճախ այնպիսի գրության մեջ է ընկնում, որ կամ բոլորովին ինֆորմացիա չի ստանում, կամ այդպիսին ստանում է իր այն ունկնդիրներից, որոնք կուսակտիվից են:

Պրոպագանդիստների մեթոդական խորհրդակցությունները: Աշխատանքի մեթոդական կազմակերպման փորձի փոխանակությունը չափազանց կարևոր նշանակություն ունի: Այս փոխանակությունը պրոկոլեկտիվի կամ պրոսեմինարի շրջանակներով սահմանափակել չի կարելի,—անհրաժեշտ է այն ավելի լայն (շրջանային և անդամ միջշրջանային մասշտաբով) և ավելի կազմակերպված հիման վրա գործադրել: Այս նպատակով մեթոդական բյուրոն պետք է տեղերում հիմնավորական աշխատանք և հրահանգավորում կազմակերպի, այնպիսի հաշվով, որպեսզի գործնական փորձի և փաստական նյութերի մշակման հիման վրա պրոպագանդիստների խորհրդակցություններում քննարկվեն կազմակերպչական-մեթոդական և մեթոդոլոգիական հարցերը: Լավ կլինի, որ այս խորհրդակցությունները հարմարեցվեն տնտեսական, քաղաքական կամ կուսակցական կյանքի այս կամ այն կարևոր մոմենտներին, կուսլուսավորության ցանցում այդ հարցերի մշակման համար պրոպագանդիստներին ինֆորմացիա և ճիշտ դիրքավորում տալու համար: Շատ ուղտակար կլինի ռադիոյով հաղորդել այս բոլոր խորհրդակցությունները՝ պրոպագանդիստների ավելի լայն շրջանակի, ինչպես նաև կուսլուսավորության ցանցի ունկնդիրներին ընդգրկելու համար:

Պրոպագանդիստների հրահանգավորումն աշխատանքի ընթացքում: Ղեկավարության ամենաիրական ձևերից մեկն է հանդիսանում պրոպագանդիստին ղեկավարելն ու ոգնություն ցույց տալը տեղում, նրա աշխատանքի վայրում: Այստեղ հրահանգավորումը կրկնապատիկ կոնկրետ բնույթ ունի. նա շաղկապվում է այն մոմենտների հետ, որոնք նշված են հրահանգի կողմից կամ որոնց հանդիպել է պրոպագանդիստն իր աշխատանքի ընթացքում: Պետք է անպայման մեկ կողմ նետել այն հետաղոտությունը, որին զուգընթաց հրահանգավորում և գործնական աջակցություն ցույց չի տրվում պրոպագանդիստին:

Հրահանգավորման հետ միասին, որ կազմակերպում է մեթոդական բյուրոն վարակյալ պրոպագանդիստների ուժերով, պետք է կիրառել պրոպագանդիստների փոխադարձ այցելումների պրակտիկան: Փորձի փոխանակության այդ ձևն առանձնապես ուղտակար է: Բայց այդտեղ անհրաժեշտ է, որպեսզի մեթոդական բյուրոն վարոշ մեթոդական ցուցմունքներ տա պրոպագանդիստներին:

ՄԻՆՉԵՆԿՈ

ԲԱՆՎՈՐ ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍՏՆԵՐԻՆ ՂԵԿԱՎԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ինչո՞ւ Կենտրոնական Կոմիտեն և Մոսկվայի Կոմիտեն իրենց վարոշումների մեջ վճռականորեն պահանջում են, որպեսզի կուսակցական կազմակերպությունները ուժեղացնեն իրենց իդեական-քաղաքական ղեկավարությունը պրոպագանդիստների աշխատանքի նկատմամբ: Վարոշհետև ամբողջ ֆրոնտով ծավալված սոցիալիստական վճռական հարձակողականի պայմաններում մասսայական կուսակցական լուսավորության, որպես կուսակցության գլխավոր գծի համար պայքարելու կարևորագույն միջոցներից մեկի, դերն անշեղորեն ավելանում է: Վարոշհետև կուսակցության գծից յեղող թեքումների և նրանց նկատմամբ հաշտվողականության դեմ պայքարելը պահանջում է ուժեղացնել իդեական կուսդաստիարակչական աշխատանքը, հատկապես նրանց մեջ, որոնք հազարներով մտնում են կուսակցության շարքերը: Ահա այս պարզ ճշմարտությունն է, կուսակցության այս հստակ դիրեկտիվներն են, որ շատերը դեռ չեն հասկանում: Այլապես ինչո՞վ բացատրել կուսլուսավորության թերագնահատման փաստերը և պրոպագանդիստների ամենորյա աշխատանքի միանգամայն անբավարար ղեկավարությունը:

«Վերջացրինք վերապատրաստման դասընթացները, խմբակ տվին, և դրանից հետո ամբողջ կես տարի յե, որ վոչ վոք մեր կողմը չի նայում»,—այդպես եյին հայտարարում Տվերի, Կալուգայի, Նարո-Ֆոմինսկի բանվոր պրոպագանդիստները: «Մենք կոնկրետ ցուցմունքներ չենք ստանում այն մասին, թե ինչպես տանել պարապմունքները, ինչպես բացատրություններ տալ խմբակայինների հարցերին»: «Բանվոր պրոպագանդիստների մեկ տասներորդից եվ պակաս մասն է ինքնակրթությամբ զբաղվում»: «Պարապմունքներին նախապատրաստվելու համար հատկացնում եմ մեկ-յերկու ժամից վոչ ավելի»,—այսպես եյին հայտարարում բանվոր պրոպագանդիստների դասընթացներում:

Ղեկավարության ուժեղացում դեռևս չկա: Կուսակցության դիրեկտիվները դեռևս չեն կատարված: Ներկայումս, փոխված պայմաններում, ղեկավարությունը դառնում է նոր ձևի:

Մոսկվայի մարզում ստորին ցանցի ղեկավարների խոշոր մասսան արդեն ԲՈՒՀ-երի ուսանողներ չեն, այլ բանվոր պրոպագանդիստներ: Հենց միայն Պրոլետարական ռայոնում 72 ձեռնարկություններում 154 բանվոր պրոպագանդիստներ կան: Կոլոմենսկի գործարանում անցյալ տարի 3 բանվոր պրոպագանդիստ կար, այժմ 85: Վիշնյա Վոլոչկայում 80 տոկոսով բանվոր պրոպագանդիստներ են: Մոսկվայի մարզում, միջին հաշվով, պրոպագանդիստների 50 տոկոսը բանվորներ են: Դա Մոսկվայի կազմակերպության մեծագույն նվաճումն է և դա պարտավորեցնում է ուժեղացնել, փոխել ղեկավարության ձևերը: Այդ նույն հան-

դամանքը պահանջում է նաև մեծ չափով ընդարձակել ու մասսայական դարձնել ցանցը նախորդ տարվա համեմատությամբ (6-ից մինչև 9 հազար։ Պրոլետարական ռայոնում, յերկու ու կես անգամով ավելացում՝ Վիշնայա Վոլոչկայում), ավելացնել անկուսակցականների տոկոսը, հատկապես ռոտորին ցանցում։

Բանվոր դասակարգի ներսում տեղի ունեցած խոշոր տեղաշարժերը և կուսակցական մասսայի խոշոր քաղաքական աճումն ավելի բարձր պահանջներ են առաջադրում բանվոր պրոպագանդիստին։ Բանվոր պրոպագանդիստի դերն անչափ աճում է։ Նա պետք է իրապես տեսականորեն-սկզբունքորեն կայուն լինի։ Արտադրությունն ու նրա հիվանդությունները մոտիկից դիտենալը բանվոր պրոպագանդիստին պետք է դարձնի կազմակերպիչը մասսաների այն նախաձեռնության, վոր նպատակ ունի հաղթահարել արտադրության դժվարությունները, կատարել ու դերակատարել տվյալ գործարանի արդիֆիկացիոն։

***

«Իրոք սկզբունքորեն կայուն, ընդունակ պրոպագանդիստներ շատ քիչ կան (և այդպիսին դառնալու համար հարկավոր է կարդալ ու սովորել և փորձ ձեռք բերել) և այդպիսի մարդկանց հարկավոր է մասնագիտացնել, նրանց դրավել ամբողջապես և պահպանել կրկնապատիկ ավելի» (Լենին։ IV հատ։, էջ՝ 166, հին հրատարակություն)։ Լենինն այդ գրել է 1902 թ։։

Թեև պրոպագանդիստական ֆրոնտում մենք անչափ հեռացել ենք այն պայմաններից, վորը նկարագրում էր Լենինը 1902 թ։, սակայն «իրոք սկզբունքորեն կայուն, ընդունակ» պրոպագանդիստների ընտրության գործում այսոր ևս կարելի չէ վորոշ հարևանցիություն նկատել։

«Եթե նայելու լինենք մեր պրոպագանդիստական կադրերին, ապա այդպիսին մենք ունենք ընդամենը 10 հոգի, վորոնցից չորսը յերկուական հանդիմանություն են ստացել։ Միքանիսը հանդիմանություն են ստացել խիստ նախազգուշացումով։ 3 պրոպագանդիստ քաղաքականապես անգրագետ և իդեոլոգիայով անկայուն են... Այս մարդիկ պրոպագանդիստների շարքն են դասված։ Յերբ նրանց հանձնեցին խմբակների ղեկավարությունը, պարզվեց, վոր շատ բան նրանց մոտ անբարեհաջող վիճակումն է, նրանցից յերկուսը կուսակցության գլխավոր գծից շեղվեցին»,—այդպես հաղորդեց ընկ։ Մ։ Մոսկվայի Կոմիտեին կից կազմված խորհրդակցությունում։

Իհարկե, զրպարտություն կլինի, յեթե մենք հապճեպով ընդհանրացնենք այս առանձին, մասնակի դեպքերը և այնպիսի հայտարարությունները, թե «մենք, իբր թե, մեր կուսակցության պրոպագանդայի պատմության մեջ յերբեք չենք ունեցել այսպիսի ցածր վորակի պրոպագանդա»։ Այն, վոր Մոսկվայի կազմակերպությունի մեջ ստորին ցանցի դեկավարների մինչև 50 տոկոսը հաջողվել է վերցնել բանվոր պրոպագանդիստներից,—մեծագույն նվաճում է համդիսանում։

Յեթե մենք ընտրեցինք ամենատաղանդավորներին—իսկ այդպիսի տաղանդներ հարյուրներով ու հազարներով է առաջ քաշում մասսաների ստեղծագործ ակտիվությունը, ապա մեր անմիջական խնդիրն է լինում «այդպիսի մարդկանց մասնագիտացնել, նրանց դրավել ամբողջապես և պահպանել կրկնապատիկ ավելի»։

Պրոպագանդիստների հաճախակի տեղափոխումների, նրանց կազմի խոշոր հոսունության, նրանց մասնագիտացնելու դժվարության դեմ պետք է վճռական պայքար մղել։ Այդ յերևույթները ցածրացնում են կուսակցական պրոպագանդայի մակարդակը։ Միքանի բջիջներում մենք կամեցանք ստուգել, թե ինչպես են ոգտագործվում վերապատրաստման մարզային դասընթացներն ամենից ավելի տաղանդավոր բանվոր պրոպագանդիստները։ Տեղ-տեղ բջիջների քարտուղարները պատասխանում էին.—«Մենք վազուց ենք նրանց տեղափոխել, վոմանց կոոպերատիվ աշխատանքի, վոմանց տնտեսական և պրոֆեսիոնալ աշխատանքի»։

Զամոսկվարեցկի ռայոնում հատուկ դասընթացներում պրոպագանդիստական աշխատանքի համար պատրաստված 300 հոգուց ներկայումս աշխատում են միայն 15 հոգի, մնացածներն ուղարկված են դյուղական շրջանները, հացամթերման աշխատանքի, գործարկումներ, ցեխային բջիջների քարտուղարներ։

Միքանի վորակյալ պրոպագանդիստներ աղայավարի յեն մոտենում բանվոր պրոպագանդիստներին—«Դե նրանք տեսականորեն պատրաստված չեն։ Նրանք ի՞նչ կարող են տալ»։ Այսպիսի խայտառակ վերաբերմունքին վճռականորեն վերջ պետք է տալ։ Բանվոր պրոպագանդիստին վոչ միշտ են ճիշտ ոգտագործում։ Առաջին իսկ մոբիլիզացիայի դեպքում, տեխնիկական անասնաբուժական դասընթացներ ուղարկելու պահանջ յեղած դեպքում և այլն, բանվոր պրոպագանդիստին են ուղարկում։ Իբրև այդպիսի վերաբերմունքի հետևանք՝ խոշոր չափերի հասնող հոսունություն, իդեական մակարդակի վորոշ ցածրացում, պրոպագանդիստական աշխատանքի մասնագիտացման բացակայություն։ Զնայած այն բանին, վոր կուսակցական բանվորների մի խոշոր մասսա առաջ է քաշված դեկավարելու խմբակները, այնուամենայնիվ բանվորներից պրոպագանդիստներ առաջ քաշելու գործում դեռևս վճռական բեկում չկա։ Բնորոշ է, վոր խոշոր գործարաններում ավելի քիչ են բանվոր պրոպագանդիստներ առաջ քաշված։ «Տրյոխգորկայա»-յում պատրաստված 30 բանվոր պրոպագանդիստներից միայն յերկու-յերեքն են այդ աշխատանքում։

տանքում ողտագործվում։ Իլյիչի անվան գործարանում՝ հատուկենտ։ «Պրոլետարսկի Տրուդ»-ում 15-ից և վոչ մեկը։

Փոքր ձեռնարկություններում, շրջաններում, բանվոր պրոպագանդիստներն ավելի շատ են, ավելի համարձակ են նրանց առաջ քաշում։ Ամենուրեք այս գործում վճռական բեկում պետք է ստեղծել։ Հարկավոր է շեշտել, վոր պրոպագանդիստական աշխատանքի համար կուսակցական բանվորին առաջ քաշելը լոկ սկիզբն է նրա հետագա տեսական վերելքի, լոկ առաջին քայլն է նրա հետագա ուսման։ Հարկավոր են վիթխարի ճիգեր ու լարում՝ մարքսիզմ-լենինիզմի բոլոր հարստություններին տիրապետելու համար։ Դրան չի կարելի թեթև մոտեցում ունենալ—մի բան վոր բջիջն ինձ առաջ է քաշել պրոպագանդիստական աշխատանքի, ասել է յես ամեն ինչ գիտեմ, կես ժամում կպատրաստվեմ պարապմունքի համար։ «Լայն ուղղական ուղին չե, վոր առաջնորդում է դեպի գիտությունը, և միայն նա կարող է հույս ունենալ, վոր կհասնի նրա փայլուն բարձրունքներին, ով չվախենալով աշխատանքից՝ նրա քարքարոտ կածաններով դեպի վեր կմագլցի» (Կ. Մարքս, «Կապիտալ»-ի I հատորի առաջաբանից)։

***

Ցտորին ցանցի բանվոր պրոպագանդիստներին ղեկավարելու հիմնական ձևը ձեռնարկության պրոպսեմինարն է։ Ինչո՞վ պետք է զբաղվի այդ սեմինարը։ Արդյո՞ք միայն մեթոդիկայով, թե՞ նաև ապագա պարապմունքի բովանդակությամբ և անցած պարապմունքի ստուգումով։

Մի բան անկասկած է, վոր սեմինարը պետք է առաջին հերթին բարձրացնի տեսական մակարդակը և սկզբունքորեն հստակ դարձնի այն թեման, վոր պրոպագանդիստը պետք է մշակի խմբակում։ Պետք է քննության առնել թեմայի հիմնական իդեաները, նրանց զրույթը խմբակում, հնարավոր առարկությունները, տարակուսանները, հարցերը։ Հարկավոր է միանգամայն հստակ, աներկմիտ ձևակերպում տալ թեմայի հիմնական դրդապատճառներին։ Ցեթե իդեականը, սկզբունքայինը չի պարզված, յեթե դեռևս կան կիսատ թողնված մտքեր, տարակուսաններ, ապա չի կարելի այդպիսի ընկերոջ խմբակ հանձնարարել։ Դա այբուբենական ճշմարտություն է։ Կգտնվեն ընկերներ, վորոնք պնդելիս կլինեն, վոր ձեռնարկության պրոպսեմինարը պետք է զբաղվի միայն մեթոդական հարցերով, «իսկ յեթե քննելու լինենք բովանդակությունը, դա ձանձրալի կլինի... կրկնություն... ծամծմուք...»։ Այդպիսի փաստարկում միանգամայն անկայուն է։ Ցեթե միքանի պրոպսեմինարներում իրոք այդպիսի «ձանձրույթ... ծամծմուք» կա, ապա այդ վկայում է լոկ այն մասին, վոր սեմինարի ղեկավարի իդեական մակարդակը ցածր է։

Մեր պրոպագանդիստների մոտ յուրաքանչյուր պարապմունքին

պատրաստվելու գործը շատ թույլ է։ «Աչքից են անցկացնում դասագիրքը և թեմայի համապատասխան մշակումը, յերբեմն ճանապարհին տրամվայում,—և ել ինչ ասես, վոր չեն ասում»։

Համկ(բ)կ Մոսկվայի Կոմիտեին կից կայացած պրոպխորհրդակցությունում մի ընկեր հետևյալն ե պատմում այդպիսի մի պրոպագանդիստի մասին։—«Նստած է պրոպագանդիստը։ Ձեռքում բռնել է Ստալինի զեկուցումը և պարապում է տող առ տող, բարձրաձայն կարդալով, և վախենում է աչքը հեռացնել գրքից, կորցնել տրված տողը։ Պարզ է, վոր Ստալինի զեկուցումն այդ կերպ մշակելով՝ պրոպագանդիստը միաժամանակ չի կարողանա այդ շաղկապել այն ամենի հետ, ինչ կատարվում է ցեխում»։

Բացարձակապես անհրաժեշտ է պրոպսեմինարների միջոցով բարձրացնել պրոպագանդիստների հենց տեսական, իդեական, սկզբունքային մակարդակը։ Ով կամենում է պրոպսեմինարի դերը դարձնել միայն մեթոդիկան, նա քողարկում է իրական ղեկավարությունը, նա վիժեցնում է Մոսկվայի Կոմիտեի այն դիրեկտիվը, վորը պարտավորեցնում է «կուսկազմակերպություններին ուժեղացնելու պրոպագանդիստների իդեական-քաղաքական ղեկավարությունը»։

Ցեթե բանվոր պրոպագանդիստների համար բացարձակապես պարզ կլինի թեմայի բովանդակությունը, հասկանալի կլինեն հիմնական իդեաները, այն ժամանակ նա իրոք կկարողանա «ընդգրկել և՛ Ստալինի զեկուցումը, և՛ այն ամենը, ինչ կատարվում է ցեխում»։

Սրա հետ մեկտեղ անհրաժեշտ է նաև սեմինարում բանվոր պրոպագանդիստին սովորեցնել աշխատանքի մեթոդական պրիոմները—թերթերից ու ինֆորմատիվ ձեռնարկներից ողտվելը, դլխի դցող, կոնարոլ հարցեր տալը, խմբակցիների դիտելիքներն ստուգելը։ Բայց համենայն դեպս բանվոր պրոպագանդիստների սեմինարի համար հիմնականը՝ դա բովանդակությունն է, տեսական մակարդակի բարձրացումն է։

Ցեվս մի հարց, վոր վերաբերում է բանվոր պրոպագանդիստների ղեկավարմանը,—հարկավոր է ուժեղացնել քաղաքական ինֆորմացիան։ Հաճախ բանվոր պրոպագանդիստը վերջին իրադարձությունների մասին խմբակի ունկնդիրներից է տեղեկանում։ Այդ վոչ մի բանի պետք չի։ Պրոպագանդիստներին նույնպիսի ինֆորմացիա յե հարկավոր, ինչ բջիջների քարտուղարներին։ Հարկավոր է պրոպագանդիստներին մասնակից դարձնել ակտիվի բոլոր ժողովներին բջիջում և շրջկոմում։

Զատազանց անհրաժեշտ է, վորպեսզի նախնական կուսդպրոցում յերևան հանվեն յերիտասարդ կոմունարների բոլոր տրամադրությունները։ Անշուշտ, նրանց վրա հաճախ կանդրադառնան բանվորների հետամնաց մասի նվվոցը, դանդատները և տարակուսանները։ Խմբակում հարկավոր է այս ամենը պարզել, ջախջախել այդ տարակուսանները, յե-

գիտատարդ կուսակցականին զինել հակահարված տալու ցեխում յեղած ոստրակիզմի տրամադրություններին: Այդ նույնպես օպորտ է: Բայց կղզուանվեն ընկերներ, վորոնք կհայտարարեն, վոր տրամադրությունները յերեվան հանել չի հարկավոր, «դա նախնական դպրոցը կվերածի մի դիսկուսիոն ակմբի, դժվար դրության մեջ կդնի բանվոր պրոպագանդիստին, վորը չի կարողանա այդ բոլոր հարցերին պատասխանել»: Այս տեսակետի վրա կանգնելու դեպքում կստացվի այն, վոր ուսումը տարբեր բան է, իսկ ունկնդիրների տրամադրությունները՝ բոլորովին այլ բան: Սա չափազանց անճիշտ դիրքավորում է:

Այս տարվա գարնանը Մոսկվայի Կոմիտեյի կողմից Կոլոմենսկի գործարանի պրոպխմբին կցված դեկավարը հետևյալն էր պատմում.— «Մենք համարյա թե վերջացրինք ծրագիրը: Թվում է, թե լավ մշակեցինք: Գարագումների ընթացքում առանձնապես մեծ հարցեր չառաջացրվեցին: Ամեն ինչ սահուն եր... բայց հետո, վորոշ ժամանակ անց, տեսնում եմ, վոր մեր լենինյանների վորոշ մասը դնում է ամենավատ պոչականների հետ: Այդ նրանով է բացատրվում, վոր մենք չեյինք կարողացել յերեվան հանել, փարատել բոլոր կասկածները, բոլոր կիսատ թողնված խնդիրները կուսդպրոցում»: Այդ տիպիկ մի որինակ է այն բանի, վոր ուսուցումը կտրված է կուսակցական գանվորին հուզող սուրբ հարցերից: Ավարտի վրա դրված ուսուցում, ծամծմուք: Ահա թե ինչո՛ւ չափազանց անհրաժեշտ է յերեվան հանել այն առարկությունները ու տարակույսները, վորոնք ծագում են խմբակի ունկընդիրների մոտ: Եթե բանվոր պրոպագանդիստը չի կարողանա պատասխանել, կղխի կոնսուլտանտին, հարց կբարձրացնի պրոպսեմինարում, բջջի բյուրոյում: Այդ խթան կհանդիսանա, վորպեսզի նա շարունակի սովորել, վորպեսզի նա շարունակի իրենպես զինվել:

Ա. ՑԵԼԻՆՍԿԻ

ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍՏՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԴԵԿԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Կուսդպրոցության աշխատանքում անպայման կարևորագույն օղակ է հանդիսանում պրոպագանդիստը: Ուսուցման վորակն առաջին հերթին կախված է այն բանից, թե ի՞նչ վորակի յե պրոպագանդիստի աշխատանքը, ինչպես և նա հասկանում իր իսկ դեկավարությամբ մշակվող հարցերի բովանդակությունը, ի՞նչքան հստակ են այն դիրքավորումները, վոր նա տալիս է ունկընդիրներին: Պրոպագանդիստը պետք է կարողանա մշակվող հարցում գտնել հիմնական օղակները, նրանց վրա կենտրոնացնել ուշադրությունը և ոգնել ունկնդիրներին ըմբռնելու նյութերի ուսումնասիրության ընթացքում ծագող հարցերը: Միայն այդ պայմանով է, վոր նա կոգնի ունկընդրին մարքս-լենինյան թեորիայով զինելու և կուսակցության դիրավոր գծի համար մղվող պայքարում նրա

ակտիվությունը բարձրացնելու գործին: Ուստի, կուսուսուցման վորակը մեծ բարձրության վրա դնելու համար, յուրաքանչյուր կուսկազմակերպություն պետք է բացառիկ ուշադրություն նվիրի պրոպագանդիստի աշխատանքին, սիստեմատիկ կերպով ստուգման յենթարկելով նրա աշխատանքը և ամեն կերպ նրան ոգնելով:

Մեր կուսակցության վիթխարի աճումը, պրոլետարիատի և այլ աշխատավորների վրա նրա ունեցած ազդեցության աճումը, բազմամիլիոն մասսաների ներդրավումը սոցիալիզմի համար մղվող ակտիվ և գիտակցված պայքարում, իրենց հետ բերում են կուսլուսավորության ցանցի և քաղկրթության արտակուսակցական ցանցի աննախընթաց չափերի հասնող ծավալումը: Բնական է, վոր այս պայմաններում պրոպագանդիստական աշխատանքը կարելի յե ապահովել միայն ներդրավելով պրոպագանդիստների նոր կադրերի, առաջին հերթին՝ արտադրական քանվորներից, վորոնք ավելի լավ կարող են կուսուսուցման հարցերը շաղկապել սոցիալիստական շինարարության պրակտիկայի հետ, ավյուր կոնկրետ ձեռնարկության խնդիրների շրջանակում: Ուսուցման անցյալ տարվա փորձը ցույց է տալիս, վոր պրոպագանդիստների կադրերի այդ ընդարձակումը, կուսակցականների նոր խավերի ներդրավումը պրոպագանդիստական աշխատանքում, փայլուն կերպով իրեն արդարացրեց: Պրոլետարական կուսակցությունը, բարձրացնելով իր անդամների տեսական մակարդակը և ոպորտունիզմի դեմ մղվող պայքարում կուսակցականորեն ստուգված լենինիստների կոփելով կարող է հաջողությամբ լուծել միլիոնների տեսական ուսուցման կազմակերպման և նրա դեկավարման ամենադժվարին խնդիրը:

Բայց այդ փորձը ցույց տվեց նաև այն, վոր հարկավոր է սիստեմատիկ ոգնություն ցույց տալ պրոպագանդիստին, հատկապես յերիտասարդ պրոպագանդիստին: Պրոպագանդիստների այդ կադրերի զգալի մասը դեռ բավական խորացրած կերպով չի տիրապետել մարքս-լենինյան թեորիային, դեռ պրոպագանդիստական աշխատանքի անհրաժեշտ փորձ չունի, հաճախ ել առաջին անդամն է ձեռնարկում կուսուսուցումն դեկավարելու պատասխանատու աշխատանքին:

Ներկայումս անհրաժեշտ ոգնություն ցույց տրվո՞ւմ է պրոպագանդիստին: Դժբախտաբար խիստ անբավարար չափով ու անսիստեմ:

Պրոպագանդիստներին դեկավարելու գործում գլխավոր թերությունը նրանց աշխատանքի կենդանի դեկավարման ծայրաստիճան անբավարար վիճակն է: Տրված ծրագիր, մեթոդական մշակումներ, գրականության ցուցակ—մեծ մասամբ այդքանով է վերջանում մեթոդիկայի և աշխատանքի բովանդակության գծով ցույց տրվող կոնկրետ ոգնությունը: Սակայն հաճախ դեկավարության այս լծակները ևս բացակայում են կամ պրոպագանդիստին ոգնելու յեն դալիս անբուլլատրելի

ուշացումով: Իսկ ղեկավարության այնպիսի ձևեր, ինչպիսին են պրոպագանդիստական կոլեկտիվները ու սեմինարները, կենդանի հրահանգավորումը, աշխատանքի փորձի կոլեկտիվ քննարկումը,—մեծ մասամբ բացակայում են, բացառությամբ մի քանի խոշոր ձեռնարկությունների և մի քանի քաղաքային շրջանների: Շատ հաճախ պրոպկոլեկտիվները գոյություն են ունենում միայն թղթի վրա, առանց սիստեմատիկ աշխատանք տանելու: Հաճախ կուսկոմները և շրջկոմները հանդիսատ «դիտում են» պրոպկոլեկտիվի աշխատանքի լիակատար տապալումը: Այնինչ պրոպկոլեկտիվը պրոպագանդիստների սիստեմատիկ ղեկավարման համար ամենից ավելի հարմարեցված աշխատանքի ձևն և հանդիսանում:

Իհարկե չի կարելի ժխտել պրոպագանդիստների ղեկավարման այնպիսի ձևերի խոշոր նշանակությունը, ինչպիսին են ժուրնալը, գիրքը, մեթոդական ձեռնարկը և այլն: Ընդհակառակը, ղեկավարման այդ ձևերը պետք է ամեն կերպ ուժեղացնել և լավացնել: Բայց խորապես սխալ է ղեկավարության միայն այդ ձևով վերջացնել պրոպագանդիստների մեջ կատարելիք ամբողջ աշխատանքը, ինչպես այդ տեղի ունեցավ շրջաններից մեծ մասի պրակտիկայում անցյալ ուսումնական տարվա վերջերին և յերբեմն ել տեղի յե ունենում հիմա, նոր ուսումնական տարվա սկզբին: Յուրաքանչյուր շրջկոմի և խոշոր ձեռնարկության կուլտպրոպի առաջնագույն պարտականությունը պետք է լինի կանոնավոր աշխատող պրոպկոլեկտիվներ ստեղծել, ընթացիկ քաղաքականության խմբակների ցանցի, դիլերային կուսխորհրդային դպրոցների համար առանձին-առանձին: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ընթացիկ քաղաքականության պրոպկոլեկտիվների կանոնավոր ու ռպերատիվ աշխատանքն ապահովելու անհրաժեշտությանը:

Յուրաքանչյուր խոշոր արդյունաբերական ձեռնարկություն պետք է ապահովվի ինքնուրույն պրոպկոլեկտիվներով կուսլուսավորության դպրոցների ու խմբակների առանձին խմբերի համար: Նույն բանը, անշուշտ, վերաբերում է, իբրև կանոն, նաև ԲՈՒՀ-երին, տեխնիկական ԲՈՒՀ-երին, կուսակցական, խորհրդային և տնտեսական հիմնարկություններին: Այն պրոպագանդիստները, որոնք աշխատում են սեփական պրոպկոլեկտիվներ չունեցող ձեռնարկություններում և հիմնարկություններում, պետք է սպասարկվեն անմիջապես շրջկոմներին կից դորձող պրոպկոլեկտիվների կողմից: Վերջին դեպքում, չափազանց բազմամարդ պրոպկոլեկտիվներ ունենալուց խուսափելու համար (ցանկալի յե 30 պրոպագանդիստից վոչ ավելի), շրջկոմին կից կարելի յե կազմակերպել մի քանի հարանման պրոպկոլեկտիվներ: Ընդ վորում շատ կարևոր է այս դեպքում ևս պահպանել պրոպկոլեկտիվների կոմպլեկտավորման արտադրական սկզբունքը, այդպիսիք ստեղծելով ըստ արդյունաբերության առանձին ճյուղերի (ծանր արդյունաբերություն, թեթև արդյունաբերություն, շինարարություն և այլն):

Պրոպկոլեկտիվի խնդիրն է, առաջին, ռպերատիվ պլանայնություն մտցնել կուսլուսավորության այս կամ այն տիպի դպրոցների կամ խմբակների ամբողջ ցանցի աշխատանքում—նշել պարտադիր ու ֆակուլտատիվ թեմաներ և նրանց մշակման ժամկետներ: Պլանը, վորպես կանոն, պետք է տրվի 2-3 ամսով առաջ, քննարկվի պրոպկոլեկտիվում, այնուհետև նրա կատարման արդյունքների հանրագումար տրվի:

Պրոպկոլեկտիվի ղեկավարը վոչ միայն պետք է պլան տա, այլ հիմնավորի այն, ցույց տալով այս կամ այն թեմայի դրման կապը կուսակցության և մասնավորապես տվյալ ձեռնարկության կուսակազմակերպության խնդիրների հետ: Փորձը ցույց է տալիս, վոր այս աշխատանքը պրոպագանդիստից չափազանց քիչ աշխատանք է խլում, բայց նա չափազանց հարկավոր է, վորովհետև պրոպագանդիստին պարզ կողմնորոշում է տալիս նրա աշխատանքի ակտուալ խնդիրներում, յետ մնացողներին ձիգ է տալիս, վերացնում է բաղմազանությունը թեմաների մշակման գործում, վերջ է տալիս այն խրման, վոր կա խմբակների աշխատանքի և անցկացվող մասսայական կամպանիաների միջև:

Պրոպկոլեկտիվի հաջորդ և հիմնական խնդիրն է հանդիսանում թեմաների սիստեմատիկ քննարկումը պլանում նշված կարգով: Ամենևին պարտադիր չի քննել ցանցի դպրոցի կամ խմբակի ծրագրի յուրաքանչյուր թեման, բայց պլանի բոլոր հիմնական թեմաներն անպայման պետք է լուսաբանվեն պրոպկոլեկտիվի աշխատանքում: Ընդ վորում, իհարկե, անհրաժեշտ է այդ թեմաները քննարկել նախքան ցանցում դնելը: Նկատի ունենալով այն հանգամանքը, վոր ընթացիկ քաղաքականության մեթոդական մշակումները սիստեմատիկ կերպով ուշանում են, պրոպկոլեկտիվը չպետք է սպասի մինչև նրանց լույս տեսնելը: Պրոպկոլեկտիվի ղեկավարն այդպիսի դեպքերում պետք է ինքնուրույն կերպով հրահանգչական ցուցումներ տա, այնպիսի հաշվով, վոր մեթոդական մշակումը կարողանա միայն լրացուցիչ կերպով ամրացնել այն ցուցումները, վոր պրոպագանդիստը նախորդ ստացել է պրոպկոլեկտիվում:

Ցանկալի յե պրոպկոլեկտիվում թեման քննարկել ցանցում դնելուց 6-8 որ առաջ, նպատակ ունենալով պրոպագանդիստին ավելի շատ հնարավորություն տալ պրոպկոլեկտիվի պարապմունքից հետո թեմայի նյութն արդեն ինքնուրույն կերպով մշակելու համար: Սակայն դա կանոն դարձնել, հատկապես ընթացիկ քաղաքականության հարցերի վերաբերմամբ, չի հաջողվի: Հաճախ, մանավանդ քաղաքային ցանցում, մասսայական ակտուալ կամպանիաներից յետ չմնալու համար, պրոպկոլեկտիվը հարկադրված պետք է լինի թեման մշակել վոչ ցանցում մշակելուց 1-2 որ առաջ:

Իսկ ինչո՞ւմ պետք է կայանա այս կամ այն թեմայի մշակումը պրոպկոլեկտիվում: Այս տեսակետից շարլոնն անթույլատրելի է: Թեման պրոպկոլեկտիվում մշակելու մեթոդը վորոշվում է առաջին հերթին պրոպագանդիստների տեսական և մեթոդական մակարդակի ստուգանով: Բայց բոլոր պայմաններում էլ սխալ կլինի՝ թեման խմբակում մշակելու մեթոդը մեխանիկորեն պրոպկոլեկտիվ փոխադրել: Թեմայի մշակումը պրոպկոլեկտիվում պրոպագանդիստին առաջին հերթին պետք է խորը պատկերացում տա թեմայի նպատակադրման, նրա մշակման պլանի, թեմայի հիմնական հանգուցային հարցերի և այդ հարցերի բովանդակության մասին: Նա պետք է պատկերացում ստանա թեմայի մշակման համար բերվող նյութերի—կուսակցական վորոշումների, մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրների ճառերի, հոդվածների ու աշխատությունների մասին, այն ուղիների մասին, վորով նա պետք է իր խմբակի աշխատանքը մասնակից դարձնի մշակելի հարցի կապակցությամբ լուսաբանվող խնդիրների իրացման համար մղվող պայքարին: Պրոպկոլեկտիվի ղեկավարը կարճ (10—15 րոպե) ներածականով դիրքավորումներ և տալիս այդ հարցերի շուրջը, վորից հետո տրվում են հարցերը, և պրոպկոլեկտիվի մասնակիցները քննադատական ու լրացուցիչ դիտողություններ են անում: Ամենից ավելի կարևոր ու հետաքրքրական հարցերն անջատվում են ավելի ծավալուն քննարկման համար: Իր յեղրափակման խոսքում պրոպկոլեկտիվի ղեկավարը պատասխանում է տրված հարցերին և դիրքավորում է տալիս պրոպկոլեկտիվում ծավալված վեճերի շուրջը, պարզաբանելով առանձին ընկերների տարակուսանքները: Պետք է ամեն կերպ խուսափել պրոպկոլեկտիվի պարապմունքներին դպրոցական բնույթ տալուց: Պրոպկոլեկտիվը չի կարող վոչ իր աշխատանքով փոխարինել պրոպագանդիստի նախապատրաստումը պարապմունքների անցկացման համար, վոչ էլ ստուգել տվյալ պարապմունքին նախապատրաստված լինելու աստիճանը: Նա պետք է պրոպագանդիստի ուշադրությունը սրի թեմայի բովանդակության և խմբակում կատարելիք աշխատանքի մեթոդիկայի ամենից ավելի էական հարցերի ուղղությամբ, համաձայն թեմայի կամ մշակվող նյութի յուրահատկության:

Մեծ սխալ կլիներ պրոպկոլեկտիվների պարապմունքներն ամբողջապես նվիրել մեթոդիկայի հարցերին: Պրոպկոլեկտիվների պրակտիկայում մինչև այժմ պրոպագանդիստին մեթոդիկայի դծով չափազանց քիչ ոգնություն և ցույց տրվում, բայց այդ յերբեք հիմք չի տալիս արդարացնելու հակառակ ծայրահեղությունը—վերացական մեթոդականացումը: Մեթոդիկայի հարցերը պրոպկոլեկտիվում, իբրև կանոն, պետք է քննարկվեն հերթական թեմաների քննարկման հետ միասին: Մեթոդիկայի դծով ունկնդիրներին հատուկ ոգնություն ցույց տալու համար հարկավոր է տարեսկզբին մեթոդիկային նվիրված հատուկ դրույց կազմակերպել: Դրանից բացի, հարկավոր է տարեկան 2—3 անգամ պրոպկոլեկտիվում քննել մեթոդիկայի հարցերը, սերտորեն շաղկապելով պրոպագանդիստներին աշխատանքի ընթացիկ պրակտիկայի հետ, ուշադրությունը կենտրոնացնելով մեկ կողմից՝ նրանց աշխատանքում հանդիպած ամենից ավելի տիպիկ դժվարությունների, իսկ մյուս կողմից՝ հայտնաբերված դրական փորձի վրա:

Մեթոդիկայի շուրջն առանձին կոնսուլտացիաներ կազմակերպելու համար հարկավոր է վորակյալ մեթոդիստի բերել: Ճիշտ է, այդ իրացնել շատ սակավ է հաջողվում, չնորհիվ կուսլուսավորության մեթոդիկայի վորակյալ աշխատողների լայն կադրի բացակայության: Իբրև կանոն, մեթոդիկայի դծով պրոպագանդիստն ոգնություն ստանալու յե մեթոդիկայի հարցերը պրոպկոլեկտիվում կոլեկտիվ կերպով քննարկելու միջոցով և հրահանգչական կոնսուլտացիաներում պրոպկոլեկտիվի ղեկավարի կողմից:

Պրոպկոլեկտիվի ղեկավարին պետք է առաջադրի կուսակամակերպությունը, վերցնելով այդպիսին ամենից ավելի փորձառու պրոպագանդիստներից և նկատի ունենալով առաջին հերթին նրա քաղաքական վորակավորումը: Այդ, իհարկե, վոչ միշտ կզուգադիպի անհրաժեշտ մեթոդական պատրաստությանը: Այս ասելով, մենք ամենևին չենք կամենում այն միտքը թույլ տալ, թե հնարավոր է, վոր պրոպկոլեկտիվի ղեկավարն արհամարհական վերաբերմունք ունենա մեթոդիկայի հարցերին և այդ տեսակետից իր պատրաստականությունը լրացնելուն: Բայց գլխավոր հատկությունը, վոր պահանջվում է պրոպկոլեկտիվի ղեկավարից, դա կուսակցության գլխավոր գծի համար մղվող պայքարի փորձում ստուգված հստակ քաղաքական դեմքն է և մյուս պրոպագանդիստների համեմատությամբ ավելի բարձր տեսական պատրաստության մակարդակը:

Պրոպկոլեկտիվը, ինչպես մենք այդ արդեն ցույց տվինք, պետք է սիստեմատիկ կերպով ստուգի պրոպագանդիստների աշխատանքի փորձն այս կամ այն թեմայի մշակման գործում: Այդ առանձնապես կարևոր է ընթացիկ քաղաքականության հարցերի վերաբերմամբ: Դրա համար պետք է վերցվեն ամենից ավելի ակտուալ թեմաները: Այդ անելիս պրոպկոլեկտիվում վոչ մի զեկուցում դնել չի պահանջվում: Քննարկումն սկսվում է ուղղակի վիճաբանություններից և պրոպագանդիստների զեկուցումներից (5 րոպե) թեմայի մշակման ընթացքի, պարապմունքներում ծագած տարակուսանքների մասին, այն մասին, թե ինչպես են խմբակները կամ դպրոցները լուծել անպարզ հարցերը, պրոպագանդիստին ի՞նչպես է հաջողվել հարցի քննարկմանն ուղղություն տալ, վերջապես՝ ի՞նչ կոնկրետ միջոցառումներ են նշված քննարկման հետևանքով և ի՞նչպես են նրանք կիրառվում: Փորձի այդպիսի փոխանակումը, արդյունքների քննարկումը պրոպկոլեկտիվում

և նրանց ընդհանրացումը ղեկավարի կողմից, խոշոր դրական արդյունք են տալիս: Պրոպագանդիստների մասավոր հորիզոնն ընդարձակվում է: Նրանք փոխադարձաբար ծանոթանում են այն հարցերին, վորոնք պարապմունքների ընթացքում ծագում են ունկընդիրների մոտ, և վոր դըլխավորն է, նրանք ծանոթանում են այն բանին, թե պրոպագանդիստն ի՞նչպես պետք է ակտիվ կերպով ղեկավարի այդ հարցերի լուծման աշխատանքը խմբակի պարապմունքներում, ի՞նչպես պետք է թեորիան շաղկապի պրակտիկայի հետ: Կրասնայա Պրեսնյայի ռայիոնին կից խմբակների ղեկավարների միացյալ պրոպկոլեկտիվում այդպիսի աշխատանքի փորձն անցյալ ուսումնական տարում իրեն ամբողջապես արդարացրեց:

Պրոպկոլեկտիվի պարապմունքներին զուգընթաց՝ նրան կից պետք է կազմակերպել նաև կոնսուլտացիա հերթական թեմաների շուրջը: Կոնսուլտացիաներ պետք է տա միայն պրոպկոլեկտիվի ղեկավարը, կամ տվյալ կոլեկտիվի ամենից ավելի փորձված պրոպագանդիստը: Առանձին թեմաների համար իբրև կոնսուլտանտ կարող են բերվել նաև դրսի ընկերներից:

Պրոպկոլեկտիվը պետք է շարունակ ամենասերտ կերպով կապված լինի կուսկաբինետի հետ, նրան դիմելով պրոպագանդիստների ապահովմանն անհրաժեշտ նյութեր ստանալու համար, և վոչ միայն գրականություն, այլև ուրիշ վիճակագրական ու ինֆորմացիոն նյութեր հերթական թեմաների վերաբերյալ:

Պրոպկոլեկտիվը կկարողանա պրոպագանդիստին իրոք ոպերատիվ ողնություն ցույց տալ միայն այն դեպքում, յեթե նրա միջոցով կազմակերպվի պրոպագանդիստի աշխատանքի հետ ծանոթանալու գործը հենց տեղում՝ դպրոցի կամ խմբակի պարապմունքում: Մինչև այժմ համարյա թե կանոն է դարձել, վոր այդ ծանոթացումը կատարվում շրջկոմի կուլտպրոպի միջոցով, պրոպկոլեկտիվից դուրս: Հետազոտողներ են նշանակվում, վորոնք մեկ կամ յերկու անգամ խմբակի պարապմունքներին ներկա լինելով՝ պրոպագանդիստի աշխատանքի մասին գնահատական են ներկայացնում շրջկոմին: Նյութի ընդհանրացումը կատարում են բրիգադները կուլտպրոպի ապարատում, և լավագույն դեպքում յեղրակացությունները քննվում են մեթոդական բյուրոյում: Այդպիսի աշխատանքն իր մեջ խոշոր բաց է պարունակում—անսիստեմություն—և չի ապահովում կոնկրետ ղեկավարությունը: Հետազոտությունը տվյալ դեպքում համարյա թե չի շաղկապվում այն ռեալ ողնության հետ, վորը պետք է ցույց տրվի պրոպագանդիստին:

Պրոպագանդիստի աշխատանքի հետ ծանոթանալու գործն անհատական կոնսուլտացիայի ու նրա փորձի կոլեկտիվ քննարկման միջոցով նրան ողնություն ցույց տալ—ինքդին զուգորդելու համար, այս աշխատանքը պետք է ամենասերտ կապով կապել պրոպկոլեկտիվի հետ: Հետազոտողները չպետք է պատահարար վերցվեն (հաճախ նրանք վերցվում են այն պրոպագանդիստներից, վորոնք պատահարար չեն ամրացված այս կամ այն խմբակին): Հետազոտողը պետք է միաժամանակ լինի նաև արտահոստիրային հրահանգիչ, իսկ այդ պահանջում է, վոր նա ունենա պրոպագանդիստական աշխատանքի լավ փորձ և այդ փորձի ցուցադրման տվյալներ: Ուստի իբրև հրահանգիչ—հետազոտողներ պետք է առաջ քաշվեն ամենից ավելի փորձված պրոպագանդիստները: Ուսումնական տարվա սկզբից նրանք պետք է մտցվեն պրոպկոլեկտիվի կազմում վորպես նրա մշտական աշխատողներ, պրոպկոլեկտիվի ղեկավարի անմիջական ողնականներ: Դա նրանց հնարավորություն կտա շարունակ իրազեկ լինել տվյալ տիպի կուսլուսավորության ցանցի ամբողջ աշխատանքին, հետևել այդ աշխատանքի բովանդակությանը և պրոպագանդիստների կազմին, յերևան ֆանել պրոպագանդիստական աշխատանքի ամենից ավելի ակտուալ հարցերը և իրենց հետազոտությունների հիման վրա աշխատանքի ընթացքում մասնակցել առանձին թերությունների ուղղմանը: Սրանով մենք կապահովենք պրոպագանդիստների ղեկավարման կոնկրետությունը և նրանց ցույց տրվող ողնության ոպերատիվ տեմպերը:

Շրջկոմի կուլտպրոպի հետ համաձայնեցրած հետազոտական պլանով հրահանգիչ-հետազոտողները ծանոթանում են առանձին խմբակների ու դպրոցների աշխատանքին (իբրև կանոն, հարկավոր է լինել 2—3 պարապմունքի): Ամենևին անհրաժեշտ չե համապարփակ հետազոտության յենթարկել ամբողջ ցանցը: Առանձին խմբակներ ընտրելու սկզբունքը հնարավորություն կտա ծանոթանալ կուսլուսավորության աշխատանքի ամենից ավելի տիպիկ յերևույթներին: Ընդ վորում հնարավորություն է ստեղծվում ապահովել դպրոցների և խմբակների հետազոտությունը արտադրության այն ճյուղերում, վորտեղ առանձնապես տրվում է արդֆինպլանի կատարման պայքարն ուժեղացնելու ուղղությամբ բանվորների ուշադրությունը մոբիլիզացիայի յենթարկելու խնդիրը: Իրենց հետազոտությունների հիման վրա հրահանգիչները պրոպագանդիստներին կոնկրետ ցուցմունքներ են տալիս նրանց աշխատանքի եյության վերաբերյալ, խորհուրդներ են տալիս, ողնության կանչելով նաև պրոպկոլեկտիվի ղեկավարին: Հետազոտված պրոպագանդիստների ամբողջ խմբերի վերաբերյալ ընդհանրացված յեղրակացությունները հրահանգիչները փոխադրում են պրոպկոլեկտիվի քննությանը (տարեկան մի քանի անգամ, բայց վոչ շատ հաճախ): Հրահանգիչ—պրոպագանդիստը պրոպկոլեկտիվի ղեկավարի հետ միասին պետք է նաև սիստեմատիկ կերպով մասնակից դարձվեն շրջկոմի մեթոդական բյուրոյի աշխատանքին:

Պրոպկոլեկտիվը շրջիկմի կուլտպրոպի առաջ նախաձեռնություն պետք է հայտնաբերի պրոպագանդիստների սիստեմատիկ ուսուցում կազմակերպելու գործում, ոգնելով կուլտպրոպին այդ նպատակով հատուկ դասընթացներ և սեմինարներ կազմակերպելու համար: Կուսլուսավորության ցանցում իբրև սոցմրցման և հարվածայնության խրախուսանք՝ պրոպկոլեկտիվին իրավունք պետք է վերապահել շրջիկմին ներկայացնելու լավագույն պրոպագանդիստներին՝ վորպես թեկնածու հետագա ուսման համար (դասընթացներում, ԲՈՒՀ-երում, Կարմիր Պրոֆեսուրայի ինստիտուտում և այլն):

Պրոպկոլեկտիվի աշխատանքը կազմակերպելիս պետք է նկատի ունենալ, վոր նա սոսկ ազակցող դեր է կատարում պրոպագանդիստի աշխատանքում: Ուստի այնպես պետք է կազմակերպել աշխատանքը, վորպեսզի պրոպագանդիստը չծանրաբեռնվի և չդրկվի իր պրոպագանդիստական աշխատանքն ինտենսիվ կերպով առաջ տանելու, իր տեսակետ դիտելիքների մակարդակը բարձրացնելու հնարավորությունից: Քաղաքային կուսկազմակերպության պայմաններում միանգամայն բավական է պրոպկոլեկտիվի ընդհանուր պարապմունքները, վորպես կանոն ունենալ յերկու տասնորյակում մեկ անգամ, մնացած ժամանակամիջոցում առանձին թեմաների ու հարցերի շուրջը ֆակուլտատիվ ու կոնսուլտացիոնոր կազմակերպելով:

Պրոպկոլեկտիվները պետք է դառնան շրջիկմների և կուսկոմների կուլտպրոպների անմիջական ոպերատիվ ոգնականներ պրոպագանդիստական աշխատանքի կենդանի ղեկավարման ասպարիզում: Ցուրաքանչյուր շրջիկմի կուլտպրոպ պետք է ապահովի այդ ուժեղ լծակները և նրանց միջոցով իրագործի կուսլուսավորության ցանցի կոնկրետ ղեկավարությունը հենց աշխատանքի ընթացքում:

Պրոպկոլեկտիվների աշխատանքին հսկելու և նրանց աշխատանքի մեթոդը քննարկելու համար կուլտպրոպները պետք է մեթոդական բյուրոներին կից ղեկավարների խորհրդակցություններ հրավիրեն:

Պրոպկոլեկտիվի աշխատանքի մեր նկարագրած սիստեմն անշուշտ չի կարող պարտադիր համարվել կուսլուսավորության բոլոր տիպերի համար: Նա ամենից ավելի հարմարեցված է ընթացիկ քաղաքականության խմբակների ցանցին: Այն պարտադիր, կայուն սխեմա դարձնել, նշանակում է խեղաթյուրել: Կուսլուսավորության ներտավորված ցանցին ապասարկելու համար պրոպկոլեկտիվների աշխատանքի սիստեմ ստեղծելը պետք է կատարվի պրոպկոլեկտիվների աշխատանքի պրակտիկայում: Պրոպագանդիստների ստեղծարար աշխատանքի համար այստեղ հսկայական հնարավորություններ են բացվում:

Այս հոդվածի հիմնական նպատակն է լայն քննության դնել պրոպագանդիստական աշխատանքի կենդանի ղեկավարումն բարելավող կոնկրետ միջոցառումների չափազանց ակտուալ հարցը, վորովհետև առանց այդ կենդանի ղեկավարության՝ նա չի կարող հաջողությամբ կատարել կուսակցական կադրերի պատրաստման պատասխանատու խնդիրը, վորը նրան առաջադրել է կուսակցությունը:

Ռ. ԶԵՆԻՍ

ԼԱԲՈՐԱՏՈՐ ՄԵԹՈԴԸ ՑԵՎ ՆՐԱ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԿՈՒՍԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑՈՒՄ

Բանվորա-գյուղացիական մասսաների դաստիարակությունը և ուսուցումը պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում, դասակարգային հաջող պայքարի և սոցիալիստական շինարարության շահերից յելնելով, չեն կարող կտրված լինել դասակարգային պայքարի կոնկրետ բովանդակությունից և գործնական աշխատանքում մասսաների ունեցած անմիջական մասնակցությունից:

Համկ(բ)Կ ԿԿ-ն 1930 թ. սեպտեմբերի 13-ի իր վորոշման մեջ հետևյալ կերպ ձևակերպեց կուսլուսավորության հիմնական խնդիրը.—«Կուսլուսավորության բոլոր տեսակների հիմքում առաջիկա տարում պետք է դրվեն XVI համագումարի վորոշումները: Կուսուսուցումը դպրոցներում և խմբակներում պետք է ամենասերտ կերպով շաղկապվի ձեռնարկության և գյուղի կուսկազմակերպության կոնկրետ խնդիրների հետ»: Այնուհետև, նույն վորոշման մեջ թվարկում են այդ կոնկրետ խնդիրներից ամենից ավելի կարևորները, այն է՝ մասսաներին ներգրավել հնգամյակի յերրորդ տարվա արդիֆիկացիայի կատարման գործում, ծավալել խորհրդատեսությունների և կոլոնտեսությունների շինարարությունը, ուժեղացնել աշխատանքը չքավորության մեջ, ամրացնել ցանքի կամպանիաները, պայքարել ինքնարժեքի իջեցման և արտադրության ռացիոնալացման համար: Կուսկազմակերպության հենց այս կոնկրետ խնդիրների հետ էլ պետք է շաղկապվի մարքս-լենինյան թեորիան:

Այստեղ անխուսափելիորեն պետք է դրվի կուսցանցի դպրոցների և խմբակների աշխատանքի այն ուղիների ու մեթոդների հարցը, վորոնց ոգնությամբ կարող են կատարվել և պետք է կատարվեն կուսակցության առաջադրած խնդիրները:

Կարիք չկա խոսել այն մասին, վոր դիտելիքների պասսիվ, վոչ-քննադատական (դոգմատիկական) յուրացման մեթոդներով, չի կարելի լուծել կուսլուսավորության խնդիրը, այն է՝ հեղափոխական թեորիան հեղափոխական պրակտիկայի հետ շաղկապելու խնդիրը: Ձեռք բերվող դիտելիքները պետք է քննադատորեն վերամշակվեն սովորողների գիտակցության մեջ:

Դեռ վոչ-շատ ժամանակ առաջ պրոպագանդիստների մեջ այն սխալ կարծիքը գոյություն ուներ, վոր լաբորատոր մեթոդը չի կարող կիրառվել կուսլուսավարության ցանցում, հատկապես նրա ստորին ողակնե-

բում, վորովհետև այդ մեթոդն իրրև թե սովորողներից պահանջում է շատ բարձր նախապատրաստություն և համենայն դեպս դրքի վրա ինքնուրույն աշխատանք կատարելու մեծ ունակություններ: Ամենաշատը, վոր թույլատրելի և հնարավոր եր համարվում ստորին ցանցում, այսպես կոչված «կենդանի դրույցի» մեթոդն եր: Այնինչ կյանքը համառորեն պահանջում եր կուսլուսավորության դպրոցներից ու խմբակներից վտարել դոգմատիկական մեթոդները և արմատացնել ակտիվ մեթոդները: Այս հարցի առթիվ քանիցս արտահայտվել են ԿԿ-ին կից կայացած խորհրդակցությունները և այդ նույն հարցի առթիվ կա Մոսկվայի կոմիտեի կուլտպրոպ բաժնի պարզ վորոշումը, վորտեղ խոսվում է դիշերային կուսխորհրդային դպրոցներում վորակյալ մեթոդներ և հատկապես լաբորատոր մեթոդը մտցնելու անհրաժեշտության մասին:

Կյանքի պահանջների ճնշման ներքո լաբորատոր մեթոդի վերաբերմամբ գոյություն ունեցող մեր մատնանշած այս նախապաշարումը հետզհետե արխիվն է հանձնվում: Լաբորատոր մեթոդը կիրառվում է, բայց վոչ ամբողջապես, այլ չգիտես թե ինչու «կիսով չափ»: Եթե առհասարակ թույլ տալու լինենք «կիսալաբորատոր մեթոդը», այն ժամանակ ի՞նչպիսի մեթոդով է լրացվելու ուսուցման յերկրորդ կեսը: Այստեղ ևս ուղիղ պատասխան չկա, բայց դժվար չե գուշակել, վոր այդ «յերկրորդ կեսը» հանձնվում է դոգմատիկ կամ ավտորիտար մեթոդի տնորինությանը:

Այսպիսով, «Կիսալաբորատոր մեթոդը», վորը ցուցադրվում է իրրև մի ինչ վոր նոր հայտնաբերում կուսլուսավորության մեթոդիկայում, դուրս է գալիս վոչ այլ ինչ, յեթե վոչ լաբորատոր—դոգմատիկ մեթոդ:

Աշխատենք ժուրնալի կարճ հոդվածի շրջանակներում բաց անել լաբորատոր մեթոդի բուն, ընդ վորում և հեղափոխական եությունը, այնպես, ինչպես մենք այդ հասկանում ենք մեր դպրոցի համար, և ցույց տալ, վոր հենց լաբորատոր մեթոդն է հանդիսանում այն միակ մեթոդը, վորի ոգնությամբ կարող են լուծվել Համկ(բ)Կ ԿԿ-ի 1930 թ. սեպտեմբերի 13-ի վորոշմամբ կուսլուսավորության առաջ դրված խնդիրները:

Լաբորատոր աշխատանքն ամենից առաջ ինքնագործունեություն է: Կուսյանցի դպրոցների և խմբակների աշխատանքը լաբորատոր մեթոդի փոխանցելը նշանակում է սովորողներին դնել ինքնագործունեության ռելսերի վրա: Անշուշտ, ավտոմատիկ մեխանիզմները նույնպես ինքնագործող են, բայց նրանք իրենց ինքնագործունեության ընթացքում վերարտադրում են նրանց ստեղծող մարդու կամքն ու ցանկությունը, նրանք, յեթե կարելի յե այդպես արտահայտվել մեխանիզմների վերաբերմամբ, իրենց ինքնագործունեության ընթացքում պասսիվ են, վոչինչ չեն ստեղծում, վոչինչ չեն հնարում: Բուրժուական դպրոցը հենց այդպես ել հասկանում է լաբորատոր մեթոդը: Այս մեթոդի ոգնու-

թյամբ նա աշխատում է զարդացնել սովորողի ինքնագործունեությունը, յուրացման ավտոմատիզմի խմատով բարձր կատարելության հասցնել, բայց սրանից դենը բուրժուական դպրոցը չի գնում և չի կարող գընալ: Բուրժուական դպրոցի լաբորատոր մեթոդը մեքենայացնում է սովորողների մտավոր գործունեությունը, նրանց կամքը յենթարկում է բուրժուազիայի շահերին: Իր աշխատանքի ընթացքում սովորողը վերարտադրում է բուրժուազիայի կամքն ու ցանկությունը: Բուրժուական դպրոցի լաբորատոր մեթոդը մի այնպիսի մեթոդ է, վոր նպատակ ունի դիտակցաբար ամրացնել ստեղծարար հեղափոխական նախաձեռնությունն ու ակտիվությունը:

Ակտիվությունն ու նախաձեռնությունը բուրժուազիայի տիրապետության դարաշրջանում թույլատրելի յին միայն մի բուռն իշխողների և այն մարդկանց համար, վորոնք իդեալես դիրքերում բուրժուազիային, ամբողջապես տոգորվում են նրա աշխարհայեցողությամբ և նրա դասակարգային շահերով:

Բոլորովին այլ կերպ են վերաբերվում բուրժուազիան և նրա դպրոցը բանվորական և աշխատավորական լայն մասսաների ակտիվության ու նախաձեռնության զարդացման գործին: Այդտեղ խնդիրները հակառակ կողմն են ուղղվում—վոչ թե զարդացնել, այլ, ընդհակառակը, ջլատել, ամլացնել այդ ակտիվությունը: Ահա թե ինչո՞ւ բուրժուական դպրոցի լաբորատոր մեթոդի ներքին եությունը, չնայած ինքնագործունեության արտաքին բարձր ցուցանիշներին, կրկնապատիկ պասսիվ, կրկնապատիկ դոգմատիկ բնույթ ունի:

Բոլորովին այլ կերպ է խնդիրը մեզ մոտ: Մի անգամայն անհնարին է առանց բանվորա-դյուղացիական մասսաների ակտիվության ու նախաձեռնության լայն ոգտագործման լուծել սոցիալիստական շինարարության վիթխարագույն խնդիրները: Սոցիալիստական մրցության և հարվածայնության ամբողջ իմաստն ու նշանակությունը հենց այն է, վոր նրանք պետք է մորիլիզացիայի յենթարկեն և ռացիոնալ ձևով ոգտագործեն լայն մասսաների ակտիվության ու ստեղծարար նախաձեռնության անսպառ աղբյուրները: Այս մեթոդների (սոցմրցման ու հարվածայնության) ոգնությամբ մենք բաց ենք անում արտադրողական ուժերի և բանվորական լայն մասսաների ստեղծագործության նորանոր աղբյուրներ, այս մեթոդների ոգնությամբ մենք բաց ենք անում նյութական և աշխատանքային նորանոր ռեսուրսներ, մենք ավելի լայն ու արագ թափով սկսում ենք ոգտագործել մեր ներքին ռեզերվները, վորի հետևանքով ել ապահովվում են մեր յերկրի սոցիալիստական ինդուստրիայի զարդացման չտեսնված տեմպերը: Բայց խնդիրը ներքին ստեղծարար ռեսուրսները դրսևորելու մեջ չե միայն,—այդ ռե-

աշակերտները պետք է գործեն դրության մեջ դնել, նրանց ակտիվացնել սոցիալիստական շինարարության հերթական խնդիրներին միանգամայն համապատասխան, նրանց պետք է ուղղել կուսակցության դլխավոր գծի համար պայքարելու կողմը, ամեն տեսակ թեքումները, տատանումները և յերերումները հաղթահարելու կողմը: Դրանում է մեր կուսլուսավորության ցանցի լաբորատոր մեթոդի վողջ ներքին եությունը:

Ստեղծարար մղման խիզախություն ու հեղափոխականություն, լայն թափ, բայլշևիկյան հաստատակամություն ու համառություն, խիստ կազմակերպվածություն ու պլանայնություն դրված խնդիրների լուծման գործում,—ահա թե ինչպիսի խնդիրներ պետք է առաջադրվեն և կարող են առաջադրվել կուսլուսավորության մեթոդիկային: Այսպիսով, մենք ևս մեթոդիկայի առաջ դնում ենք մասսաների ինքնագործունեության զարդացման խնդիրը, միայն թե այդ զարդացումը պետք է տեղի ունենա ակտիվության հիման վրա, նախաձեռնության դրսևորման հիման վրա: Դա մեր դպրոցի լաբորատոր մեթոդի խիստ եական տարբերությունն է: Մեր լաբորատոր մեթոդը պետք է բնութագրվի ոչ միայն սովորողների սոսկական ինքնագործունեությամբ, այլև անպայման ակտիվ ինքնագործունեությամբ:

Սխալ կլիներ մեր լաբորատոր մեթոդի տարբերությունը համարել միայն ակտիվ ինքնագործունեությունը տեսական հարցերի ուսումնասիրության ժամանակ, սովորողի այդ ակտիվ ինքնագործունեությունը դպրոցի չրջանակներից դուրս չտարածելով նրա այն գործնական աշխատանքի վրա ևս, որ նա կատարում է ձեռնարկություններում, կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում:

Կուսակցության անդամի ակտիվությունը, հատկապես կուսակցության դլխավոր գծի կիրառման գործում, պետք է արտահայտվի ոչ միայն այն բանում, որ այս կամ այն կուսակցականն ակտիվ լինի կուսժողովներում յելույթ կատարելու խնդրում, դպրոցի, խմբակի պարապմունքներում և այլն, այլև այն բանում, որ նա այդ ակտիվությունն ու համառությունը փոխադրի կուսակցության դլխավոր գծի գործնական իրականացման մեջ, ակտիվ կերպով պայքարի ամեն տեսակ տատանումների, յերերումների և թեքումների դեմ, ինչպես իր ուսումնական աշխատանքներում, այնպես ել այն գործնական աշխատանքում, որ նա կատարում է գործարանում, խորհտնտեսությունում և կոլտնտեսությունում: Դրանում է թեորիան պրակտիկայի հետ շաղկապելու իմաստը:

Կուսլուսավորությունը պետք է տա այնպիսի դիտելիքներ և այնպիսի ձևով, որ սովորողներն իրենց գործնական աշխատանքը կատարեն հեղափոխականորեն, չարունակ նկատի ունենալով դասակարդային որոշակի խնդիրներ: Դպրոցում կամ խմբակում ստացվող դիտելիքները

պետք է բարձրացնեն յուրաքանչյուր սովորողի դասակարդային աչալրջությունն ու զգուշավորությունը, բարձրացնեն նրանց մարտունակությունը դասակարդային պայքարում, կուսակցության դլխավոր գծի համար մղվող պայքարում, վորպեսզի այդ դիտելիքները չմնան իրրև մեռած տառ կամ նորաձև հեղափոխական ֆրազա:

Կուսլուսավորության ցանցում լաբորատոր մեթոդը կիրառելու անկարելիության վերաբերյալ մեր մատնանշած վերոհիշյալ նախապաշարումից բացի, գոյություն ունի մի նախապաշարում ևս, վորը հանդում է այն բանին, թե լաբորատոր մեթոդը կուսլուսավորության ցանցում ոչ-ադրծել չի կարելի այն պատճառով, վոր այնտեղ ուսուցումը, վորպես կանոն, տարվում է դասադրքերով: Դասադրքում, ասում են, չարադրվում են ամբողջապես ձևակերպված մտքեր և դրություններ, տրվում են պատրաստի յեղրակացություններ, և այդ մտքերն ու յեզրակացություններն ուսումնասիրելիս, սովորողներին մնում է լոկ հասկանալ և մտքում պահել դրանք:

Բայց դասադրքի ամբողջապես ձևակերպված դրություններն ու պատրաստի յեղրակացությունները կարելի յե նաև նոր ձևով ուսումնասիրել: Այլ բան է հասկանալ և մտքում պահել պատրաստի ձևակերպումն ու պատրաստի յեզրակացությունը, վստահարար յուրացնել, և այլ բան, յերբ հասկանալով պատրաստի ձևակերպումների և յեզրակացությունների բովանդակությունը, սովորողը, նրանց քննադատական վերամշակման յենթարկելով, իր պրակտիկայից փաստեր մոբիլիզացիայի յենթարկելով, ստուգում և իր փորձով համոզվում է այդ յեզրակացությունների ճշտությանը:

Մեր այս վերջին դրությունները լուսաբանենք նախնական կուսդրպրոցի համար կազմված ժուրնալ-դասադրքից վերցրած մի քանի օրինակներով: Վերցնենք մի քանի օրինակ 3-րդ համարի առաջին թեմայից, վորի վերնագիրն է «Դեպի ծավալուն սոցիալիստական արշավ»: Այս թեմայի առաջին բաժնում խոսվում է յերկու սիստեմների մրցության և այն առավելության մասին, վոր ունի տնտեսության մեր սիստեմը կապիտալիստականի հանդեպ: Այս մտքերի ու յեղրակացությունների մշակման համար լաբորատոր մեթոդ կիրառելով, անհրաժեշտ է սովորողների առաջ դնել, օրինակ, այսպիսի մի խնդիր.—«Հաշվի առնելով մեր միության մեջ պարենավորման ասպարիզում յեղած դժվարությունները և արդյունաբերական ապրանքների պակասը, իսկ կապիտալիստական յերկրներում թե՛ արդյունաբերության և թե՛ գյուղատնտեսության մեջ յեղած գերարտադրությունը, փորձեցեք ապացուցել, վոր մեր սիստեմի առավելության մասին դասադրքում արված պնդման մեջ վոչ մի հակասություն չկա: Այս մտքի հիմնավորումը կատարեցեք վոչ միայն դասադրքում չարադրված փաստերի քննության հիմնի վրա, այլև

ձեր արտադրության, խորհրդատվության, կոլտնտեսության պրակտիկայից վերցրած տվյալների հիման վրա»:

Այս դասընթացի հաջորդ բաժնում, որի վերնագիրն է «Հաղթահարենք աճման դժվարությունները», շարադրված են տնտեսական շինարարության անխուսափելի դժվարությունների վերաբերյալ մտքերը: Այստեղ անհրաժեշտ է ուշադրությունը սրել այն տարբերության վրա, որով այդ դժվարությունները գնահատում են աշխատողները և կուսակցությունը: Անհրաժեշտ է, որ սովորողները հասկանան այն հակայական տարբերությունը, որ կա կուսակցության «հաշվի առնել դժվարությունները» լոզունգի և աշխատողների «հարմարվել դժվարություններին» լոզունգի միջև, որ նրանք գլխի ընկնեն, թե ինչու աշխատողների լոզունգն ոչորտաունիստական է, անձնատվություն և դժվարությունների առաջ: Հարկավոր է, որ սովորողներն անմիջական պրակտիկայից վերցրած կոնկրետ օրինակների հիման վրա հասկանան ներկա տեմպերից հրաժարվելու մասին աշխատողների առաջադրած պահանջների ողջ սխալականությունն ու վտանգավորությունը, նրանք պետք է մանրամասնորեն և կոնկրետ օրինակների հիման վրա ըմբռնեն, որ աշխատողների այս պահանջի կատարումը չի թուլացնում դժվարությունները, այլ սրում է: Այս նույն բաժնում դրվում է նաև մեր ապրած դժվարությունների առանձնահատկությունների հարցը: Դասընթացում այս հարցին պատասխան է տրվում ամենաընդհանուր ձևով.—«Նա (առանձնահատկությունը) կայանում է այն բանում, որ մենք գործ ունենք վոչ թե տնտեսության անկման և փտման դժվարությունների հետ, որպիսին այժմ տեղի է ունենում կապիտալիստական երկրներում, օրինակ՝ ՀԱՄՆ-ում, այլ տնտեսության վերելքի աճման դժվարությունների հետ»: Բայց այս պատասխանը լիովին բաց չի անում մեր դժվարությունների առանձնահատկությունների բովանդակությունը և նրանց տարբերությունները կապիտալիստական տնտեսության դժվարություններից: Բավական չի ուսումնասիրել այս հակիրճ բնորոշումը, հարկավոր է այն մարմնացնել կոնկրետ ու կենդանի փաստերի մեջ: Միայն այն ժամանակ սովորողը կըմբռնի, թե ինչու մեր դժվարություններն աճման դժվարություններ են հանդիսանում, և այն ժամանակ նրան կպարզվի, թե ինչո՞ւ կապիտալիստական երկրները գերարտադրության պայմաններում անկման դժվարություններ են տարբերում:

Ըմբռնելով այս բոլոր հարցերը, սովորողը կհանդի իր համար վորոշ գործնական բնույթի եզրակացություններ անելու անհրաժեշտությանը: Մշակման հետևանքով ունկընդիրը, գիտակցելով իր առաջ դրված խնդրի կարևորությունը, մյուս բանվորների մեջ ակտիվ ագիտացիա կմղի, վորպեսզի մոբիլիզացիայի յենթարկի նրանց բոլոր ուժերն ու ընդունակությունները՝ ներքին հարուստ ռեսուրսների ոգտագործման միջոցով դժվարությունները հաղթահարելու համար:

Հետևողական կապակցությամբ պետք է դնել նաև ճեղքվածքների վերաբերյալ հարցի մշակումը: Դասընթացում այսպիսի մի արտահայտություն կա.—«Մենք դեռ ամենևին չենք սովորել աշխատել այնպես, ինչպես հարկն է»: Պետք է այնպես մշակել այս հարցը, որ ունկընդիրները շեշտակի զգան, որ այդ վերաբերում է նրանցից յուրաքանչյուրին, որ նրանք իրենց հետագա գործնական աշխատանքի ընթացքում այնպես պետք է վերաբերվեն, որ իրենց և իրենց ձեռնարկության առաջ կոնկրետ խնդիր դնեն ու պարտավորություն վերցնեն այդ խնդիրը վորոշ ժամկետում կատարելու, որի լրանալուց հետո հաշիվ տան խմբակին այդ խնդրի կատարման արդյունքների մասին: Ներկայումս, ի միջի այլոց, ճեղքվածքների դեմ պայքարելու ամենաուժեղ խնդիրներից մեկն է հանդիսանում ներքին ռեսուրսները ճիշտ ոգտագործելու և ռացիոնալացման համար պայքարելու խնդիրը: Ուստի այս հարցի մշակումից հետո սովորողների վերցնելիք կոնկրետ խնդիրներից մեկը կարող է լինել ձեռնարկությունում այնպիսի հարվածային բրիգադներ կազմակերպելը, որոնք նպատակ ունենան յերևան հանել, ուսումնասիրել և ոգտագործել ձեռնարկության ներսում յեղած այս կամ այն ռեսուրսները, որ դեռ չեն ուսումնասիրված և արտադրական պլանի մեջ չեն մտցված:

Լաբորատոր մեթոդի մեր տված բնութագրությունը և նախնական կուսդպրոցի ժուրնալ-դասընթացի հարցերի մշակման մասին բերված օրինակները պատասխան են ծառայում այն բանի, որ լաբորատոր մեթոդը, վորպես սովորողների ակտիվ ինքնագործունեության մեթոդ, վորպես կուսուսուցումը ձեռնարկության և դյուղի կուսակամակերպության կոնկրետ խնդիրների հետ շաղկապելու միակ մեթոդ, վոչ միայն կարող է, այլև պետք է կիրառվի ստորին կուսլուսավորության ցանցում:

Պ. ՄԻՆԶԵՆՆՈ

ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍՏՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԴԱՍԸՆԹԱՑԸ

«Պրոպագանդիստ» ժուրնալի № 15-ում լուսաբանված եք բանվոր պրոպագանդիստների պատրաստման դասընթացների մեթոդիկայի դասավանդման փորձը: Այժմ համառոտակի ծանոթացնենք մեթոդիկայի դասավանդման փորձը պրոպագանդիստների վերապատրաստման Մոսկվայի մարզային դասընթացների միջանի խմբերում: Այս խմբերը միավորում էին այնպիսի պրոպագանդիստների, որոնք ունեին պրոպագանդիստական աշխատանքի այս կամ այն գործնական փորձը (մեկուկես տարուց մինչև յերեք-չորս տարի) և վորոշ մասնագիտական պատրաստություն (կուսխորհրդային դպրոց, պրոպագանդիստների

պատրաստության դասընթաց և այլն)։ Իսկույն և յեթ ակնհայտ դարձավ, վոր մեթոդիկայի հարցերի շուրջն այս խմբերում կատարվելիք աշխատանքը պետք է կառուցել բոլորովին այլ կերպ, քան պրոպագանդիստներ պատրաստելիս։ Պատրաստման գործում գլխավոր խնդիրն եր այն, վոր ապագա պրոպագանդիստը տիրապետի վորոշ շրջանակի գիտելիքների և ձեռք բերի պրոպագանդիստական աշխատանքի նախնական անհրաժեշտ ունակություններ։ Վերապատրաստման ժամանակ ամենևին անհրաժեշտ չե անցածը կրկնել։ Այստեղ ծանրության կենտրոնը փոխադրվում է պրոպագանդիստական աշխատանքի յեղած փորձի բնդհանրացման, պրոպագանդիստական աշխատանքում գոյություն ունեցող դիրքավորումների ստուգման, գործող դասագրքերի գնահատման, աշխատանքի ընթացքում ծագած դժվարությունների հայտնաբերման և նրանց հաղթահարման ուղիների նշման վրա։ Այս ամենը միասին վերցրած թույլ է տալիս վոչ միայն հիշողության մեջ վերականգնել անհրաժեշտ գիտելիքները, այլև ընդլայնել նրանց պաշարը։

Աշխատանքի հիմքում դրված եր Մոսկվայի կոմիտեի մեթոդական հանձնաժողովի նույն ծրագիրը[1])։ Վորոշվեց, վոր ունկընդիրները դասընթացների աշխատանքով պետք է ունենան այնքան գիտելիք, վորքան պահանջում է այս ծրագիրը։ Բայց քանի վոր շատերը մի ամբողջ շարք հարցերի արդեն ծանոթ եին, ուստի առաջադրությունների մեջ մտցվեցին ծրագրի միայն այն հարցերը, վորոնք ունկընդիրների համար բավականաչափ պարզ չեին։ Սրան զուգընթաց, առաջադրություններում կենտրոնական տեղ դրավեց կուսպրոպագանդի մեթոդիկայի և կազմակերպման առանձին հարցերի ինքնուրույն մշակումը կուրսանտների կողմից։

Աշխատանքը նկարագրենք ավելի մանրամասն։

Կուսլուսավորության կազմակերպմանն ու մեթոդիկային հատկացվեց ընդամենը 40 ժամ։ Մի ժամկետ, վոր, ինչպես պարզվեց, միանգամայն անբավարար եր և հարկադրում եր հանել մի շարք հարցեր։

Ծրագրի առաջին թեման—«Կուսպրոպագանդը կուսակցության մարտական զենքն է»—մշակվեց դասախոսության յեղանակով։ Դասախոսության վերջում բացատրվեց մեթոդիկայի վողջ դասընթացի մշակման պլանը։ Այս պլանը քննարկվեց ու հավանություն ստացավ կուրսանտների կողմից։ Առաջին թեմայի վրա ծախսվեց ընդամենը 4 ժամ։

Սրանից հետո մշակվեց յերկրորդ թեման—«Կուսլուսավորությունը վերակառուցման շրջանում»։ Այս թեմայի մշակման նպատակն եր վորոշել կուսլուսավորության նոր խնդիրները վերակառուցման շրջանում և ընդհանրացնել այդ խնդիրների լուծման ուղղությամբ յեղած փորձը։ Թեմայի մշակման արդյունքը պետք է լիներ պատասխանել այն

[1]) Ծանոթացված է «Պրոպագանդիստ»-ի № 17—18-ում։

հարցին, թե ինչ չափով է կուսլուսավորության ցանցն արդյոք վերակազմվել վերակառուցման շրջանի պահանջներին համապատասխան և դեռ ինչ պետք է արվի այդ ուղղությամբ։

Մշակման պլանն իր մեջ պարունակում եր հետևյալ հանդուցյալ հարցերը.—1) Կուսլուսավորության նոր խնդիրները վերակառուցման շրջանում. 2) Կուսլուսավորության մարտական խնդիրները կուսակցության նոր խնդիրների լույսի տակ—ա) Թեորիայի և պրակտիկայի փոխադարձ կապը, բ) կուսլուսավորության բոլոր ողակների շաղկապումն արտադրական խնդիրների և տեխնիկայի ուսումնասիրության հետ, գ) ոգմբրցումը։

Սկզբում ամբողջ խումբը ծանոթացավ մշակման պլանի առաջին բաժինը լուսաբանող գրականության ընդհանուր մինիմումի հետ։ Դրանից հետո կուրսանտներն անցան գործնական առաջադրությունների կատարմանը։ Բոլոր կուրսանտներն առանց բացառության ղ ելուցաղրեր կազմեցին գարնանացանի կամպանիայի ընթացքում ցանցի կատարած գործնական աշխատանքի արդյունքների մասին։ Այս զեկուցումները պետք է պատասխանեին վոչ միայն այն հարցին, թե ցանցն ինչ առաջադրություններ է ստացել և ինչ պարտավորություններ է վերցրել իր վրա, ինչպիսին եին գործնական աշխատանքի ձևերն ու արդյունքները, այլև այն, թե ինչ չափով է իրեն արդարացրել ՄԿ-ին կից կազմակերպված յեռորյակների ընթացքում[1]) տրված հրահանգավորումը և ինչպես է գնահատվում Մոսկվայի Կոմիտեյի մեթոդական նամակը գարնանացանի կամպանիայում ցանցի բիրելիմասնակցության մասին[2])։

Զեկուցաղրից հետո ունկընդիրները բրիգադների բաժանվելով (4—5 հոգի), յուրաքանչյուր բրիգադի համար ստացան մեկ թեմա, վորը պետք է մշակեին։ Այդպիսի բրիգադի արդյունքը պետք է լիներ մանրամասն թեզիսներ կամ առաջարկներ։

Այս առաջադրությամբ մշակման դրվեցին հետևյալ յերեք թեմաները.

1. Թեորիայի և պրակտիկայի փոխադարձ կապի մեթոդիկան (գործնական առաջադրությունների մշակման պրոցեսը և նրանց տեսական ընդհանրացումը. գործնական յեղրակացություններ ընդհանուր տեսական թեմաներից հասարակական-գործնական աշխատանքի ազդեցությունն ունկընդիրների հասարակական և տեսական մակարդակի բարձրացման վրա. Մոսկվայի Կոմիտեյի մեթոդական նամակի գնահատականը)։

[1]) Յեռորյակների մասին տես նույն հեղինակի հոդվածը «Պրոպագանդիստ»-ի № 16-ում, էջ 62։

[2]) «Պրոպագանդիստ» № 8։

2. Տեխնիկական կուսլուսավորության ցանցում արմատացնելու մասին (տեխնիկայի տարրերի նպատակադրումը կուսլուսավորության ցանցում տեխնիկական և քաղաքական գիտելիքների փոխհարաբերությունը. տեխնիկական գիտելիքների բովանդակությունն ու ծավալը. տեխնիկական և քաղաքական հարցերի շուրջը մեկ պրոպագանդիստի աշխատելու հնարավորությունը. գործնական փորձը. Մոսկվայի կոմիտեի թեզիսների[1]) և տեխնիկայի տարրեր պարունակող՝ նախնական դպրոցի նոր ծրագրի գնահատականը):

3. Սոցմրցումը կուսլուսավորության ցանցում (սոցմրցման ուղղությունը, ձևերն ու արդյունքները ուսումնական և արտադրական հարցերում, աշխատանքի բրիգադային մեթոդը, սոցմրցման ազդեցությունն ուսման վորակի և արտադրական ակտիվության բարձրացման վրա):

Թեմաներից յուրաքանչյուրի համար գրականություն մատնանշվեց: Քանի վոր խմբում վեց բրիգադ կար, ուստի յուրաքանչյուր թեմայի վրա ինքնուրույն աշխատում եյին յերկու բրիգադ: Պատրաստված թեզիսները դրվեցին խմբի կոնֆերանսում և այնտեղ խիստ աշխույժ քննության յենթարկվեցին: Արդյունքը լինում եր այն, վոր բոլոր հարցերի շուրջը միասնական կարծիք եր ստացվում:

Այս աշխատանքը խիստ ոգտակար հանդիսացավ: Չխոսելով այն մասին, վոր վոչ բոլոր ընկերները կարողանում են թեզիսներ գրել,— հարցն ինքնուրույն մտածողության առարկա դարձնելու, այն սեփական փորձի հետ զուգադրելու պրոցեսում՝ յերեվան եյին գալիս այնպիսի հարցեր ու սխալներ, վորոնք այլ պայմաններում հաճախ մնում են չհայտնաբերված:

Առաջադրության վրա կատարելիք աշխատանքը ստորաբաժանված եր: Քաղաքային պրոպագանդիստների խումբը նույն շրջանակի հարցերի շուրջ եր աշխատում, բայց քաղաքային նյութերի վրա: Այս ամբողջ առաջադրության մշակումը խլեց 14 ժամ, վորից 1 ժամ՝ ներածական խոսքին, 8 ժամ՝ ինքնուրույն աշխատանքին և 5 ժամ՝ կոնֆերանսին:

Այս նույն մեթոդով մշակեցին նաև ծրագրի բոլոր մնացած կետերը:

Հաջորդ՝ յերրորդ թեման—«Կուսլուսավորության կազմակերպումը»—գյուղական խմբերում կառուցվեց կուսլուսավորության կառուցման հարցի շուրջը կուսաշխատանքը հենակետերի սիստեմով վերակառուցելու կապակցությամբ: Բրիգադային ինքնուրույն աշխատանքի համար այստեղ դրվեց յերկու թեմա.—

1. Կուսլուսավորության կազմակերպչական վերակառուցումը գյուղի կուսաշխատանքի վերակառուցման կապակցությամբ (ՄՏԿ-ները, խորհանտեսությունները, կոլտնտեսությունները վորպես կուսաշխատանքի հենակետերը գյուղում. կուսուսուցման կուսակցական ղեկավարությունը շրջանում, փնջում, կոլտնտեսությունում և այլն. կուսլուսավորության սիստեմը հենակետերի շուրջը. ցանցի գոյություն ունեցող կազմակերպչական դրությունը. կուսուսուցման հարմարեցումը աշխատանքի նոր պայմաններին—անընդհատ ուսումնական տարին և կուսուսուցումն ամառնային շրջանում):

2. Կուսլուսավորությունը վորպես կուսակցության մեջ ներգրավելու ուղի և թեկնածուներին կուսակցության մեջ ամրացնելու միջոց (ցանցի միջոցով կուսակցության մեջ ներգրավելու ձևերն ու մեթոդները. սպեցիֆիկ աշխատանքն անկուսակցական բանվորների մեջ. կուսթեկնածուներին ընդգրկելու և նրանց մեջ աշխատանք կատարելու մեթոդները վորպես ինքնուրույն խնդիր. կուսլուսավորությունը կանանց մեջ. նրա ձևերն ու մեթոդները. աշխատանքի արդյունքները):

Չորրորդ թեման—«Կուսլուսավորության մեթոդները»—բացառիկ հետաքրքրություն առաջացրեց: Նույն մեթոդն ոգտագործելով, կուրսանտները բրիգադներով պետք է մշակեին հետևյալ հարցերը.—

1. Մեթոդական պրիոմների բացատրումը (մեթոդների յենթակա դերը բովանդակության նկատմամբ. լաբորատոր մեթոդ. չպատրաստված լսարանում պրոպագանդ վարելու մեթոդները. մեթոդի բարդացման ուղիները—ինքնուրույն աշխատանքի ունակությունների մակարդակի բարձրացումը. ունկընդիրների ինքնուրույն աշխատանքի սովորելը):

Ժամանակի պակասը և հարմար գրականության բացակայությունը ստիպեցին հրաժարվել այս յենթաթեմայի բրիգադային մշակումից: Մշակումը կատարվեց գրույցի յեղանակով անմիջապես խմբում:

2. «Ի՞նչպես եմ անցկացնում գրույցը»: Այստեղ բրիգադներին առաջադրություն տրվեց կազմել լենինյան հավաքի գրույցի վերաբերյալ 3-րդ թեմայի շուրջը կազմակերպելիք գրույցի ամենամանրամասն պլան-կոնսպեկտ: Կոնսպեկտում մանրամասն պետք է նկարագրվի՝ նեբրածական մասի բովանդակությունը, հանդուցային հարցերի ձևակերպումը, տեղական նյութերի ոգտագործման ձևերը. գրույցի անցկացման ժամանակ ծագած դժվարությունները:

Այս մասն ամենարարձր աշխուժություն առաջացրեց: Պարզվեց, վոր պրոպագանդիստների մեծ մասի համար գրույցի պլան կազմելը խիստ դժվար մի գործ է հանդիսանում: Պլանների վերլուծությունը և նրանց քննարկումը թույլ տվին հանգել ամենից ավելի նպատակահարմար ձևին:

3. Թերթի ոգտագործումը քաղուսուցման մեջ (թերթի դերը քաղ-

[1]) «Պրոպագանդիստ» № 13:

ուսուցման մեջ. թերթից ոգտվել սովորելը. պատի թերթը կուսուցման համար մղվող պայքարում):

Վերջին—«Պրոպագանդիստը և աշխատանքը նրա հետ»—թեմայում նշվեց բրիգադներով մշակելու հետևյալ հարցերը.—

1. Պրոպագանդիստներին դեկավարելու ձևերը (պրոպագանդիստների աշխատանքի ձևերն ու մեթոդները. մեթոդական դեկավարության կազմակերպումը շրջանում և հենակետում):

2. Ի՞նչպես պետք է լինեն մեթոդական մշակումները, պրոպագանդիստական ժուրնալները («Пропогандист», «Деревенский пропогандист» և այլն) դասագրքերը (այստեղ յենթադրվում եր դրախոսել գրքերը ունեցող ձեռնարկները և առաջարկներ նշել նրանց վերակազմության մասին):

3. Ինչպես պետք է կառուցվի պրոպագանդիստների պատրաստման ու վերապատրաստման դասընթացների ուսումնական պլանը:

Ժամանակի պակասն ստիպեց սեղմել վերջին թեման և մշակել պրոյեկտի ձևով, վորը վոչ մի կերպ բավարար համարվել չի կարող:

Այս բոլորից բացի մի դրույթ անցակցվեց հեռակա ուսուցման մասին:

Դասընթացի անցկացման պլանը լրիվ իրացնել չհաջողվեց: Բայց և արվածն էլ համոզեց, վոր ճանապարհը ճիշտ եր չոչափված: Մի քանի ընկերներ պատկերացնում էին, վոր մեր նկարագրած մեթոդը կիրառելով մենք ավելի շատ կվերցնենք կուրսանտներից, քան տվել ենք նրանց: Այս բացարձակապես սխալ է: Աշխատելով այս կամ այն թեզիսի վրա, կուրսանտը ծանոթանում եր ամբողջ անհրաժեշտ դրականության հետ: Ինքնուրույն աշխատանքի պրոցեսում նա յերևան եր հանում այն հարցերը, վորոնք ամենից ավելի գործնական նշանակություն ունեն: Բոլոր ծագող հարցերը լուծվում էին կամ կոլեկտիվի, կամ ղեկավարի կողմից: Դասընթացներում կիրառվող աշխատանքի մեթոդը կրկնեց ու վերանորոգեց, նշտեց ու լայնացրեց կուրսանտների գիտելիքները, լուծում տվեց նրանց հարցերին և միաժամանակ Մոսկվայի կոմիտեյի կուլտպրոպ բաժնին հարուստ նյութ տվեց ընդհանրացման համար:

ԶԱԽ. ԲՈՒՐԱՍ

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՒՍԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍԻՍՏԵՄՈՒՄ

(ԻՆՔՆՈՒՐՈՒՅՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՓՈՐՁԸ ԶՎԵՆԻԳՈՐՈԴԻ ՑԵՎ ԲԱԿՈՎՍԿԻ ԿՈՒՍԱԿՑԻՎԻ 6-ԱՄՍՅԱ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ)

«Մարքս-լենինյան դաստիարակության աշխատանքը պետք է ընթանա կայուն բայլշևիկներ կոփելու նշանաբանով, բայլշևիկներ, վորոնք կողմնորոշվեն սոցիալիստական շինարարության ներկա պայմաններում, յուրացնեն մեր կուսակցության հարուստ պատմական անցյալը, յուրացնեն կուսակցության յերկու ֆրոնտով պայքարի փորձը, պարզեն մեր սոցիալիստական շինարարության կապը համաշխարհային պրոլետարիատի պայքարի հետ, ընդունակ լինեն նոր պայմաններում գլխավորել և իրենց յետևից տանել մասսաներին պայքարելու մեր տեխնիկական-տնտեսական հետամնացության ամենաարագ վերացման համար, մեր համաշխարհային-պատմական խնդիրների կատարման համար, սոցիալիզմի լիակատար հաղթանակի համար»[1]):

Այս խնդիրներով է վորոշվում կուսակտիվի մեջ կատարելիք կուսդաստիարակչական աշխատանքի հիմնական բովանդակությունը: Այս դիրքավորումները պետք է թափանցեն ուսումնական պլանի բոլոր մասերի մեջ: Ինքնուրույն աշխատանքի ունակությունների (ուսումնական պրոցեսում կողմնորոշվելը, կազմակերպչական ունակություններ, նյութերի վրա աշխատանք կատարելու տեխնիկան և այլն) դաստիարակումն ու զարգացումը նմանապես պետք է յելնի մարքս-լենինյան դաստիարակության այս կուսակցական դիրքավորումներից: Աջակցել վերլուծվող նյութի բայլշևիկյան դիրքավորումների յուրացմանը, ոպորտունիզմի և հաշտվողականության դեմ կուսակցության կողմից մղվող պայքարի փորձի յուրացմանը, սոցիալիստական շինարարության ներկա շրջանում կուսակցության վարած գլխավոր գծին և դասակարգային աչալրջության ուժեղացմանը—այդպես պետք է լինի ինքնուրույն աշխատանքի ունակությունների դասընթացի նպատակադրումը:

Միաժամանակ դասընթացների խնդիրն է՝ ունկընդիրներին տալ մարքս-լենինյան թեորիան հեղափոխական շարժման ու սոցիալիստական շինարարության պրակտիկայի հետ շաղկապելու ունակություններ, վորպեսզի յուրաքանչյուր կոմունիստի, զինեն «սոցիալիզմի համար մղվող պայքարի ներկա շրջանի առանձնահատկություններն ու խնդիրներն» ըմբռնելու կարողությամբ: Ցեվ, վերջապես, դասընթացները պետք է ունկընդրի մոտ զարգացնեն ու խորացնեն կուսմասսայական աշխատանքի կազմակերպ-

1) Կուլտպրոպների խորհրդակցությունում ընկ. Պոստիշևի արտասանած ճառից (տես «Պրավդա», 1931 թ. սեպտ. 1-ն համարը):

չական ունակությունները, որպեսզի կուրեն «նոր պայմաններում ... տեխնիկական-տնտեսական հետամնացության ամենաարագ վերացման համար մղվող պայքարում մասսաներին ղեկավարելու կարողություն»:

Այս դիրքավորումներով ղեկավարվելով է միայն, որ ինքնուրույն աշխատանքի ունակությունների դասընթացը կուսակցականություն կստանա և չի վերածվի սխոլաստիկայի, մեռած սխեմաների ու վերացական ռեցեպտուրայի, որոնք խցկում են բայլևիկյան բովանդակությունը:

Այս հոդվածով մենք նպատակ ունենք լուսաբանել ինքնուրույն աշխատանքի ունակությունների դասընթացի կառուցման փորձը կուսակցական տիպի յերկու վեցամյա դասընթացներում—Զվենիգորոդում և Բակովսկում—վերոհիշյալ դիրքավորումների տեսանկյան տակ և քննության դնել այս փորձից բղխող մի շարք հարցեր:

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՑԵՎ, ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊՐՈՑԵՍՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՄԱՄԲ

Ինքնուրույն աշխատանքի ունակությունների դասընթացը կազմակերպելիս նախ և առաջ ունկընդիրներին բացատրվեց մարքս-լենինյան դաստիարակության մեթոդը, թեորիայի դերը հեղափոխական շարժման մեջ, թեորիայի և հեղափոխական պրակտիկայի փոխադարձ կախումը: Ունկընդիրներին լաբորատոր մեթոդի հիմունքների հետ ծանոթացնելիս ուշադրությունը կենտրոնացվեց վոչ թե նեղ մեթոդական հարցերի վրա, այլ գլխավորապես այն առավելությունների վրա, որ ունի լաբորատոր մեթոդը մյուս մեթոդների համեմատությամբ նյութի լավ յուրացման, թեորիայի ու պրակտիկայի ավելի խորը շաղկապման և նյութի վրա կատարելիք աշխատանքի ավելի մեծ արդյունավետության իմաստով:

Լաբորատոր մեթոդի տարրերի—ներածական խոսքի, կոնֆերանսի, կոնսուլտացիայի դերի վորոշումը, առաջադրության վերլուծությունը ինքնուրույն աշխատանքի կազմակերպման մանրամասն բացատրությունը՝ հատկապես շեշտը դնելով ուսումնական բրիգադների դերի վրա,—այս ամենն անշուշտ, իրեն արդարացրեց: Այս տվյալների հաղորդումն սկզբից իսկ ապահովեց ունկընդիրների խոհուն մասնակցությունն ուսուցման պրոցեսին, նրանց քննադատական վերաբերմունքը լաբորատոր մեթոդի կիրառման հանդեպ, կոնկրետ մասնակցությունը կուսուսուցման վորակի բարձրացման գործում:

Սակայն դասընթացների աշխատանքի սկզբում դրծը չսահմանափակվեց միայն ներածական դրույց անցկացնելով մարքս-լենինյան դաստիարակության խնդիրների և լաբորատոր մեթոդի մասին: 1½–2 տասնորյակ անց, մեթոդիստները յուրաքանչյուր խմբում պարզեցին ուսուցման առաջին քայլերի թերությունները ու դժվարությունները և ունկընդիրների հետ միասին մի շարք գործնական առաջարկներ մշակեցին ուսուցման պրոցեսի բարելավման վերաբերյալ, վորոնք հետո դաղորդվեցին դասընթացների ուսումնական մասին: Այս աշխատանքը հնարավորություն տվեց նշելու ունկընդիրների ակտիվության բարձրացման ուղիները և ոգնեց վերացնելու դասընթացների աշխատանքի դրվածքի մի շարք թերությունները, ինչպիսին եր, որինակ, հարցերի դրման քաղաքական սրվածության բացակայությունը, չչերտավորված մոտեցումն ունկընդիրների նկատմամբ, առաջադրության կառուցվածքի թերությունները և այլն:

Առանձին ուշադրություն նվիրվեց ուսումնական բրիգադների աշխատանքին: Բրիգադների շախատանքի մասին հրահանգ մշակվեց և բաժանվեց ունկընդիրներին: Մի քանի անդամ քննության առնվեց բրիգադների աշխատանքի փորձը, բրիգադներ, վորոնց մեծ մասը հետազոտության յենթարկվեց ինքնուրույն աշխատանքի պրոցեսում: Մեթոդիստդասատուներն ակտիվ մասնակցություն ունեցան բրիգադների միջև սոցմրցում կազմակերպելու և հաշվառումը դնելու գործում:

Ուսուցման պրոցեսի լավագույն կազմակերպման և ուսուցման վորակի բարձրացման տեսակետից այս ամբողջ աշխատանքը մեծ ոգուտ տվեց: Սակայն պետք է նշել մյուս դիսցիպլինների դասատուների մեծ մասի արհամարհական վերաբերմունքն այնպիսի հարցերի հանդեպ, ինչպիսին է կոնսուլտացիայի կազմակերպումն ու պահպանումը, յետ մնացողների հետ կատարելիք աշխատանքը, առաջադրության կառուցվածքը, թերթի նյութերի ոգտագործումը և այլն: Նրանք թերագնահատում եյին մեթոդիստների մի ամբողջ շարք արժեքավոր առաջարկները: Այս հանգամանքը դժվարացրեց մեթոդիստների աշխատանքում ուսուցման պրոցեսի վորակի լավացման ասպարիզում, չնայած այն սերտ կոնտակտին ու աշխրջության, վոր ցույց եր տալիս դասընթացների ուսումնական մասը: Մինչդեռ տեսական դիսցիպլինների մի շարք դասատուների աշխատանքը շատ բանում ուներ հենց այն թերությունները, վորոնց դեմ համառ պայքար է մղվում (դոգմատիզմ, այժմեյական խնդիրների հետ շաղկապելու բացակայություն, ունկընդիրների գիտելիքների մակարդակի և փորձի հաշվառման բացակայություն) և վոր կարելի յե հաջողությամբ հաղթահարել միայն այն դեպքում, յերբ ճիշտ կգնահատվեն մեթոդական մոմենտների դերն ու տեսակարար կշիռը մարքս-լենինյան ուսուցման ընդհանուր սիստեմում:

ՆՅՈՒԹԻ ՎՐԱ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՑ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ինքնուրույն աշխատանքի հասկանալի յե, վոր դասընթացի կենտրոնական մասը հանդիսացավ մտավոր աշխատանքի տեխնիկայի (աշխատանք դրքի, թերթի վրա և այլն) ունակությունների զարգացման ու ամրաց-

ման աշխատանքը։ Այն կուրսը, որ մենք վերցրել էինք տեսական հարցերի մարքս-լենինյան դիրքավորումները պարզաբանելու, դասակարգային աշակերտություն դաստիարակելու, տեսական պրոբլեմները կուսակցական-հասարակական աշխատանքի պրակտիկայում անդրադարձնելու ուղղությամբ, վորոշում էր այդ ասպարիզում կատարելիք աշխատանքի բովանդակությունն ու մեթոդները։

Դասընթացների աշխատանքում մենք ձգտում էինք այն բանին, որ բովանդակությունը ակրաստեղող լինի ձևի հանդեպ, նյութի եությունը՝ սխեմայի հանդեպ, ամբողջական պրոբլեմը՝ լուսաբանման և որինակի հանդեպ։ Այստեղից, բնականաբար, բղխում էր նաև այդ դիրքավորումներին համապատասխան մեթոդը։ Գրքի վրա աշխատելու ունակությունները զարգացվում էին դասընթացների ուսումնական պլանի տեսական դիսցիպլինների նյութի հիման վրա։ Մտավոր աշխատանքի ունակություններն ունկընդիրներին հաղորդվում էին գրքի ու թերթի վրա աշխատելու այն նախորդ փորձից, որ նրանք կուտակել էին կուսակցական-հասարակական աշխատանքի պրոցեսում։ Վերջապես, հարկավոր է հիշել, որ տվյալ դասընթացի պարապմունքների պրոցեսում կիրառվում էին զանազան տեսակի մեթոդական պրիոմներ-զրույցի ու զեկուցման լաբորատոր պլանի տարրեր, որպեսզի ունկընդիրները վոչ միայն տեսական հրահանգներ ստանային, այլև ակնառու կերպով, փորձի հիման վրա յուրացնեին նյութի վրա աշխատելու զանազան ձևեր։

Բնագրերի, հատկապես Լենինի յերկերի վրա աշխատելու ունակություններ ձեռք բերելու համար հատուկ պարապմունքներ տրվեցին։ Այդ պարապմունքների հետևանքով ունկընդիրները պետք է ձեռք բերեին խորացրած մշակման ունակությունները, սովորեին նյութի բովանդակության հետ միասին ըմբռնել մարքս-լենինյա մեթոդը և այդ հիման վրա ամրացնել իրենց պրակտիկան, ստանալով «կողմնորոշման ուժ և շրջապատի իրադարձությունների ներքին կապակցության ըմբռնողություն» (Ստալին)։

Այս նպատակով հատուկ զրույց անցկացվեց, վորտեղ Լենինի, Մարքսի և Ստալինի յերկերի վրա աշխատելու ընդհանուր դիրքավորումներ տրվեցին։ Այսպես, «Ճգնաժամների մասին» թեմայի մշակման կապակցությամբ ունկընդիրների հետ միասին մշակման յենթարկվեց Լենինի «К характеристике экономического романтизма» (II հատոր) աշխատությունից մի գլուխ, գլխավորապես իբրև որինակ, թե ինչպիսի մոտեցում պետք է ունենալ Լենինի պոլեմիկական բնույթի յերկերի նկատմամբ։ Դրանից բացի, մշակման յենթարկվեցին Լենինի «Կոոպերացիայի մասին» հոդվածը և Ստալինի «Նոր պայմաններ—տնտեսական շինարարության նոր խնդիրներ» ճառը։ Սկզբնական աղբյուրների մշակումով հաջողվեց նկատելի չափով բարձրացնել նյութերի դրանման վարպետությունը, հիմնականը ջոկելու ունակություն ձեռք բերել, ազատվել Լենինի և Ստալինի յերկերի ցիտատներից։

Ավելի պարզ պատկերացում տալու համար այն մոտեցման մասին, վոր պետք է ունենալ Լենինի յերկերի նկատմամբ, «Կոոպերացիայի մասին» հոդվածն ունկընդիրների կողմից մշակման յենթարկվելուց հետո, մեկ անգամ ել կոլեկտիվ կերպով մշակվեց դասատուի մասնակցությամբ։ Նյութի մշակման այսպիսի մեթոդն ունկընդիրներին ամենամեծ չափով յուրացնել տվեց նյութը։

Աշխատանքն սկզբնական աղբյուրի վրա զգալի չափով հեշտանում է և մշակման համար ավելի քիչ ժամանակ է պահանջում, յեթե ունկընդիրներին չծանրաբեռնեն ավելորդ նյութով ու ցիտատներով, այլ մատնանշեն հարկավոր եջերն ու հատորը, հանձնարարեն պարբերությունները և այլն։

Այնինչ տեսական ուսուցումը կազմակերպելիս այս հանգամանքը շատ հաճախ հաշվի չեն առնում։

Դասընթացի կենտրոնական պրոբլեմը հանդիսացավ թեորիան պրակտիկայի հետ շաղկապելու ունակության հարցը։ Ուսուցման առաջին իսկ քայլերից պարզ դարձավ, վոր ունկընդիրների ինքնուրույն աշխատանքի ամենաթույլ ողակն է հանդիսանում տեսական հարցերը սոցիալիստական շինարարության հարցերի հետ շաղկապելու անկարողությունը։

Ուստի դասընթացում մի քանի պարապմունք տրվեց հատկապես թեորիայի ու պրակտիկայի շաղկապման թեմային։ Այս պարապմունքներից հարկավոր է նշել «Պրավդա»-յի առաջնորդողի մշակումը։ Առաջնորդողն ստացվեց այս թեմայի մշակման որը։ Պարապմունքի ընթացքում ցույց տրվեց այդ առաջնորդողի կապը կուսակցության XVI համագումարի և ԿԿ-ի հունիսյան պլենումի վորոշումների հետ։ Լենինի «Կոոպերացիայի մասին» հոդվածը մշակվեց սերտ կապակցելով կուսակցության վերջին վորոշումների հետ։ Էնկ. Ստալինի «Պրոլետարական հեղափոխության տեսությունը» գրքի գլուխների մշակումն անցկացավ տվյալ գլխի հիմնական դրությունները թերթերում տպագրված վերջին իրադարձությունների կապակցությամբ վերլուծելու տեսանկյան տակ։

Բայց առանձին հետաքրքրություն և ներկայացնում հետևյալ բնույթի առաջադրությունը. ունկընդիրներին առաջարկվեց՝ յենթարկելով իմպերիալիզմի տեսության վերաբերյալ նյութերից, վոր նրանք մշակել էին Լենինի յերկերի հիման վրա, պատասխանել մի շարք հարցերի— «Գերմանիան ներկայումս կապիտալիստական յերկիր է, թե՞ վոչ», «գերմանական կոմկուսակցությունը Համ Կ(բ)Կ-ի ի՞նչպիսի տակտիկական լոզունգներ կարող է ոգտագործել՝ յենթարկելով մեր Հոկտեմբերյան

հեղափոխության պատրաստման փորձից («Գունակցությունը փետրվարի ութից դեպի հոկտեմբեր ճանապարհին» թեմայի նյութերի հիման վրա)», «Ներկայումս Գերմանիայում կամ արդյոք անմիջական հեղափոխական սիտուացիա» (Ստալինի «Գրոլետարական հեղափոխության տեսություն» նյութերի հիման վրա):

Բրիգադների աշխատությունը տվյալ առաջադրության մշակման պրոցեսում, հարցի քննարկման բնույթի շուրջը կատարված գիտողությունները և յուրացման ղրույցները հաստատեցին ունակությունների ծայր աստիճան անբավարար լինելը, յերբեմն էլ տեսական դրությունները պրակտիկայում գործադրելու անզորությունը:

Դիրքավորման բացատրությունը և պարապմունքների բնույթը կարող են այն պատկերացումն ստեղծել, թե գրավորի տեխնիկական պրիոմները տեղ չեն գտել դասընթացում, թե մտավոր աշխատանքի տեխնիկայի ունակությունները «հալածված են» յեղել: Իրականում այդ այդպես չէ: Մտավոր աշխատանքի առողջապահության հարցերին, գրավորի տեխնիկային, նրա ոգտագործմանը մեծ ուշադրություն դարձվեց: Բայց, կրկնում ենք, ձևը չեր դիտվում իբրև բովանդակությունից անջատ: Դրա համար էլ անխուսափելիորեն կուրս վերցվեց պարզաբանել գրավորի պրիոմները, կրճատել գրավորի ռեցեպտուրան, առավելագույն հիշողություն և շերտավորված մոտեցում ունենալ ունկընդիրների նկատմամբ: Տարբեր կրթական մակարդակը, գրքի ու թերթի վրա աշխատելու տարբեր ունակությունները, վոր իրենց հետ բերել եյին ունկնդիրները, նրանց կուսակցական-մասսայական աշխատանքի փորձը,—այս ամենը հաշվի առնվեց ինքնուրույն աշխատանքի ունակություններ դասավանդելիս:

Նյութի վրա աշխատելու տեխնիկայի հարցերում այս հոդվածում քննված դիրքավորումը կարելի յե կարճ ձևակերպել հետևյալ կերպ:

Առաջին: Ունակությունների զարգացման ու ամրացման աշխատանքն անցավ յերեք աստիճան—դիրքավորող ղրույցներ խմբերում դասընթացների աշխատանքի ամենասկզբնական շրջանում, բրիգադային կոնսուլտացիա՝ նախորոք տեսակները քննելու հետ միասին (2-3 տասնորյակից), բրիգադային կոնսուլտացիայում տրված ցուցմունքների կատարման ստուգումը՝ բոլոր ունկընդիրների մոտ անցնելով:

Ցերկրորդ: Գրքի վրա աշխատելու ունակությունները հաղորդվեցին բացառապես դասընթացների ուսումնական պլանի տեսական դիսցիպլինների նյութերով, վորպիսին իրեն լիովին արդարացրեց:

Ցերրորդ: Դասատուների մեծ մասը ներգրավվեց ունկընդիրների ինքնուրույն աշխատանքի ղեկավարման գործում (տեսակների քննություն, բրիգադային կոնսուլտացիա, գրականության բնույթի մասին ցուցմունքներ ներածական խոսքում և այլն): Նկատենք, վոր մի քանի դասատուներ այս գործում բավարար ակտիվություն չհայտարերեցին:

Ներածական ղրույցում դասատուն լուսաբանում եր գրքի վրա աշխատելու տեխնիկայի այն հարցերը, վորոնք ունկընդիրների համար առանձնապես դժվար եյին ուսման առաջին որերին: Գլխավոր ուշադրությունը դարձվում եր աշխատանքային գրանցման և քարտային սիստեմի տարրերի հետ ծանոթացնելուն: Այդ պարապմունքն ամրացվում եր ընթացիկ թեմայի նյութը կոլեկտիվ կերպով մշակման յենթարկելու միջոցով:

Բրիգադային կոնսուլտացիայից առաջ նայվում եյին գրավորները: Դրա նպատակն եր պարզել, թե ունկընդիրներն ինչ չափով յուրացրել են ինքնուրույն աշխատանքի ունակությունները: Դրանից բացի, բրիգադային կոնսուլտացիան իր աշխատանքի պրոցեսում պարզում եր, թե ունկընդիրներն ինչքան խորն են մշակել նյութը, ինչքան հմտորեն են ոգտագործել ցիտատները, լուսաբանող նյութերը և այլն: Վերջապես, 1—1½ տասնորյակ անց, մեթոդիստը, ունկընդրին ստուգելով առաջադրության վրա ինքնուրույն աշխատելու պրոցեսում, պարզում եր իր տված ցուցմունքների ոգտագործման կարգը և յուրաքանչյուր ունկնդրի հետ առանձին ղրուցում եր այն միջոցների մասին, վորով կարելի յե բարձրացնել նյութի վրա կատարելիք աշխատանքի վորակը:

Այսպիսով, առաջին յերկու ամիսների ընթացքում ունկընդիրը գտնվում եր մեթոդիստի հսկողության տակ, նրա ուշադրությունը ժամանակ առ ժամանակ կենտրոնանում եր ինքնուրույն աշխատանքի տեխնիկայի ու կազմակերպման հարցերի վրա, նա իր աշխատանքի առաջին իսկ քայլերից վոչ միայն դիրքավորում (ինչպես լինում է սովորաբար), այլև վորակյալ կոնսուլտացիա յեր ստանում:

Դասատուների սիստեմատիկ մասնակցությունը գրքի վրա աշխատելու ունակությունների զարգացմանն ու ամրացմանը, գրականության քիչ «բռնավորելը» ավելի խորը մշակման նպատակով, առաջադրության համապատասխան կառուցվածքը՝ գրականության շերտավորումն ունկընդիրների զարգացման մակարդակին համապատասխան—ահա այն անհրաժեշտ նախադրյալները, առանց վորի անիմաստ և գրքի վրա աշխատելու տեխնիկական պրիոմների զարգացումը, անիմաստ է նյութի մշակման խորացումը:

ԿՈՒՍՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՑԵՎ ԻՆԴԻՎԻԴՈՒԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ինքնուրույն աշխատանքի ունակությունների դասընթացում նշանակալից տեղ հատկացվեց կուսմասսայական աշխատանքի ունակություններին: Նրանց մեջ շատ ժամանակ տրվեց զեկուցմանն ու ղրույ-

ցին (ինչպես պատրաստվել և անցկացնել զեկուցումն ու զրույցը)։ Այս դեպքում ևս մեթոդական ցուցմունքները նպատակ ունեին ամենից առաջ ոգնել ունկընդիրներին՝ զեկուցման մեջ ճշտորոշելու քաղաքական դիրքավորումներն ու կուսակցության դիրեկտիվները, հաշվի առնել կարողանալու մասսաների պահանջներն ու տրամադրությունները։ Այս հարցի գործնական մշակման համար միջխմբային կոնֆերանսում զեկուցումներ եղին տրվում, թեմա ունենալով «Պատերազմ լինելո՞ւ թե արդյոք», «Կոմբերիտականների ու կոմունիստների խնդիրները գյուղում ընկ. Ստալինի ճառի կապակցությամբ», «Նոր պայմաններ—տընդում ընկ. Ստալինի ճառի կապակցությամբ», «Նոր տեսական շինարարության նոր խնդիրներ»։ զեկուցումներից հետո թեմաները քննարկվում եղին թե ըստ բովանդակության և թե ըստ ձևի (Զվենիգորոդի դասընթացներ)։ Ամբական կոնսուլտացիա անցկացվեց այն ընկերների համար, վորոնք նշանակված եղին խորհտնտեսությունում ու շրջակա կոլտնտեսություններում ոգոստոսի 1-ի նշանակության մասին զեկուցելու (Բակովսկի դասընթացներ)։ Զեկուցումներին ներկա եղին դասընթացների ունկընդիրները, ըստ վորում զեկուցումներից հետո մի հատուկ պարապմունք անցկացվեց, վորտեղ քննության առնվեցին զեկուցումների արդյունքները, քննադատվեցին զեկուցողների առանձին սխալները և այլն։

Իրեն ամբողջապես արդարացրեց թերթի վրա աշխատելու հարցի մշակումը։

Այս հարցում առանձնապես արտահայտվեց այն հանգամանքը, վոր անհրաժեշտ է ուղղել ունկընդիրների յեղած վորձը, անհրաժեշտ ցուցմունքներ տալ այն մասին, թե ինչպես թերթ կարդալ և ինչպես այն ոգտագործել կուսակցական-հասարակական աշխատանքում։ Ինչ-վոր թերթը կուսակտիվի ձեռքում, հատկապես գյուղում, հաճախ հանդիսանում և դրեթե միակ ձեռնարկը, վորը զինում է նրան կուսակցության դիտավոր գծի համար մղվող պայքարում։

Թերթի ոգտագործման հարցի կոնկրետ վերլուծությունն ամբացվեց թերթի նյութերի շուրջը կազմակերպված քաղմարտով, վորին մասնակցում եղին դասընթացների ունկընդիրները։ Քաղմարտի նախապատրաստությունը և ինքը քաղմարտը մեկ անգամ ևս ամրացրին թերթի վրա աշխատելու ունակությունները։

Կուսուսուցման և կուսակտիվի հեռակա ուսուցման կազմակերպման հարցերի մի հատուկ մեծ զրույց նվիրվեց։ Կուլտպրոպների խորհրդակցությունում «Մարքս-Լենինյան դաստիարակության խնդիրների մասին» ընկ. Պոստիշևի արտասանած ճառը հարկ յեղած պարզությամբ մատնանշում է, վոր անհրաժեշտ է կուսակտիվին զինել ճիշտ, հստակ կուսակցական դիրքավորումներով մարքս-լենինյան դաստիարակության և կուսուսուցման հարցերում։ Ծրագրերի կազմության

հիմնական դիրքավորումների ուսումնասիրությունը, տեխնիկայի տիրապետման համար պայքարելուն ուշադրություն դարձնելը, լսարանն ուսումնասիրելու հարցերը, հեռակա ուսուցման սկզբունքները, հիմնական ձեռնարկների, տեղեկագրերի և բառարանների տեսությունը,—այս բոլոր հարցերն աշխույժ արձագանք գտան ունկընդիրների կողմից։ Տրված թեման լրացվեց հատուկ հրահանգներ տալով այն ունկընդիրներին, վորոնք նշանակված եղին պրոպագանդիստական աշխատանք կատարելու շրջակա գյուղերից կուսակցության մեջ նոր մտածների հետ։

Ունակությունների դասընթացի յեղրակացման թեմաները—աշխատանքի պլան կազմելը, հոդվածներ և հաշվետվություններ կազմելը, հետազոտություններ անցկացնելը և այլն—մշակվեցին կուսշինարարության դասընթացի կապակցությամբ։

Չնայած այս հոդվածը մենք գրել ենք նախքան ունակությունների դասընթացի աշխատանքների վերջանալը, այնուամենայնիվ կարելի է մի քանի յեղրակացություններ անել։

1. Ինքնուրույն աշխատանքի ունակությունների դասընթացը, վորը 6-ամսյա դասընթացների ծրագրում նախատեսված եր 100 ժամվա համար («Ինչո՞ւ այդքան մեթոդիկա»,—լսվում եր հաճախ), իրեն արդարացրեց։ Այս ասպարիզում աշխատանքը ճիշտ կազմակերպելիս, այս դասընթացը պետք է դուրս գա 4-6 ժամվա ներածական զրույցների շրջանակից և համապատասխան տեղ գրավի դասընթացների ընդհանուր ծրագրում։ Փորձը ցույց է տալիս, վոր անհրաժեշտ է գրավորի տեխնիկան մշակելիս առանձին թեմաները չաղկապել մյուս դիսցիպլինների համապատասխան թեմաների հետ, և վոչ թե ունակությունների հետ կապված բոլոր հարցերը կենտրոնացնել ուսուցման սկզբում կամ վերջում։

2. Աշխատանքի փորձը ցույց է տալիս, վոր տվյալ դասընթացն որգանապես չաղկապված է ուսուցման ամբողջ պրոցեսին, սերտորեն հյուսված է նրա հետ։ Այստեղից հետևում է, վոր ելի ու ելի անհրաժեշտ է պահանջել, վոր բոլոր դասատուները մասնակցեն ինքնուրույն աշխատանքի ունակություններ տալու աշխատանքին, վոր մեթոդիստները և տեսական առարկաների դասատուները փոխադարձաբար ոգնեն իրար։

Մարքս-լենինյան ուսուցման տվյալ շրջանում առանձին սրությամբ է դրվում մեթոդիկայի հարցերում, մասնավորապես գրքի վրա աշխատելու տեխնիկայի հարցերում կուսակցության դիրքավորումներից խոտորելու դեմ պայքարելու հարցը։

Հարկավոր է վերանայել բոլոր ձեռնարկներն ու ծրագրերն այս ասպարիզում, սիստեմատիկ աշխատանք սկսել դրական փորձն (ընդ-

հանրացնելու ուղղությամբ և, վերջապես, զնահատական տալ Ռեբելլոու և նմանների սխոլաստիկական ռեցեպտուրային:

Ցեվ վերջապես անհրաժեշտ է այս բնագավառն ամրացնել կուսակցական կադրերով (նա դարձել է անկուսակցական մասնագետների մենաշնորհը, վորոնց մեջ չերտավորում պետք է անցկացնել) և բրիգադներ կազմակերպել, վորպեսզի նրանք ինքնուրույն աշխատանքի ունակությունների հարցերին նվիրված ձեռնարկներ պատրաստեն կուսակտիվի համար, վորը մեծ կարիք ունի այդպիսի ձեռնարկների:

Վ. ԱԼԵԿՍԱՆԴՐՈՎ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԿՈՒՍ. ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Գ. ԲԱՐԱՆԴՈՎ.—Կուսլուսավորության խնդիրները ու սիստեմը սոցիալիստական ծավալուն հարձակման շրջանում: (Пропагандист № 22, стр. 9. 3

2. Վ. ԿԻՄՈՒՇԵՎ.—Աշխատանքի լենինյան մեթոդների պրոպագանդի մասին: Ком. Рев. № 5—6 стр. 71. 15

3. ՉԻՐՊԱԿՈՎ.—Թեորիայի և պրակտիկայի միասնությունը կուսլուսավորության մեջ: Пропагандист № 7, стр. 46. 34

4. Վ. ՊՈԼՈՆՍԿԻ.—Թեորիայի և պրակտիկայի շաղկապումը դեկավարելու ձևերի ու մեթոդների մասին Пропагандист № 22, стр. 16:

5. ՎՈԿԱՐՈՎ.—«Տեխնիկային տիրապետելու» լոզունգը և կուս. դպրոցների խնդիրները: Пропагандист № 9—10 ст. 29 43

6. ՄԵՆՋԵՆԿՈ.—Պրոպագանդիստներին դեկավարելու ձևերի մասին: Пропагандист, № 3—4, ст. 22 48

7. ՑԵԼԻՆՍԿԻ.—Բանվոր պրոպագանդիստներին դեկավարելու մասին: Пропагандист № 3—4, ст. 27 55

2. ԿՈՒՍ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

1. Ռ. ՋԵՆԻՍ.—Պրոպագանդիստների մեթոդական դեկավարման մեթոդների մասին: Пропагандист, № 26, ст. 25 60

2. Պ. ՄԻՆՋԵՆԿՈ.—Լաբորատոր մեթոդը և նրա կիրառումը կուսլուսավորության ցանցում: Пропагандист № 5, ст. 52 69

3. ԶԱԽ. ԲԱՐԱՍ.—Պրոպագանդիստների վերապատրաստման մեթոդիկայի դասընթացը Пропагандист, № 25, ст. 29. 75

4. ԱԼԵԿՍԱՆԴՐՈՎ.—Ինքնուրույն աշխատանքի ունակությունը կուս. դաստիարակչական աշխատանքի սիստեմում: Пропагандист № 25, ст. 29. 81

3. ՊԱՅՔԱՐ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՀԱՄԱՐ

1. Գ. ԳԱԿ.—Կուսլուսավորության արտադրական խնդիրների և տեխնիկական ուսումնասիրության հետ շաղկապելու մասին Ком. рев. № 5—6, ст. 44 91

2. ԶԻԳԱՆԿՈՎ.—«Տեխնիկային տիրապետելու» լոզունգը և կուլտպրոպ աշխատանքի խնդիրները ձեռնարկություններում Ком. рев. № 5—6, ст. 40

4. ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

6. Վ. ՖՈՄԻՆԱ.—Միության կուսդպրոց: Проп. № 5, ст. 57
2. ՆԻԿԻՏԻՆ.—Բանվոր պրոպագանդիստների պրոպ. սեմինարի աշխատանքի փորձից: Проп. № 2, ст. 39
3. ՑԵ. ՏԱՄԱՐԿԻՆ.—Կուս. կաբինետների աշխատանքի փորձը: Ком. рев. № 4, ст. 38

5. ԾՐԱԳՐԵՐ ՅԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

1. Կուսակցության պայքարը յերկու ֆրոնտի վրա ներկա ետապում (մեթոդ. մշակում): Проп. № 3—4, ст. 76
2. Կուլտուրական շինարարության հիմնական պրոբլեմները (մեթոդ. մշակում) Проп. № 15, ст. 41
3. Տեխնիկական պրոպագանդայի խնդիրները, Համ. կոմկուսի ԿԿ-ի 1931 թ. ոգոստոսի 5-ի վորոշման կապակցությամբ (մեթոդ. մշակում): Проп. № 25, ст. 37
4. Մեխանատրակտորային կայանները և պայմանագրային կամպանիայի նշանակությունը (մեթոդ. մշակում): Проп. № 6, ст. 51
5. Հակիրճ բացատրական շրջանային կոմ. ԲՈՒՀ-երի և կուսխորհրդային դպրոցների տեխնիկայի ծրագրի շուրջը (ծրագիր): Пропагандист, № 23, ст. 43.

ՀՀ Ազգային գրադարան
NL0188987

ԳԻՆԸ 90 ԿՈՊ. (5³/₄ մ.)

СБОРНИК ДЛЯ ПРОПОГАНДИСТОВ

Выпус I

Госиздат ССР Армении
Эривань—1932